

11680

Մ. ՈՎՍՅԱՆԻԿՈՎ, Բ. ԼԵՎԻՏԱՆ,  
Ս. ՈՒՇԱԿՈՎ, Ա. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՍԱԳԻՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

I Մ Ա Ս

3(075)

Σ - 36

ՊԵՏՅՐԱՏ — ՈՒՍՍԱՆԿՅՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

25 SEP 20

Բնագիրը բաշխարկած է ՌՍԽՖՆՀ Լուսժողովրդատի կոլեգիայի կողմից

1912

3(075)

հ-36

Մ. ՈՎՍԵՆՆԻԿՈՎ, Բ. ԼԵՎԻՏԱՆ  
Ս. ՈՒՇԱԿՈՎ, Ա. ԱԼԵԿՍԱՆԳՐՈՎ

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐԻ ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

I մաս

ՈՒՍՄԱՆ III ՏԱՐԻ



ՇՆԾ  
ՁԵ

18720

ՊԵՏԶՐԱՏ—ՈՒՍՄԱՆԿԶՐԱՏԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ ★ 1 9 3 3

ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Հասարակագիտության այս դասագիրքն ընդգրկում է տարրական և միջնակարգ դպրոցների ուսման 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ տարիների միասնական դասընթացը:

Դասագիրքը բաղկացած է չորս մասից, համաձայն ուսման չորս տարիների, վորոնց համար նախատեսված է այս գիրքը: Դասագրքի բովանդակությունը լիովին համապատասխանում է ՌՍՖՍՀ Հանրապետության Լուստոգիտման 1933—1934 թ. թ. հրատարակած ծրագրերին:

Դասագրքի առաջին մասն (ուսման 3-րդ տարի) ընդգրկում է Ռուսաստանի հեղափոխական շարժումների հիմնական շրջանները, բանվոր դասակարգի հաղթանակը Հոկտեմբերին, քաղաքացիական պատերազմը, բոլշևիկյան կուսակցության դերը նրա առաջնորդների գլխավորությամբ, վորը նախապատրաստեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն ու կազմակերպեց նրա պաշտպանությունը:

Յերկրորդ մասն (ուսման 4-րդ տարի) ամփոփում է սրբուհե-տարական դիկտատուրայի ելույթները, ծանոթացնում է խորհրդային շինարարության հիմունքներին, ցույց է տալիս սոցիալիստական հասարակության կառուցման այն նվաճումները, վոր ձեռք են բերել մեր յերկրի բանվորներն ու դուրդացիները՝ լենինյան կոմկուսակցության ղեկավարությամբ և նրա առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ: Յերրորդ մասը (ուսման 5-րդ տարի) ծանոթացնում է աշակերտներին բանվոր դասակարգի մեծ ուսուցիչներին և առաջնորդներին—Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի կյանքին, դործունեյությունն ու պայքարին և տարրական պատկերացում տալիս նրանց ուսմունքի հիմունքների մասին:

Չորրորդ մասն (ուսման 6-րդ տարի) ավելի խորն է մշակում մարքսիզմ-լենինիզմի հիմնական հարցերը, քան նախորդ տարիներում:

Պատճառագիր՝ Ս. Դավթյան, Քարգմ. Հ. Քուրչյան, Տեխ. խմբագիր՝ Գ. Ջենյան. Սրբագրիչ՝ Ա. Յերիցյան. Հրատարակ. № 2743. Գլավլիտ 8305(բ) Պատվեր 2073. Տիրաժ 30000. Հանձնված է արտադրության 3 հոկտեմբերի 1933. Ստորագրված է 3 հոկտեմբերի 1933:



38198.62

II, III ՅԵՎ IV ՄԱՍԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ  
ԳԼՈՒԽՆԵՐԻ

II ՍԱՍ

- I Խաչնուրդներ.
- II ԽՍՀՄ-ն բոլոր ազգութիւնների աշխատավորութեան յեղբայրական միութիւն.
- III Մենք սոցիալիզմ ենք կառուցում.
- IV Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը.
- V Մեր նվաճումները կուլտուրական ճակատում.
- VI Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները.
- VII Օտար աշխարհ.

III ՄԱՍ

- I Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Ենգելսը.
- II Վլադիմիր Իլիչ Ելենինը.
- III Յոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին.

IV ՄԱՍ

- I Կապիտալիստական աշխարհ.
- II Իմպերիալիզմը կապիտալիզմի վերջին շրջանն է.
- III Կապիտալիստական սխտեմի ընդհանուր ճղնաժամն ու համաշխարհային տնտեսական ճղնաժամը.
- IV Սոցիալիստական աշխատանքի աշխարհը.
- V Մենք և նրանք.
- VI Ինչ է կոմունիզմը.
- VII Ինչ է սոցիալիզմը.
- VIII Պայքար անդասակարգ սոցիալիստական հասարակութեան համար.
- IX Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքը պետութեան մասին.
- X Բուրժուական պետութիւն.
- XI Պրոլետարական պետութիւն.

XII Պրոլետարիատի դիկտատուրայի բարձրագույն սկզբունքներն են՝ պահպանել պրոլետարիատի և դյուղացիութեան դաշինքը.

XIII Խորհուրդները պրոլետարական պետութեան ձև են.

XIV Պրոլետարական դիկտատուրայի յերկրի ազգային քաղաքականութիւնը.

XV Պրոլետարական դիկտատուրայի խնդիրները յերկրորդ հնգամյակում.

XVI Մարքսի-Ենգելսի-Լենինի և Ստալինի ուսմունքը կուսակցութեան մասին.

XVII Պայքար յերկու ճակատում.

XVIII Կոմունիստական Ինտերնացիոնալ.

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Հասարակագիտութեան դասադիրք կազմելու դժվարութեաների և այն հենց ուսուցման ընթացքում ստուգելու անհրաժեշտութեան առնչութեամբ այս դասադիրքը ներկա ուսումնական տարվա համար Լուսժողովոմատի կողմից թույլատրվում է այն հաշվով, վաղ պրակտիկ աշխատանքների ընթացքում ուղտակար ճանաչված հավելումներն ու հարկ յեղած փոփոխութեանները մտցնելուց հետո հետադայում վերհրատարակի վորպես կայուն դասադիրք:

Հիմնականում թարգմանված լինելով ուսանողներին հրատարակութեանից, դասադիրքը տեղայնացնելու իմաստով մտցված են այնտեղ մասամբ առանձին գլուխներ, մասամբ ել հակիրճ ծանոթութեաններ Անդրկովկասի և Հայաստանի վերաբերյալ:

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՆՔ ՄԵՐ ԱՆՑՅԱԼԸ

Մենք ապրում ենք Խորհուրդների յերկրում: Մեր յերկրում իշխանութեանը պատկանում է բանվորներին: Մեր յերկրի բանվորները, կոլտնտեսականները և բոլոր աշխատավորները վերակաուցում են կյանքը նոր ձևով: Նրանք այնպիսի կյանք են կառուցում, վորտեղ չեն լինելու հարուստներ ու աղքատներ, վորտեղ չեն լինելու շահագործողներ ու շահագործվողներ:

Մյուս յերկրներում իշխանութեանը պատկանում է կապիտալիստներին: Այնտեղ կապիտալիստներն ու կալվածատերերը դաժան ստրկութեան մեջ են պահում բանվորներին ու գյուղացիներին:

Առաջ այդպես էր նաև մեզ մոտ: Կար ժամանակ, յերբ մեր հայրերի ու մայրերի մեջքերին շաչում էյին կալվածատերերի մտրակներն ու ցարակական դահիճների խարազանները: Կար ժամանակ, յերբ մեր հայրերն ու մայրերը հողին դուրս դալով աշխատում էյին կապիտալիստների ու կալվածատերերի համար:

Մեր հայրերն ու մայրերը յերկար ու համառ պայքար են մղել իրենց կեղեքողների—ցարի, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ: Յեւ 1917 թվին հաղթեցին:

Աշխատավորութեան ազատագրութեան համար պայքարող հազարավոր մարտիկներ զոհվել են ցարական կախաղանների վրա, լավագույն կյանքի համար պայքարող հազարավոր մարտիկներ զնդակահարվել են ցարական դահիճների կողմից: Բանվորներից լավագույնները, զրնդացնելով շղթաները, Սիրիի ճանապարհներով գնում էյին դեպի տաժանակիր աշխատանք ու աքսոր: Հազարավոր բանվորներ ու գյուղացիներ մահանում էյին ցարական բանտերում:

Վորպեսզի իմանանք մեր հայրերի ու մայրերի մեծ պայքարը, պետք է ուսումնասիրել—

Թե ի՞նչպես էյին ապրում և պայքարում բանվորներն ու գյուղացիները ցարական Ռուսաստանում:

Թե ի՞նչպես նրանք հաղթեցին իրենց կեղեքողներին:

Բանվորներն ու գյուղացիները հաղթեցին իրենց կեղեքողներին

չնորհիվ այն բանի, վոր նրանց պայքարը զեկաւարում եր Կոմունիստական կուսակցութիւնը՝ իր առաջնորդ Լենինի գլխավորութեամբ:

Բոլոր յերկրներում Կոմունիստական կուսակցութիւններն աշխատավորութեանը տանում են դեպի ազատագրում՝ չահագործողներին լծից և ստրկութիւնից:

Բոլոր յերկրների բուրժուազիան ատում ե կոմունիստներին: Իսկ ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիներն ալեւի ու ալեւի յեն համախմբվում Կոմունիստական կուսակցութիւններին դրոշի տակ:

Անցյալն ուսումնասիրելով մենք կիմանանք—

Թե բոլշևիկներն աշխատավորութեանն ի՞նչպես տարան դեպի հաղթանակ՝ ցարի, կալվածատերերի ու կապիտալիստներին վրա, թե ինչպէ՞ս ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները կանգնում են Լենինի դրոշի տակ:

Կռիւլը դեռ չի վերջացել:

Բոլոր յերկրներին կապիտալիստները նոր պատերազմ են պարտատում մեր դեմ, վորպէսզի խանգարեն մեր շինարարութիւնը:

Կապիտալիստական յերկրների աշխատավորները դեռ հեծում են կապիտալիստներին ու կալվածատերերին լծի տակ: Նրանք հերոսական պայքար են մղում կապիտալիստների իշխանութիւնը տապալելու համար:

Մեր թշնամիներն աշխատում են խանգարել մեր յերկրում կատարվող մեծ շինարարութիւնը: Վնասարարներն ու կուլակները խցկվում են մեր Փարբիկներն ու գործարանները, ելեկտրոկայանները, հանքահորերը, կոլտնտեսութիւններն ու խորհրտեսութիւնները և փորձում են քայքայել մեր աշխատանքը:

Յերբ մենք լավ իմանանք, թե մեր հայրերն ու մայրերն ի՞նչպես են պայքարել քշնամիների դեմ և ի՞նչպես հաղթել նրանց, այն ժամանակ մենք կկարողանանք—

Ավելի լավ հաղթել մեր քշնամիներին,

Ավելի լավ կառուցել նոր կյանքը մեր յերկրում,—այնպես, ինչպես սովորեցրել ե Լենինը,

Կդառնանք լավագույն մարտիկներ՝ ամբողջ աշխարհում բանվորների ու գյուղացիների հաղթանակի համար:

## I. ԱՅԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

### § 1. ՃՈՐՏՈՒԹՅՈՒՆ

Մինչև 1861 թիվը Ռուսաստանում ճորտատիրութիւն գոյութիւն ուներ: Ամբողջ հողը, հսկայական հարստութիւնները և յերկրի իշխանութիւնը պատկանում էին ցարին և կալվածատերերին: Բնակչութեան մեծամասնութիւնը ճորտ գյուղացիներ էին և ճորտ արհեստավորներ:

Կալվածատերերը տիրում էին գյուղացիութեանն իրենց սեփականութեան նման:

Գյուղացիները հողի փոքրիկ շերտեր ունեին, վորոնք պատկանում էին կալվածատերերին: Նրանք ինչքան ել վատ ապրեցին, չեցին կարող ուրիշ տեղ գնալ: Գյուղացին պետք ե իր ամբողջ ընտանիքով տարին բոլոր աշխատեր կալվածատիրոջ համար.—հերկեր նրա հողը, հնձեր նրա մարգագետինը, պահեր նրա անասունները: Իրենց աշխատանքի համար գյուղացիները վոչ մի վարձատրութիւն չեցին ստանում: Կալվածատեր—աղայի համար կտտաբված այդ աշխատանքը կոչվում եր կոռ:

Աղայի համար կատարած աշխատանքը ծանր եր գյուղացիների համար: Վորոչ տեղերում կալվածատիրոջ համար աշխատում էին չարաթական 3 ուր, վորոչ տեղերում ել 6 և նույնիսկ 7 ուր: Իսկ իր տնտեսութեան համար ճորտ գյուղացին կարող եր աշխատել գիշերները, կամ տոն օրերին:

Այն կալվածատերերը, վորոնց հողն արգավանդ չեր և վատ բերք եր տալիս, իրենց գյուղացիներին արձակում էին աշխատանք դառնելու: Գյուղացիները գնում էին աշխատելու սեւահող շրջանների կալվածատերերի մոտ կամ քաղաք: Այդպիսի գյուղացիները պարտավոր էին կալվածատիրոջ բահրա՞) վճարել:

\*) Բահրա վճարել, գա նշանակում ե կալվածատիրոջ տնտեսութեան մեջ աշխատելու փոխարեն նրան դանազան մթերքներ ու փող վճարել:

Բահրան այնքան մեծ էր, վոր կարվածատերերը հաճախ վերցնում էին գյուղացու ամբողջ վաստակը: Հաճախ էլ այդ վաստակը չէր բավարարում բահրան վճարելու համար և կարվածատերը աշխատանք փնտռելու համար գնացած գյուղացու բակից տանում էր վերջին ձին:

Ճորտ գյուղացիները ծառայում էին նաև կարվածատերերի տներում ու ազարակներում: Այդպիսի ճորտերը կոչվում էին սերունական: Տերունական ճորտերը հողաբաժին չէին ստանում: Նրանք չէին ստանում նաև վոչ մի վարձատրություն իրենց աշխատանքի համար: Կարվածատերը նրանց միայն կերակրում էր, ե՛ն էլ կիսաբաղջ:



Նկ. 1 Կարվածատիրուհի Սալտիշիյայի գազանությունը

Տերունականներն աշխատում էին վորպես սպասավոր, խոհարար, ձիապան: Տերունականների մեջ կային նաև արհեստավորներ—գարբիններ, հյուաններ, թամբազործներ: Կարվածատիրական ազարակում համարյա ամենայն ինչ սեփական արտադրություն արդյունք էր, այսինքն վոչ թե գնված, այլ ճորտ արհեստավորների կողմից պատրաստված: Ավելի հարուստ կարվածատերերը մի քանի հարյուր տերունական ճորտ էին պահում: 3—5 հոգուց բաղկացած կարվածատիրական ընտանիքին սպասարկում էին հաճախ 20—30 ծառաներ:

Ճորտ գյուղացիները կարվածատերերի սեփականություն էին այնպես, ինչպես սովորական իրերը: Կարվածատերերն ինչպես ցանկանում, այնպես էլ տնորինում էին իրենց գյուղացիների բախար: Այն ժամանակվա որենքներով կարվածատերն իրույունը ուներ վաճառելու իր գյուղացիներին: Ճորտ գյուղացիներին վաճառում էին ինչպես սպրանք: Գյուղացիներին ծախում էին ամբողջ գյուղերով, ընտանիքներով կամ էլ անհատ—անհատ: Գյուղացիներին վաճառելիս կարվածատերը հաճախ բաժանում էր ընտանիքները: Հորը ծախում էր, իսկ ընտանիքին իր մոտ պահում: Մի ընտանիքի յերեխաներին վաճառում էին տարբեր կարվածատերերի, ամբողջ կյանքում բաժանելով նրանց իրենց ծնողներից: Մարդկանց գները բարձր չէին: Գեպքեր էին լինում, յերը կարվածատերը մի ցեղական շան փոխարեն տալիս էր մի քանի ճորտական ընտանիք ցերեմն էլ մի ամբողջ գյուղ:

Ինքը կարվածատերն էր դատում ու պատժում ճորտերին: Սմենափոքը հանցանքի համար գյուղացիներին մերձ ի մահ ծեծում էին ճիպոտներով և մտրակով: Հաճախ ծեծելով սպանում էին:

Մի կարվածատիրուհի—Սալտիշիյան—սեփական ձեռքերով սպանել է իր ճորտերից 75 հոգու: Յեթե նրա գյուղացիներից մեկն ու մեկը հանցանք գործեր նրա առաջ, նա փայտով խփում էր նրանց գլխին, ստիպում էր մանրացրած ապակի ուտել, աղած ձուկ էր սւսացնում և որերով փակում տաք բաղնիքում՝ առանց մի կաթիլ ջրի, և այլն:

Գյուղացիներն իրավունք չունեին բողոքելու կարվածատիրոջ դաժան վերաբերմունքի դեմ: Յեթե պատահաբար գյուղացիների բողոքը հասներ իշխանություններին, ապա հենց նրա համար, վոր համարձակվել են բողոք հայտնել աղայի դեմ, պատժվում էին իրենք՝ բողոքողները:

Կարվածատերն իրավունք ուներ վոչ միայն դադանորեն հուստելու ճորտերին, այլև նրանց բանտ նստեցնել, աքսորել տաժանակիր աշխատանքի:

Կարվածատերերն անհնազանդներին պատժելու մի այլ միջոց էլ ունեին—ճորտերին զինվոր էին տալիս: Իսկ զինվորական ծառայությունն այն ժամանակ տևում էր 25 տարի: Բանակում խրոտագույն կարգապահություն կար, պատժում էին անորինակ դաժանություններով, ծեծում էին ճիպոտներով, փայտերով, շամփուր-

## Ճորճեր վաճառելու հայտարարություն այն ժամանակվա թերթերում

1. վաճառվում են լավ վարք ունեցող տերուճական արհեստավորներ.—յերկու դերձակ, կոշկակար, ժամագործ, հացբուխ, կառք շինող, անիվ շինող, փորագրիչ, վոսկերիչ և յերկու կառասպան, վորոնց կարելի յե տեսնել և գնի մասին իմանալ 4-րդ թաղամասի 3-րդ մասում, № 51, կալվածատիրոջ մոտ: Նույն տեղում վաճառվում են վաղող ձի, յերկու մատակ և հիսուն վորսորդական շներ:

2. վաճառվում է տեսնով սպասուհու աշխատանք կատարելու համար ընդունակ 20 տարեկան գեղեցիկ աղջիկ և հեծնելու համար վարժեցրած մի մատակ ձի:

ներով, քչում էյին շարքի միջով): Չինվոր ուղարկված գյուղացիներին շատ քչերն էյին տուն գալիս: Իսկ նա, ով 25 տարվա ասնջալից ծառայութունից հետո կենդանի յեր մնում, հայրենի գյուղ եր վերադառնում վորպես հիվանդ, աւժասպառ ծերունի, վորն անընդունակ եր վորևե աշխատանքի:

### § 2. Յեկեղեցիներ—ՃՈՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Միայն կալվածատերերը չէյին, վոր ճորտեր ունեյին: Վանքերն ու յեկեղեցիները նույնպես ճորտ գյուղացիներ ունեյին: Տերտերներն ու վանականները ցարի ու կալվածատերերի հավատարիմ ծառաներն էյին: Նրանք ոգնում էյին հնազանդության մեջ պահելու ճորտ գյուղացիներին: Տերտերներն ամեն բոպե «աստծու պատժով» սպանում էյին այն գյուղացիներին, վորոնք բավարար հնազանդությամբ չէյին աշխատում իրենց տերերի համար: Յարն ու կալվածատերերն աշխատում էյին վորքան կարելի յե ավելի շատ նոր վանքեր ու յեկեղեցիներ կառուցել: Նրանք առատորեն պարգևատրում էյին իրենց հավատարիմ ծառաներին—տերտերներին ու վանականներին: Կալվածատերերն ահազին հողամասեր էյին հատկացնում յեկեղեցիներին: Այդ հողերի վրա աշխատում էյին ճորտերը, իսկ բերքը դնում եր տերտերներին:

1) Շարքի միջով քչեր—նշասակում է անցկացնել գինվորների յերկու շարքի միջով վորոնք փայտով կամ շամփուրներով ձեծում էյին պատժվածին:

Յարը վանքերին իրավունք եր տալիս սեփական ճորտ գյուղացիներ ունենալու: Վանքերը հազարավոր հեկտար հող և տասնյակ հազարավոր ճորտ գյուղացիներ ունեյին: Որինակ՝ Տրոյից-կո-Սերգեյեվի վանքը (Մոսկվայի մարզում) 106 հազար ճորտ գյուղացի ունեւ: Վանքապատկան ճորտ գյուղացիների դրութունն ել նույնքան ծանր եր, վորքան կալվածատիրական ճորտերինը: Նրանց նույնպես վայրագորեն շահագործում ու կեղեքում էյին:

Այդպես եր աշխատավորության դրութունը ճորտատիրության ժամանակ:

### § 3. ԿՈՌՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ահա թե գրող Սալտիկով—Շչեգրինն ինչ է պատմում կորության ժամանակների մասին.—

Համարյա հենց ցանկապատի մոտ մոտավորապես 40 հնձվորներ հնձում են մի բավականին մեծ մարգագետին:

— Մաքուր հնձեցե՛ք: Մաքուր: Վո՛չ մի վրիպում չլինի: Սմեն մի՛ սխալի համար մեջքին կհասցնեմ—բղավում է կալվածատերը հնձվորներին հետևից:

Նա նստել է կարճ ծխամորճը բերանին, ծխամորճից ծուխը ներս է քաշում և աչքերով նայում է հեռուն: Ահա Միտրոչկան կարծես ընդհատեց աշխատանքը, իսկ Լուկաչկան հենց խաբելու համար է շարժում գերանդին:

Տերը վեր է թռչում ու վազում:

Առաջին հանցանքի համար հինգ անգամ հարվածում է մտրակով, յերկրորդի համար՝ տասն անգամ, յերրորդի համար՝ տասներհինգ, իսկ չորրորդի համար՝ մի վրդովվիլը, հաշիվ չկա:

Լավում են ճիչեր և մի բոպեյից հետո ամեն ինչ խաղաղում է: Տերը նորից նստել է իր տեղում, ծխում է ու հետևում աշխատանքին:

«Լավ մտրակե»—մտածում է կալվածատերը, դիտելով կաշվե ծանր մտրակի ծայրին փաթաթած յերկաթալարը:

Այդպիսի մտրակը վոչ միայն կաշին եր պոկում, այլև վորոնները կտրատում: Յեվ այդ մտրակով կալվածատերն աշխատեցնում եր ճորտերին այնպես, ինչպես ձիերին են մտրակում, վորպեսզի նրանք ավելի արագ վազեն:



§ 4. ԴՍՈՒՆ ՎԻՃԱԿԸ

Գավրիլովնա տատիկն այժմ սպրում է կոլտնտեսութունում: Սակայն նա շատ լավ հիշում է, թե ինքը և իրա ծնողներն ինչպես էին ապրում յերբ նրանք ճորտ գյուղացիներ էին:

Գավրիլովնան սիրում է յերեխաներին պատմել հին որերի մասին: Ահա հիմա էլ սղիտներն իր հավաքվել են Գավրիլովնայի շուրջը՝ լսելու համար նրա պատմածը ճորտատիրության ժամանակվա գյուղացիների դրության մասին:

— Յես փոքր եյի, յերբ ինձ մորս հետ միասին ծախեցին, — հանգիստ կերպով սկսում է պատմել Գավրիլովնան:

— Ի՞նչպես թե ծախեցին, — չհամբերեց Նադիան:

— Իսկ դու լիք ու մի կտրի խոսքս: Մենք ճորտեր էյինք Մակարով տերերի մոտ: Հայրս կառապան էր, իսկ մայրս հավերին էր խնամում: Ինքը մեր ազա Մակարովը շատ էր խմում: Մեկ էլ տեսար, հարբում է ու հրացանից կրակում: Մի անգամ բախում կրակելով նա մերձ ի մահ վերավորեց մի յերեխայի—խոհարարի Միչկային:

Մի անգամ էլ մեր աղան դնաց Գրիբունինս գյուղը: Ենտեղի հորթերը նրան դուր յեկան, ցանկացավ գնել: Իսկ Գրիբունինս աղային այն ժամանակ թռչունների խնամող էր պետք: Եսպես էլ նա մեզ փոխանակեց: Հայրս ու յեղբայրներս մնացին Մակարով աղայի մոտ, իսկ մորս ու ինձ տարան Գրիբունինս:

Մայրս ծնկաչոք աղաչում էր, վոր իրեն յես տանեն իր մուսնու ու զավակների մոտ, — բայց վճիխնչ չողնեց...

Գրիբունինսն հենց սկզբից մեզ դուր չեկավ, վատ էր ու ձանձրալի: Առաջ մայրս ուրախ էր: Իսկ ետեղ հազիվ էր վոտքի վրա կանգնում, լղարել, վոսկոր էր դարձել... Յերբեմն ինձ պինդ զրկում էր ու դողում...

Շուտով գժբախտություն պատահեց: Մորս անուշադրության պատճառով էր, թե՞ առանց մորս մեղքի, ճուտերի մեջ հիվանդություն ընկավ, մեկը մյուսի հետևից սատկում էին... Գործակատարը դալիս էր, հայհոյում ու ձեռքերը թափահարում:

— Թռչուններին, — ասում էր, — ջգրու սատկացնում ես: Զգույշ յեղիր, դու դեռ մեր ախոռի համը չես առել:

Ախոռի մասին ամենասուկալի բաներ էին պատմում: Գրիբունինսյում ամեն կողմից ցանկապատով փակված մի բակ կար: Աղայի համար բարձր տեղում բազկաթու կար դրված: Նա նրս-

տում էր այնտեղ և հրեշային դատաստան անում: Պատահում էր, վոր մենք յերեխաներս խաղում էյինք ախոռի մոտ և ցանկապատի մյուս կողմից լսում էյինք լաց ու աղաղակ և աղայի սուր, ծակող ձայնը:



Նկ. 2. ճորտերի վաճառք

— Նո՛ւ, մե՛կ էլ, այլեւացրո՛ւ, մե՛կ էլ, մի՛ խնայի:

Գործակատարի խոսքերից հետո յես դիչերները չեյի ջնում... Միշտ մտածում էյի, մի՞ թե մորս էլ են սոսկալի բակը կտանեն: Իսկ ճուտերը, թարսի պես, սատկում ու սատկում էյին:

Մի անգամ էլ գործակատարը յեկավ ու ասաց.—

— Աղան քեզ պատասխանի յե կանչում: Ինչո՞ւ բոլոր թռչուններին սատկացրիր:

Իսկ ինքը ծիծաղում է, կարծես թե ուրախանում է:

Յես մորս հետևից վազեցի, լաց եմ լինում ու բղավում: Իսկ յերբ գործակատարը նրան բակը մացրեց ու դռնակը փակեց, յես փախա:

Յես փախա, վորքան ուժ ունեյի, վորտեղ աչքս կարում էր, փախա, վոր հեռու լինեմ, վոր չլսեմ մորս ձայնը ցանկապատի յետևից...

Գիչերն արդեն մի կերպ ինձ տուն գցեցի: Մայրս անշարժ, պառկած էր անկողնում: Յես մի անկյունում հատակի վրա պառկեցի ու ջնեցի:

Առավոտյան մայրս չկար ու չկար... Գործակատարն յեկավ ու հարցրեց թե վո՞րտեղ ե մայրս, իսկ յես չեյի իմանում:

Զիավորներ ուղարկեցին մորս փնտռելու: Կանայք դալիս եյին, ախ քաշում... «Իսխիել ե, վոնց վոր յերևում ե, բայց վա՛խ, կրռնեն, են ժամանակ վայ նրա որին, խեղճը... փախստեհաններին ազան չի խնայում»:

Իսկ յես լաց ել չեմ լինում, վոնց վոր քարացած նստել եմ մի անկյունում: Ամբողջ որը վոչինչ չկերա:

Մորս չգտան: Հովիվները խոսում եյին, վոր նրան տեսել են դեռափին, ինչպես յերևում ե, խեղդվել եր: Եղպես ել անհետ կորավ մայրս: Հորս ել յես այլևս չտեսա: Աղան շուտով նրան գինվոր տվեց: Նա քսան տարի դինվոր մնաց և սպանվեց պատերազմում:

Մորս կորուստից մի ամիս անցավ: Մեկ ել աղայի յեղբոր աղջիկը փայտե վանդակի մեջ դրած մի մեծ շուն ուղարկեց: Վոչ թե շուն, այլ հիանալի մի բան: Անունը Պլուտ եր:

Տերունական ճորտերն ինձ ասում եյին.—

— Գեղ ծախել են, փոխանակել են շան հետ, շուտով քեզ կտանեն:

Յեմ ճիշտ դուրս յեկավ: Յես դուր եյի յեկել աղայի յեղբոր աղջկան՝ յերբ նա մեզ մոտ հյուր եր յեկել: Պլուտին բերող մարդն ինձ վերցրեց ու տարավ նոր տիրուհուս մոտ:

Այո, դառն եր մեր կյանքը: Մեզ վաճառում եյին: Փոխանակում եյին կենդանիներին հետ: Կալվածատերերը ճորտերին որ ու արե չեյին տալիս—վերջացրեց Գավրիլովնան իր պատմությունը:

§ 5. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱՅՈՒՄ

Կալվածատերերն իրենց յեկամուտն ավելացնելու համար Փարբիկներ եյին կառուցում: Այդ Փարբիկները նման չեյին ներկայիս Փարբիկներին: Ճորտատիրական Փարբիկում մեքենա համարյա չկար: Աշխատանքը մեծ մասամբ ձեռքով եր կատարվում: Փարբիկներում հացից սպիրտ եյին պատրաստում, բրդից մահուղ գործում և այլն: Այդ Փարբիկներում նույն ճորտ գյուղացիներն եյին աշխատում: Կոռի փոխարեն կալվածատերերը նրանց ուղարկում եյին իրենց գործարանները:

Աշխատանքը ճորտատիրական Փարբիկներում շատ ծանր եր: Ճորտերն որական 16—18 ժամ աշխատում եյին առանց հանգստի:

Ամենափոքրիկ սխալի համար նրանց անխնա ծեծում եյին: Մշխատանքի պայմանները շատ ծանր եյին: Դադարահաները միմյանց շատ մոտ եյին դրված: Փոքրիկ պատուհաններից շատ քիչ լույս եր ներս բնկնում: Չորս կողմը կեղտոտություն: Խեղդուկ ու վատառողջ ող:

Իրենց կողը Փարբիկում կատարող ճորտ գյուղացիները համարյա ժամանակ չունեյին իրենց տնտեսության մեջ աշխատելու համար: Նրանք քայքայվում ու մշտական բանվորներ եյին դառնում:

Յերբ ճորտ-բանվորի դրությունն պնտանելի յեր դառնում, նա փախչում եր: Սակայն փախստականին սովորաբար գտնում եյին և նորից Փարբիկ ուղարկում: Այնտեղ մյուսներին սարսափեցնելու համար նրան խստորեն պատժում եյին: Փախչողին ծեծելով կիսմեռ եյին դարձնում, հետո ել բանտարկում:

Կալվածատերերը իրենց կողը Փարբիկում կատարող ճորտերին հաճախ Փարբիկի հետ միասին ծախում եյին վաճառականներին: Այն ժամանակ այդ ճորտերը պարտավոր եյին մինչև իրենց մահն աշխատել վաճառականի դնած Փարբիկում:

Ճորտերն աշխատում եյին նաև հանքերում և հանք ու մետաղ վերամշակող գործարաններում: Հատկապես շատ գործարաններ կային Ուրալում: Այդ գործարանների մեծ մասը պատկանում եր վոչ թե առանձին կալվածատերերի կամ վաճառականների, այլ պետությանը: Ուրալի գործարաններում թնդանոթ եյին ձուլում, նրանց համար արկեր ու ուղմբեր պատրաստում:

Յերկաթի և պղնձի հանքերը հաճախ գտնում եյին սակավաբնակ, յերբեմն ել միանգամայն ամայի վայրերում: Ենտեղ ել կառուցվում եյին գործարանները: Իսկ գյուղացիներին հանքերում և գործարաններում աշխատելու համար հարյուրավոր վերստերով հեռու եյին քշում իրենց բնակության վայրերից: Գործարանային գյուղացիները տարվա մի մասն աշխատում եյին գյուղում, մյուս մասը՝ գործարանում: Այդ ճորտերն ավելի վատ եյին աղբում, քան մնացած բոլորը:

§ 6. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԸՆՇՎԱՄ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ ԵՐ

Յարն ու կալվածատերերը չեյին բավականանում ողու գյուղացիներին կողոպտելով և ճնշելով: Նրանք հաճախ պատերազմ եյին անում ուրիշ ազգությունների հոերը դրավելու համար:

38198-12  
(18720)



Արյունահեղ պատերազմների միջոցով ստրկացվեցին թաթարները, բաշկիրները, չուվաշները, կարմիրները, մորզովանները, Սիրբերի ժողովուրդները, ուկրաինացիները, բելուուսները, լեհերը, Հյուսիսային Կովկասի լեռնայինները և բազմաթիվ այլ ժողովուրդներ:

Այդ բոլոր աղբուրթյունները յենթարկվել են անողոք կողոպուտի և ճնշման: Նվաճած վայրերում ցարական աստիճանավորները հողի վաճառք եյին հայտարարում: Կարվածատերերը չնչին գումարով, խաբեյությամբ, ողիով, մտրակով համիշտակում եյին կեղեքվող աղբուրթյունների լավագույն հողերը: Համիշտակած հողերը դառնում եյին կարվածատերերի սեփականությունը:

Նվաճված յերկրներում միայն ոուս վաճառականներն իրավունք ունեյին առևտուր անելու: Կեղեքված ժողովուրդներին արգելված եր առևտուր անել վոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում: Ռուս վաճառականները, վորոնք գնում եյին կարվածատերերի հետևից, գնում եյին նոր նվաճած վայրերը, արագորեն հարստանում եյին:

Կարվածատերերի ու վաճառականների հետ դեպի նվաճված հողերն եյին գնում նաև տերտերները: Նրանք հպատակեցված աղբուրթյուններին բռնությամբ ստիպում եյին ուղղափառ դավանանքն ընդունել: Ով վոր մկրտվելուց հրաժարվում եր, մտրակով ճեծում եյին: Նրանց գույքն ել բռնադրավում եյին, յերբմն ել վոչնչացնում:

Կեղեքվող աղբուրթյունների ապստամբությունները ճնշվում եյին ամենայն դաժանությամբ: Ճորտատերերը հաճախ մի աղբուրթյունը զրգոում եյին մյուսի դեմ: Այսպես, որինալ, 1755 թվին ոուս կարվածատերերի դեմ ապստամբած բաշկիրները փախան Կիրգիզիա: Նրանք ուզում եյին միանալ կիրգիզների հետ և միասին յեյնել ոուս ճորտատերերի դեմ: Սահայն ցարական կառավարությունը կիրգիզներին զրգոեց բաշկիրների դեմ: Կիրգիզները թալանեցին բաշկիրներին, խլեցին նրանց կանանցն ու յերեխաներին և բաշկիրներին գուրս քեցին կիրգիզիական տափաստաններից:

Այսպես, կարվածատերերը, վաճառականները և տերտերները հրով, սրով, խաչով, ողիով և խաբեյությամբ ստրկացնում եյին նորանոր ժողովուրդների: Ճորտատիրական Ռուսաստանը դարձավ ստրկացված ժողովուրդների բանտ:

## ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչպես եյին ապրում ճորտ գյուղացիները:
2. Ի՞նչ բան ե կոռ ու բահրա:
3. Կարվածատերն ինչպես եր անորինում իր ճորտերի բախառ:
4. Ի՞նչպես եյին շահագործվում ճորտ բանվորները:

## II. ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՊԱՅԲԱՐԸ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ԴԵՄ

### § 7. ՅԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ—ՃՈՐՏԱՏԵՐԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՐ

Յարն ինքը հարուստ կարվածատեր եր: Իրա համար ել ցարական իշխանությունը պաշտպանում եր կարվածատերերի շահերը:

Յարն ու կարվածատերերն աստիճանավորներ, սպաներ, զորք, վոստիկանություն, դատարան ու բանտ ունեյին: Կարվածատերն ինքն եր դատում իր գյուղացիներին, իսկ ցարական աստիճանավորները սեռք ե կատարեյին կարվածատիրոջ դատավճիռը:

Յարական բանակի սեռերը կարվածատեր-աղնվականներ եյին:

Յարին ծառայում եյին յեկեղեցին ու տերտերները: Տերտերները ցարական իշխանության հավատարիմ ծառաներն եյին: Նրանք ցարին ու կարվածատիրոջ ոգնում եյին ճնշելու գյուղացիներին: Յեկեղեցին ամեն կերպ պաշտպանում եր ճորտատիրական կարդերը: Տերտերներն ամեն որ համոզում եյին գյուղացիներին հլու-հնազանդ լինել ցարին ու կարվածատերին: Յեվ տերտերներ յայդ դավաճանական աշխատանքի համար վճարում եյին հենց իրենք՝ գյուղացիները: Տերտերները թալանում եյին գյուղացիներին ու հարստանում:

### § 8. ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարվածատերերն ավելի ու ավելի եյին ճնշում ճորտ գյուղացիներին: Յերը ճորտերի համար անհնար եր դառնում ապրել կարվածատիրոջ մոտ, նրանցից շատերը՝ ճնշումներից աղատվելու համար՝ վախչում եյին: Փախստական ճորտերը թափառում եյին անտառներում ու մեծ ճանուպարհների վրա, ապրելով ավազակությամբ ու թալանով: Ճորտերի վորոշ մասը փախչում եր դեպի Վոլգա, Դոն և Ուրալ: Այդ գյուղացիներին կոչում եյին կազակներ:

Փախչելու համար սահմանված և վոչ մի պատիժ չեր կարողանում տանջված գյուղացիներին հետ պահել փախուստից :

Մեկ այստեղ, մեկ այնտեղ գյուղացիների մեջ խռովություններ ելին ծագում : Ճորտերն ապստամբում էին կալվածատերերի դեմ : Համբրությունից դուրս յեկած գյուղացիները հաճախ սպանում էին իրենց ճնշող կալվածատերերին :

Ահա թե ի՞նչ է պատմում այդպիսի ապստամբություններից մեկի մասին մի ծերունի գյուղացի—նախկին ճորտ : Այժմ նա կոտնտեսական է :

— Մի որ հրաման յեկավ ցարին զինվոր ուղարկելու : Ո՞ւմ ուղարկել զինվոր—դա կալվածատիրոջ կամքն էր :

Այն ժամանակ զինվորական ծառայությունը յերկար էր ուղտան : Շատ մարդ էր կորչում այդ ծառայության մեջ : Մեկն սպանվում էր, մյուսը հաշմանդամ դառնում : Զինվոր ուղարկելը հավասար էր գերեզման ուղարկելուն :

Յեվ ահա անգամ իր մոտն է կանչում իր կալվածի կառավարչին .

— Վո՞րին ուղարկել զինվոր :

Կառավարիչն ինձ տանել չեր կարողանում : Յես համարձակ ջահել եյի, ուղիղ խոսքն ամենքի ճակատին եյի խփում : Դրա համար ել նա ինձ ատում էր :

Յեվ ահա կառավարիչն ինձ ցույց տվեց .—

— Հարկավոր է,—ասում է,— նրանից սկսել :

Մեզ, բոլոր զինվորացուներին, քչեցին աղայի տան առաջ : Իսկ մեր հետևից լաց ու կոծով վազում էյին մեր հարազատները :

Ամենից առաջ ինձ կանչեցին աղայի առջև :

— Դու եղ ի՞նչ ճառեր ես թսում գյուղում,— սպառնական ձայնով ասաց ինձ աղան :

— Ինչպես ամբողջ ժողովուրդը,—պատասխանում եմ յես :

— Կասկոտել նրան,— ձգավեց աղան :

Հենց վոր սկսեցին ինձ կապոտել, մայրս ընկավ աղայի վրա քերը :

Աղաչում, պաղատում, արցունքի մեջ խեղդվում էր նա : Ամբողջ հարազատներս նրա հետ :

Իսկ աղան ե՛լ ավելի յեր կատաղում :

Տեսնում եմ, վոր նա մորս և բոլոր հարազատներիս, վորոնք նրա առաջ ծնկաչոք սողում էյին, անիծյալ մտրակով խփում է

գլուխներին, մեջքերին... Իսկ իմ մայրս լղարիկ էր, հիվանդոտ...

Չհամբրեցի, ամբողջ ուժերս լարելով կտրատեցի թոկերը և նետվեցի աղայի վրա... վրդովվել էր նաև ամբողջ ժողովուրդը : Քոնեցինք աղային, կապկպեցինք ու քաշ ավինք դեպի մոտ : Ենտեղ էլ նա իր վերջը գտավ...



Նկ. 3. Յարական ծառայության ուղարկելը

Իշխանությունը գորք ուղարկեց : Սկսվեց արյունալի հաշվեհարդարը...

Մենք թաղնվեցինք անտաններում : Գիշերները հարձակվում էինք աղաների ազարակների վրա : Զարդում, այրում էյինք ու նորից թաղնվում անտաններում :

Չորք ուղարկեցին մեզ բռնելու համար: Ինձ առաջնորդն եյին համարում: Իշխանութիւնը բարձր դին խոստացավ իմ դիւի համար: Յեն ստիպված եյի հեռավոր կողմեր փախչել:

Շատ, շատ տարիներ անցան: Արդեն ծերացած վերադարձաւ յայտեղ: Իսկ հիմա ահա նոր կյանք ենք կառուցում:

### § 9. ՌԱԶԻՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Սրանից ալեւի քան 250 տարի առաջ բռնկվեց կազակ Ստեպան Ռազինի բարձրացրած դյուղացիական ապստամբութիւնը ճորտատերերի դեմ:

Այդ ապստամբութիւնը բարձրացրին չքավոր կազակները, վորոնք մեծ մասամբ փախստական ճորտեր եյին: Իսկ դրան միացան Մերձվոլդյան<sup>1)</sup> շրջանի ճորտ դյուղացիները և նվաճված ժողովուրդները—բաշկիրները, թաթարները, չուվաշները, մորդվացիները, մարիները:

Ռազինը կռվում եր կալվածատերերի, վաճառականների և ցարական աստիճանավորների դեմ: Նրան հաջողվեց մի շարք քաղաքներ դբովել.—Յարիցինը (այժմ Ստալինգրադ), Հաչտարխանը, Սարատովը, Սամարան: Գրաված քաղաքներում և ազարակներում Ռազինը վերացրեց ցարի, աստիճանավորների ու կալվածատերերի իշխանութիւնը: Բնակիչներն ազատ կազակներ եյին հայտարարվում: Իշխանութիւնը հանձնվում եր կազակային «ժողովին» և ռազինյան պետին:

Ռազինցիները կալվածատերերի, տերտերների և վաճառականների դուրքը բաժանում եյին ապստամբութիւն մասնակիցների և տեղական չքավորութիւն միջև: Յարական աստիճանավորներին, կալվածատերերին, վաճառականներին սպանում եյին կամ բանտ նստեցնում:

Յարն ու կալվածատերերը վախեցան: Նրանք հսկայական ռազմական ուժեր ուղարկեցին ապստամբների դեմ: Սակայն հեշտ չեր նրանց հաղթահարել: Յարական զորքերը մի քանի անգամ սարտութիւն կրեցին ապստամբներից: Յեղ միայն Սիմբիբսկի (Ուլյանովսկ) տակ լավ վարժեցրած ու սպառազինված մեծաքանակ ցարական զորքերը կարողացան հաղթել Ռազինին:

Ռազինի ապստամբութիւնը խեղդվեց արյան մեջ: Ռազինցի-

<sup>1)</sup> Մերձվոլդյան—վոլգայի ափերին գտնվող վայրեր:

ներին սպանում եյին հազարներով, հոշոտում, ցցերի վրա նստեցնում, դամում տախտակների վրա, աչքերը հանում, ձեռքերը կտրատում:

Ինքն Ստեպան Ռազինը փախավ Դոն: Սակայն նա այնտեղ բռնկեց հարուստ կազակների կողմից և հանձնվեց ցարական իշխանութիւնը: Նրան յերկաթյա վանդակի մեջ դրած բերին Մոսկվա:

Սպանելուց առաջ Ռազինին սոսկալի տանջանքների յենթարկեցին: Սակայն աներկյուղ եր դյուղացիական և կազակային չքավորութիւն առաջնորդը: Վոչ մի ծպտուն, վոչ մի խոստովանանք չյսեցին նրանից ցարական դահլճները: Ռազինն այդպես աննկուն տարավ նաև տանջալից մահը:

Դեռ յերկար ժամանակ Ռազինի ջոկատների մնացորդներն ահ ու սարսափ եյին սպառնալու կալվածատերերին ու ցարական աստիճանավորներին, մինչև վոր վերջնականապես ջախջախվեցին ցարական զորքերի կողմից:

### § 10. ՊՈՒԳՍՉՅՈՎԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ռազինի ապստամբութիւնից 100 տարի հետո, 1773 թվին, բռնկեց նոր, ալեւի ուժեղ դյուղացիական ապստամբութիւն: Այդ ապստամբութիւն առաջնորդը Դոնի կազակ Յեմելյան Պուգաչովն եր:

Պուգաչովը ծառայում եր ցարական բանակում: Չցանկանալով հպատակվել կալվածատեր-սպաներին, նա բանակից փախավ և թափառում եր ամբողջ Ռուսաստանում: Նա տեսնում եր չքավորների կյանքը և մտածում եր, թե ի՞նչպես կարելի յե ազատել նրանց ճորտութիւնից:

Կովկասում Պուգաչովին բռնեցին և բանտ նստեցրին: Սակայն նա բանտից փախավ: Նրա հետ միասին փախավ նաև նրան հսկող զինվորը: Դրանից հետո Պուգաչովը հայտնվեց Ուրալում: Այստեղ արագութիւնով նոր շուրջը հավաքվեցին բոլոր՝ ճորտական կարգերից դժգոհները:

Իսկ դժգոհների թիւը շատ եր: Ճորտերի դրութիւնն այն ժամանակ ալեւի յեր վատացել: Կոռն ալեւի յեր ծանրացել: Վատ եյին ապրում նաև Մերձուրալյան և Մերձվոլդյան շրջաններում բնակվող վոչ ուս ժողովուրդները: Կալվածատերերը, աստիճա-

նախորդները, վաճառականներն ու տերտերները նրանց ավելի ու ավելի էյին թախանում և կեղեքում :

Պուզաչյովի շուրջը համախմբվեցին ճորտ գյուղացիները, կապակները, ճորտ բանվորները, քաղաքային չքավորութունը և կեղեքված ժողովուրդները : Առանձնապես շատ էյին ապստամբ բաշկիրները : Ապստամբներն սկսեցին հաշիվ տեսնել կալվածատերերի հետ : Բերդերը մեկը մյուսի հետևից հանձնվում էյին Պուզաչյովին : Պուզաչյովի դեմ ուղարկված ցարական զորքերը խմբերով անցնում էյին նրա կողմը :

Պուզաչյովին մեծ ողբութուն ցույց տվին Ուրալի ճորտ բանվորները : Նրանք ապստամբների համար թնդանոթ և ուսմբ էյին ձուլում : Հրետավորները Ուրալի գործարանների ճորտ բանվորներից էյին :

Բանվորներն ապստամբների մեջ ամենից ավելի դիտակիցներն էյին : Ապստամբության առաջնորդների մեջ Պուզաչյովից բացի, իրենց ընդունակութուններով ու համառությամբ աչքի էյին ընկնում բանվորներ Բելորոտովը, Սլոպուչան և բաշկիր Սալավաթ Յուլայեվը :

Ամբողջ Մերձվոլգյան յերկրամասը, ուր դեռ կենդանի յեր Ռադինի հիշատակը, կանգնեց Պուզաչյովի կողմը :



Նկ. 4 Պուզաչյովը պատճում և կալվածատերերին :

Պուզաչյովը Ռադինի նման կալվածատերերի հողն ու գույքը տալիս էր գյուղացիներին, վոչնչացնում էր ճորտատիրական կարգերը, դաժանորեն պատժում էր գյուղացիների և բանվորների

թշնամիներին : Գյուղացիները հագարներով մտնում էյին Պուզաչյովի դրոշի տակ : Մեկ այտ տեղ մեկ այնտեղ բողջավառվում էյին ապստամբների հրդեհած կալվածատիրական ազարակները :

Կարվածատերերը խուճապի մեջ ընկան : Նրանք փրկութուն էյին գտնում կենտրոնական նահանգներում, Մոսկվայում և Պետերբուրգում :

Մոսկվայում ապրող ճորտ գյուղացիները, բանվորները, մանր արհեստավորներն ուրախությամբ սպասում էյին Պուզաչյովին : Չեռքից-ձեռք թուռցիկներ էյին անցնում : Նրանց մեջ Պուզաչյովը հայտարարում էր իր շուտավույթ դալստյան մասին, խոսում էր այն մասին, վոր մոտ և ճորտության վերջը :

Ցարական կառավարութունը հսկայական ռազմական ուժեր ուղարկեց Պուզաչյովի դեմ :

Սարեպտայի տակ պուզաչյովցիներն ուժեղ պարտութուն կրեցին : Պուզաչյովը փախավ տախտանները : Ռադինի նման նա էլ բռնվեց հարուստ կաղակների կողմից : Նրանք Պուզաչյովին հանձնեցին ցարական իշխանութուններին :

Պուզաչյովին, ինչպես 100 տարի առաջ Ռադինին, նույնպես յերկաթյա վանդակով տարան Մոսկվա, յերկար տանջեցին, չարչարեցին և վերջապես սպանեցին : Պուզաչյովը Ռադինի նման տանջանքների ու սպանության ժամանակ հսկայական տոկունութուն և արիութուն ցույց տվեց :

Պուզաչյովյան ապստամբութունը ճնշվեց մեծ դաժանությամբ : Պատժիչ զորամասերն ամբողջ գյուղեր վոչնչացրին : Բանուկ ճանապարհների վրա կախաղաններ դրվեցին, վորոնցից ճոճում էյին սպանված պուզաչյովցիների այլանդակված դիակները : Գետերի վրա լողում էյին լաստեր, վրան կախաղաններ դրած, վորոնցից կախված էյին սպանված պուզաչյովցիները :

Գյուղացիների ճնշմանը մասնակիցեց նաև հոգևորականութունը : Վանքերից մեկը, վորը Պուզաչյովի ապստամբության ժամանակ պաշարվել էր իր իսկ ճորտ գյուղացիների կողմից, ցարական զորքերի դալուց հետո գյուղացիներին ժողովի հավաքեց ցարական հրամանը կարդալու պատրվակով : Յերբ գյուղացիները հավաքվեցին, զինվորները նրանց սվիններով քշեցին վանքի պարսպից ներս : Հետո վիճակ գցելով գյուղացիներին հանում էյին բարձր պարսպի վրա, մտրակով ձեծում և անչնչացած կամ դեռ կենդանի, զլորում անդունդը :

Յարն ու կարխածատերերը հաղթեցին: Սակայն նրանք դեռ  
յերկար հիշում էին Պուգաչյովի մասին:

Պուգաչյովի ապստամբութունը Ռադինի ապստամբության  
նման պարտութուն կրեց, վորովհետև այդ ժամանակներում դեռ  
բանվոր դասակարգ չկար: Միայն բանվոր դասակարգը կարող է  
հեղափոխութուն կատարել: Միայն բանվորական ապստամբու-  
թյան հետ և բանվորների ղեկավարությամբ ապստամբած գյու-  
ղացիները կարող են հաղթանակել:

Իսկ առանց բանվորների ղեկավարության գյուղացիական  
ապստամբութունները բոլոր յերկրներում միշտ ել պարտութուն  
են կրել:

### §. 11. ԳԱՂՏՆԻ ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ ԱՆԴՐԵՅԿԱՆ

Ծատ պատմութուններ են մնացել պուգաչյովյան ժամանակ-  
ների մասին: Ահա դրանցից մեկը:

Խրճիթը լիքն է ժողովրդով: Մոտ հիսուն հողի յերխտասարդ ու  
ծեր գյուղացիներ և կաղակներ, կանայք ու յերեխաներ ուս-ուսի  
խիտ կանգնել են: Սեղանի առաջ նստել են յերեք հողի:

Յերեքն ել միրուքավոր են, սև, արևից ու քամուց խանձված  
դեմքերով: Անդրեյկան իր աչքերով ուտում է նրանց: Իսկ այդ  
յերեքից միջահասակը հանկարծ խոսում է.—

— Բարի մարդիկ, ձեզ, անաղատ չքավորներիդ, գեղջուկնե-  
րիդ, աղաները մտրակների տակ տառապողներիդ, բոլորիդ մենք  
ազատութուն ենք շնորհում, աղաներից ենք ազատում, հող ենք  
տալիս:

Ամբոխը հուզվում է, կանայք հեծկլտում են: Իսկ նա, սեվը—  
ուրախ հայացքով է նայում ամենքին, միրուքը հարդարում և նո-  
րից է խոսում.—

— Իսկ դուք, հայրեր, պարապ միջ նստի: Ամբողջ ժողովուր-  
դով համերաչխ կերպով դուք պետք է հարձակվեք թշնամու վրա,  
և հաստատ ու միաբան պաշտպանեք ձեր սեփական շահերը:

Ահեղ վորոտով լցվում է խրճիթը: Տարբեր ձայներով աղ-  
մըկում, խոսում են.—

— Կպաշտպանենք, կպաշտպանենք:

— Տերերը մեզ արև չեն տալիս:

— Բավական է համբերեցինք, ամբողջ կյանքն աղաներին գո-  
հեցինք:

Պուգաչյովը կանգնում, ձեռքով նշան է անում.—

— Նու, հայրեր, հիմա դնացեք, հետո իմ ատամանները ձեզ  
գնդերի մեջ կբաժանեն: Իսկ յես պետք է իմ ողնականների հետ  
խորհրդակցեմ:

Մերունի տանտերն Անդրեյկային սեղանի մոտ է տանում.—

— Հը, ջահել, դու ո՞վ ես: Վո՞րտեղից—մի ուրիշ, ավելի կա-  
րևոր բանի մասին մտածելով դիմում է նրան Պուգաչյովը.—  
խոսիր:

Անդրեյկան քաբացած կանգնել է, աչքերը չի կարողանում  
հեռացնել Պուգաչյովից: Բառերը դուրս չեն գալիս նրա բերանից:

— Ես ջահելը Վորդայի մյուս ավից է յեկել քեզ մոտ: Լուր է  
բերել,— ասում է տանտերը:

— Նու, մի դանդաղիր, ասա, ի՞նչ լուրեր են պտտում. ի՞նչ են  
հրամայել քեզ ինձ ասելու: Ամեն ինչ պատմիր: Իմ մասին ձեր մոտ  
լուր հասե՞լ է, թե վոչ:

— Հասել է, լսել ենք,— կամացուկ, դժվարությամբ խոսում  
է Անդրեյկան: Յեվ հանկարծ, վոնց վոր արթնանալով, խոսում  
է բարձր ու շտապ, կարծես թե վախենում է, վոր իրեն թույլ  
չեն տա բոլորը պատմելու:

— Սպասում են քեզ, ազատության են պատում, ուժասպառ  
են յեղել բոլորը... Գաղանություններ է անում մեր կալվածատեր  
աղան: Ժողովրդին մինչև կոկորդն է հասցրել... հորս ծեծեց...  
Քրոջս նկուղ է գցել...

Անդրեյկայի աչքերից անդուսպ կերպով աղի արցունքներ են  
հոսում: Պուգաչյովն իր ձեռքերը սիրալիբ դեռում է նրա ուսերին:

— Լա՛վ, կկատարվի ձեր ցանկությունը, կկատարվի... գնա  
ձերոնց մոտ, ասա, վոր շուտով կգամ, կհասնեմ ձեզ: Թող ի-  
րենք ել պատրաստվեն: Վորտեղից վոր հնարավոր է, եղնք ճարեն,  
նիղակներ կոխեն: Յես ել վրա կտամ ու ձեզ կպաշտպանեմ: Ասա,  
վոր առիթը բաց չթողնեն: Ազատությունն ինքն իրեն չի գա ինք-  
ներդ պետք է ազատություն ձեռք բերեք և այն ամուր պաշտպա-  
նեք: Հասկացա՞ր:

Անդրեյկան միայն գլխով արեց:

— Բոլորը, բոլորը հասկացա: Վոչ մի բան չեմ մոռանա: Բո-  
լորը կատեմ, կպատմեմ:

— Լավ, հենց վաղը լուսադեմին ճանապարհ ընկիր: Իսկ դու,  
Պետրովիչ,— ասաց Պուգաչյովը ծերունի տանտիրոջը,— սայլը

տուր եւ ջահելին : Նու, մեղ ել հարկավոր ե ճանապարհ ընկնել, —  
ալեկացրեց նա կանգնելով :

Անդրեյիկան հմայված նայում եր տանջված գյուղացիներին ա-  
զատ կյանք խոստացող մարդու վրա :

Իսկ առաւելոյցան դեռ լուսը չբացված Անդրեյիկան արդեն գնում  
եք իրենց գյուղը : Յեվ ուրախ մտքերը մեկը մյուսի հետեւից հա-  
ջորդում եյին նրա գլխում : «Ահա Պուղաչյովը դալիս ե մեղ մոտ  
և առաջին հերթին կհրամայի Լուրաչկային աղատել նկուղից : Հե-  
տո կսպանի դաժան աղային և բոլոր գյուղացիներին ազատութուն  
կտա» . . .

### § 12. ԳՅՈՒՂԱՅԻՍԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Անդրկովկասի գյուղացիութունը յենթակա յեր կրկնակի  
ճնշման : Նրան դաժանորեն կեղեքում եյին՝ մի կողմից սեփական  
ազգային կարվածատերերն ու իշխանավորները, մյուս կողմից ու-  
սական ցարիզը :

Կոռն ու բեգլարը, ծանր հարկերը, կարվածատերերի, չինով-  
նիկների, տերտերների սանձարձակ կողոպուտը խստառ քայքա-  
յում եյին գյուղացիութեանը : Յեվ համբերութունից դուրս յեկած  
գյուղացիութունն ապստամբում, մասսայական յելույթներ եր  
ուեննում Հայաստանում, Վրաստանում Աղբրեջանում :

Անդրկովկասում գյուղացիական ապստամբութուններն ա-  
մենից ավելի լայն ծավալ ու սուր ընդլիճ են ստանում Վրաստա-  
նում :

Մյուսպես որինակ, 1804 թվին լեռնաբնակ վրացի գյուղացիները  
(այն շրջանում, վորտեղից անցնում ե ուղմա-վիրական ճանա-  
պարհը) ապստամբում են, զինված ջոկատներ կազմում և հրաժար-  
վում են յենթարկվել իշխանութեան : Յարական գործերի շարժու-  
մը կատեցնելու համար նրանք բազմաթիվ տեղերում փախցնում են  
ուղմա-վիրական ճանապարհը, ավերում կամուրջները և կտրում  
թիֆլիս-Վլադիկավկազ հաղորդակցութունը : Հարձակվելով  
կազակային պոստերի վրա, կոտորում են բոլորին : Սարսափա-  
հար իշխանութունը զիմում ե խորամանկութեան : Նա անվանի  
մարդիկ ե ուզարկում ապստամբների մոտ՝ Վրաստանի կաթողի-  
կոսի նամակով հանդերձ, վորը կոչ ե անում ապստամբներին խա-  
ղազվել և հպատակվել աստծուց ուղարկված իշխանութեան :

Տեղի յե ունենում կարճատե դադար, վորից հետո նորից վեր-

սկսվում են զինված ընդհարումները : Սակայն վատ զինված  
ապստամբ ջոկատները անկարող եյին յերկար զիմադրել հրետանի  
ուենցող կանոնավոր զորքերին և ցարական պատժիչ արշավա-  
ւմբերը արյան մեջ խեղդում են ապստամբութունը :

Այնուհետև տեղի յե ունենում 1841 թվի գյուղացիական շարժումը  
Գուրիայում, ապա Մինդրեխայի ճորտ գյուղացիութեան հռչակա-  
վոր ապստամբութունը ճորտատեր կարվածատերերի դեմ : Այդ ա-  
պստամբութեան սկանավոր զեկավարներից մեկն եր դարբին Մի-  
կովան : Նա դաժան ու խստադույն հաշվեհարդար եր կատարում  
կարվածատերերի հետ և զբավելով նրանց ունեցվածքը բաժանում  
եք չքավոր գյուղացիներին :

Յերկար կռիվներից հետո ցարիզմի արյունոտ թաթը այստեղ  
ևս ճնշում ե ճորտ գյուղացիութեան ապստամբութունը :

### ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

1. Յարական իշխանութունն ինչո՞ւ յեր պաշտպանում ճորտատե-  
ր կարվածատերերի շահերը :
2. Յեկեղեցին ինչպիս եր ոգնում ճորտատերերին՝ կեղեքելու ճորտ  
գյուղացիներին և ճորտ բանվորներին :
3. Ճորտ գյուղացիներն ինչպիս եյին պայքարում ցարական իշխանու-  
թեան և կո լվածատերերի դեմ :
4. Յ՛երբ ե տեղի ունեցել Ռազինի ապստամբութունը : Յ՛երբ ե յեղկ  
Բուզաչյովի ապստամբութունը :
5. Ինչո՞ւ ճորտերի ապստամբութունները պարտութեամբ եյին վերջա-  
նում :

### III ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՈՒՄԸ

#### § 13. ԻՆՉՈՒ ՎԵՐԱՅՐԻՆ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոտավորապես սրանից 100 տարի առաջ Ռուսաստանում  
սկսեցին արագութեամբ նորանոր Փարբիկներ ու գործարաններ  
կառուցվել : 1860-ական թվականներին արդեն 15 հազար Փարբիկ-  
ներ ու գործարաններ կային : Դրանցում աշխատում եյին ավելի  
քան կես միլիոն բանվորներ :

Գործարանատերերին և Փարբիկատերերին նորանոր բանվո-  
րական բանակներ եյին հարկավոր : Իսկ ճորտ բանվորը վատ եր  
աշխատում : Նա իր արհեստը վատ գիտեր : Նրան զոռով եյին գոր-  
ծարան տանում և նա հաճախ այնտեղից փախչում եր :

Վորջան շատ գործարաններ ու Փարբիկներ կառուցվեցին :



այնքան ել շատացան քաղաքները: Քաղաքների բնակչութիւնը հարկավոր եր հաց, միս, յուղ: Ճարբրիկներին հարկավոր եր վուշ, կանեփ, կաշի և այլ դյուղատնտեսական հումք: Բացի դրանից՝ աճեց ցորենի արտահանութիւնը դեպի արտասահման: Սկսեցին աճել շատ վուշ, կանեփ, փայտ, կաշի և այլ հումք ուղարկել արտասահման:

Այդ բոլորը կալվածատերերին ստիպում եր վորքան կարելի յե շատ ցանել, իսկ ճորտ գյուղացիները, անաղատ կյանք վարելով, վատ ելին մշակում կալվածատիրոջ հողը: Վատ բերք եր ստացվում:

Ճարբրիկատերերին հարկավոր եր սպառել իրենց Փարբրիկներում մշակած ապրանքները, իսկ ճորտ բանվորները և ճորտ գյուղացիներն աղքատ ելին ապրում և չեյին կարողանում դնել այդ ապրանքները:

Այսպիսով, Փարբրիկատերերի համար ճորտատիրութիւնը չահավետ չեր: Իսկ կալվածատերերի համար ել ճորտ գյուղացու աշխատանքն ավելի քիչ յեկամուտ եր բերում, քան նրանք ցանկանում ելին ստանալ:

Այդ բոլորը ցարին, Փարբրիկատերերին ու կալվածատերերին հարկադրեց մտածել ճորտատիրութիւն վերացման մասին:

Միաժամանակ հաճախակի ելին դարձել գյուղացիական ապրտամբութիւնները: Ճորտատիրութիւն վերացման նախորդող 5-6 տարվա ընթացքում ավելի քան 400 ապրտամբութիւն ե տեղի ունեցել: Կալվածատերն ու ցարը վախենում ելին, վոր մի նոր պուզաչովյան շարժում կսկսվի:

Այդպիս, ցարական կառավարութիւնը հարկադրված եր վերացնել ճորտատիրութիւնը:

1861 թվին Ալեքսանդր II ցարը մանիֆեստ հրատարակեց ճորտատիրութիւն վերացման մասին:

Ել չեր կարելի գյուղացիներին վաճառել ու դնել, նվիրել կամ փոխանակել, դրով դնել կամ ժառանգներին հանձնել: Գյուղացիները դարձան «ազատ» և վոչ թե ճորտ:

Սակայն այդ «ազատութիւնից» չահեցին կալվածատերերն ու Փարբրիկատերերը: Գյուղացիներին աղատեցին, սակայն նրանց ավելի քիչ հող տվին, քան նրանք ունեյին ճորտատիրութիւն ժամանակ: Բացի դրանից գյուղացիները պետք ե հողի համար «փրկագին» վճարեյին: Այդ փրկագինը շատ մեծ եր: Գյուղացիները հողի

համար պետք ե հողի տված յեկամուտից շատ ավելի վճարեյին:

Տերունական գյուղացիները հող միանգամայն չստացան:

Բացի դրանից, գյուղացիներին հրամայված եր ճորտութիւն վերացումից հետո առաջին յերկու տարիները ընթացքում հին ձևով կոոի դնալ և կալվածատիրոջ դրամական բահրա վճարել:

Հողի մեծ ու լավագույն մասը մնաց կալվածատերերին: Իսկ գյուղացիներն ստացան ամենավատ հողերը: «Ազատագրութիւն» ժամանակ նրանցից խլեցին մարդագետիները, անտառները, արտավայրերը: Առանց այդ խլված հողի գյուղացիներն ապրելու հնար չունեյին: Ուղեհային-չուղեհային, նորից պետք ե կալվածատիրոջ դիմեյին: Հարկավոր եր ջրի, անասուններին արածացնելու արտոնութիւն խնդրել և այլն: Իսկ դրա համար կալվածատերը գյուղացիներին ստիպում եր իրա համար աշխատել: Այժմ արդեն կալվածատերը գյուղացիներին ստիպում եր այնքան հող մշակել, վորքան իրեն հարկավոր եր: Գյուղացիներին արտոնութիւն տալով ջրից, արտավայրերից ոգտվելու և այլն, կալվածատերը պահանջում եր, վորպեսզի գյուղացիները դրա համար իրեն վճարեն կամ մշակեն իրա հողը:

Իսկ գյուղացիներն իրենցից խլված հողի համար սկսեցին աշխատել կալվածատերերի կալվածքներում: Նրանք իրենց ձիերով հերկում ելին կալվածատերերի հողը, հնձում հացահատիկը, մարդագետիները, կալում կալվածատիրոջ հացը:

Այդ բոլորը քայքայում եր գյուղացիներին: Բազմաթիւ գյուղացիներ բոլորովին չեյին կարողանում իրենց տնտեսութիւնը վարել: Նրանք պետք ե իրենց համար աշխատանք ճարեյին. վարձ-վեյին կալվածատերերի և կապիտալիստների մաս: Այդպիսի գյուղացիները բատրակ ելին դառնում գյուղում կամ բանվոր՝ քաղաքում:

Ճորտատիրութիւն վերացման չնորհիւ Փարբրիկատերն ու կալվածատերը վարձու, այն ել եօան բանվորներ ստացան: Իսկ վարձու գյուղացիներն ու բանվորները ճորտերից լավ ելին աշխատում, վորովհետե վատ աշխատանքի համար նրանց անմիջապէս հեռացնում ելին, փոխարինում նորերով:

§ 14. ԳՅՈՒՂԱՅԻՍԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Գյուղացիներն այդպիսի աղատութիւն չեր, վոր սպասում ելին: Ազատութիւն և հողի փոխարեն նրանք նոր, ավելի ծանր

ստրկութեան մեջ ընկան: Դրա համար հենց «աղատութիւն» հայտարարելու տարին գյուղացիական խռովութիւնները բռնեցին համարյա ամբողջ Ռուսաստանը: Հաջորդ յերկու-յերեք տարում մոտ 2000 գյուղացիական խռովութիւններ ու սպառամբութիւններ յեղան:

Վորոշ անգերում գյուղացիները չէին հավատում այն աստիճանավորներին, վորոնք կարգում էին ցարի մանիֆեստը ճորտատիրութեան վերացման մասին: Գյուղացիները կարծում էին, վոր ցարի հրամանով իսկական, «վոսկի» աղատութիւն ետրված, իսկ կալվածատերերն ու աստիճանավորներն այն թաղցրեում են ժողովրդից: Գյուղացիները դեռ չէին հասկանում, վոր ցարը միաբան է կալվածատերերի հետ: Գյուղացիների մեջ գրագետներ համարյա չկային, իսկ իրենք չէին կարողանում մանիֆեստը կարդալ: Իսկ յեթե կարդացողներ ել գտնվէին, նրանք դժվարութեամբ կհասկանային մանիֆեստը: Մանիֆեստը դիտմամբ գրված էր ծանր, ինչպես ասում են, գրասենյակային լեզվով: Գյուղացիներն սկսեցին վստահելի մարդկանց փնտռել, վորոնք մանիֆեստը «ճիշտ», «իսկութեամբ» բացատրէին:

Այսպես, որինակ, Բեղդնա գյուղում (ներկայիս թաթարական հանրապետութեան մեջ) գտնվեց Անտոն Պետրով անունով մի մարդ, վորն իրը թե թուղթը ճիշտ էր կարգում և բացատրում, թե գյուղացիներին աղատութիւն վաղուց է տրվել, սակայն աղաները թաղցրել են աղատութիւնը: Յեւ գյուղացիները զանազան գյուղերից ու շենքերից սկսեցին Բեղդնա գնալ: Անտոն Պետրովը դուրս եր գալիս ժողովրդի առաջ և բացատրում էր, վոր թղթերում գրված է, թե աղատութիւնը գյուղացիներին տրված է դեռ 1858 թվականից, սակայն կալվածատերերն այդ թաղցրել են: Նա գյուղացիներին խորհուրդ էր տալիս չլսել կալվածատերերին ու պաշտոնյաներին, կոռի չգնալ, բահրա չլճարել և համարձակ կերպով հացահատիկը վերցնել կալվածատերերի պահեստներից: Ասում էր, վոր հրամանի համաձայն ամբողջ հողը պատկանում է գյուղացիներին, իսկ կալվածատերերին տրված է առաջ իրենց տիրած հողի մեկ յերրորդը:

Անտոն Պետրովի աղղեցութեան տակ շատ գյուղացիներ հրատարակեցին կոռից: Նրանք կարծում էին, վոր կալվածատերերն այլևս վոչ մի իրավունք չունեն նրանց վրա:

Սակայն այդպես չէր մտածում իշխանութիւնը: Վախեցած

կալվածատերերն իշխանութիւնից պահանջում էին ձերբակալել Անտոն Պետրովին:

Գեներալ Ապրակսենի գլխավորութեամբ զորքը հարձակվեց Բեղդնայի վրա:

— Հանձնեցեք Պետրովին, — պահանջում էր գեներալը:

Սակայն գյուղացիները պատի նման կանգնել էին իրենց առաջնորդի խրճիթի առաջ և նրան չէին հանձնում իշխանութեանը:

Այն ժամանակ գեներալը հրամայեց կրակ բաց անել:

Յարական զինվորները կրակեցին անգին գյուղացիների վրա: Ամբողջ փողոցը ծածկվեց սպանվածներով և վիրավորներով:

Անտոն Պետրովին բռնեցին, ձեռքն ու վոտը կապեցին և զինվորական դատարանի հանձնեցին: 1861 թվի ապրիլի 19-ին նրան դնդակահարեցին: Յարն ու կալվածատերերն այդպես էին պատժում նրանց, ովքեր ցանկանում էին վոչ թե կալվածատիրական, այլ գյուղացիական աղատութիւն:

### § 15. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ» ՀԵՏՈ

Ճորտատիրութեան վերացումից հետո գյուղացիները կյանքը չբարելավվեց: Փոքրիկ, չնչին հողամասերը չէին կարող կերակրել գյուղացիներին: Յեկամտի մեծ մասը տալիս էին ցարին՝ հարկերի համար և փրկագնի վճարումներին: Իսկ կալվածատերերն առաջվա նման անաշխատ ու ճոխ կյանք էին վարում, առաջվա նման անխնա շահագործում էին գյուղացիներին: Կարիքից ճնշված գյուղացին դիմում էր կալվածատիրոջ, մտրկական պայմաններով մշակում նրա հողը: Այդ բոլորը նա անում էր չնչին վարձատրութեամբ: Բացի դրանից գյուղում արագութեամբ աճեց կուլակութիւնը:

Ճորտատիրութեան վերացումից առաջ էլ գյուղում հարուստ գյուղացիներ կային: Նրանք հարստանում էին ուրիշի աշխատանքով, կալվածատիրոջ հետ միասին շահագործում էին գյուղացիներին, առևտուր էին անում: Հարուստ գյուղացիները հաճախ փողով գնում էին իրենց աղատութիւնը: Իսկ նրանք, վորոնք ճորտ էին մնում, սովորաբար կառավարչի, գործակատարի, գյուղապետի պաշտոններն էին գրավում:

Ճորտատիրութեան վերացումից հետո հարուստ գյուղացիները շատ հող գնեցին և արենդով տալիս էին գյուղացիներին: Նրանք ստրկական պայմաններով փող էին փոխ տալիս գյուղացի-

ներին, վորոնք զրա կարիքը միշտ զգում էին՝ իրենց ուժից վեր հարկերը վճարելու համար:

Ստրկութեան լծի տակ միլիոնավոր գյուղացիական տնտեսութիւններ աղքատանում ու քայքայվում էին: Տասնյակ ու հարյուր հազարավոր գյուղացիներ վարձվում էին՝ կալվածատերերի և հարուստ գյուղացի-կուլակների կողմից, դառնում էին բաւրակ կամ գնում էին բանվորութիւն անելու նորաբաց Փարբիկ-Ֆեռում:



Նկ. 5 Հարկի տեղ խլում են միակ կովը

Կուլակները, կալվածատերերի նման, ջանք էին թափում ավելի շատ աշխատեցնել բաւրակներին և ավելի քիչ վճարել նրանց: Կուլակները կալվածատերերի ուղղակի դաշնակիցներն էին: Նրանք շատ հող, անասուն, գործիք և փող ունեւին: Դրա շնորհիվ նրանք ստրկութեան մեջ էին դրել վոչ միայն չքավորներին, այլև միջակների զգալի մասին:

Ահա թե ինչ է պատմում նախկին ճորտը կուլակային ստրկութեան մասին:

— Ե՛հ, ախպեր, յես չտեսա, թե ինչ բան եր եզ ազատութիւն ասածը: Անասուն չունեւիք, կովից մնացել եր կաշի ու վոսկոր, իսկ խրճիթը լիքն եր յերեխաներով: Վո՞նց կերակրես: Աղան ասում եր. «ուտել ես ուզում, աշխատիր ինձ համար, կկերակրեմ»: Ի՞նչ արած, գնում ես: Բայց չուտով աղան հետ է կանգ-

նում, «Շատ եք, — ասում ե, — ձեզ ո՞ւր տեղավորեմ, հոգս ծախել եմ վաճառականին՝ Փարբիկ շինելու համար»:

Վաճառականն յեկավ մեր գյուղը, ահագին քար ու փայտ բերեց: Շողիով աշխատող մեքենա սարքեց: Կանայք սկսեցին վուշ մշակել, իսկ վաճառականը խարելով գնում եր վուշը: Տղամարդիկն էլ զիմեցին վաճառականին.

— Հա՛յր, մեզ աշխատանք տուր, մի թողնի վոր յերկրից-յերկիր ընկնենք:

Վաճառականը հրձվում է, միրուքն է ջորում:

— Լա՛վ, — ասում ե, — աշխատանք կտամ, միայն իմ մոտ լողրութիւն չաներ, իսկ գինը յես ինքս կնշանակեմ:

Տղամարդկանց համար միևնույն եր թե յերկրից-յերկիր թափանել, թե վաճառականի համար քիչ փողով աշխատել:

— Թոնարհարար շնորհակալ եմք, հա՛յր, — ասում էին ու գլուխը ցածր խոնարհելով գործարան գնում:

Մյուս կողմիցն էլ կուլակն եր նեղում: Կուլակ Տրիֆոնը չքաւորներից կես գնով ձի յեր գնել ու ազայութիւն եր անում: Գյուղացիք գիժում են նրան. —

— Ոգնիր, — ասում են, — Տրիֆոն, միասին նույն ազային ձտայել եմք, միասին մեջք ենք ծռել:

Իսկ Տրիֆոնը հեգնում է. —

— Ի՞նչ արած, — ասում ե, — միասին մեջք ենք ծռել, սակայն մեջքներս առանձին-առանձին ենք ուղղել: Իսկ ինչո՞վ կարող եմ սլտակար լինել:

— Լսել ենք, Տրիֆոն, վոր փող ունես: Ոգնիր մեզ կարգի բերելու տնտեսութիւնը: Թշվառութեան մի հասցնի: Հենց վոր գործերը կարգի զնենք, տակոսով միասին կտանք:

— Ի՞նչ արած, — ասում ե Տրիֆոնը, — չեմ հրաժարվում ողրելուց: Սակայն, ախպեր, յեկեք պայման կապենք: Յես ձեզ ձի, արոր, և մեկուկեսական ուրբլի կտամ մինչև բերքը, իսկ դուք ինձ բերքի կեսը կտաք:

— Վոնց թե, Տրիֆոն, դու մեր հայրը չե՞ս. — աղաչում են գյուղացիները: Ձին ու արորը քեզ կմնան, մեկ ու կես ուրբլին հետ կառնես, դեռ բերքի կե՞սն էլ ես ուզում: Ինչի՞ համար, Տրիֆոն:

— Նրա համար, վոր ոգնում եմ ձեզ: Չոգնեմ — սովից կմեռնեք:

Գյուղացիները մատածեցին, մտածեցին, զբուցեցին, ճար չկար: Գնացին Տրիֆոնի մոտ:

— Քո ասածը լինի, Տրիֆոն, միայն ողնիր:

Եսպես, գյուղացիները տարեց-տարի Տրիֆոնի համար եյին աշխատում... Իշխանութունն ել չեք քնել: Մեկ ել տեսար գյուղ ե գալիս, գյուղապետին եր պահանջում ու բղավում:—

— Եդ ինչո՞ւ քո գյուղը հարկերը չի տալիս: Պարտքերը շատացել են:

Գյուղապետն իշխանավորին խրճիթից-խրճիթ եր տանում: Իսկ խրճիթներում դատարկութուն ե, բան չե մնացել: Վերջին հորթն են բակից տանում... Կինը լաց ե լինում, յերեխաները ճչում են, իսկ քո ձեռքն ու վոտքն են դողում, հազիվ ես կանգնել...:

Ե՛հ, հիշելն ել ծանր ե: Եդպես եր եդ «ազատութուն» կոչվածը:

### ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Վճիռ թվին հրատարակվեց ճորտատիրութեան վերացման մանիֆեստը:
2. Յարական իշխանութունը ինչո՞ւ վերացրեց ճորտութունը:
3. Ճորտատիրութեան վերացումից կալվածատերերը, ֆարրիկանաներն ու գործարանատերերն ինչ ոգուս ստացան:
4. Ճորտատիրութեան վերացումից հետո ինչ դրութեան մեջ բնկան գյուղացիները:

## IV. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՊԱՅԲԱՐԸ ՄԻՆՉԵՎ 1905 ԹԻՎԸ

### § 16. ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ

Ճորտատիրութեան վերացումից հետո միուսաստանում տասնյակ խոշոր քաղաքներ առաջացան: Աղաների բազմաթիվ ազարակներ անհետացան: Քաղաքների շրջակայքում ծխացին ֆարրիկների ու գործարանների բարձր ծխնելույզները, վորոնց մեջ հազարավոր բանվորներ եյին աշխատում: Հարուստների թաղամասերում շքեղ աներ կառուցվեցին:

Ո՞վ եր այդ բոլոր ֆարրիկների ու գործարանների տերը: Ի՞նչ եյին պատկանում քաղաքի լավագույն աները ե հարուստների թաղամասերի շքեղ բնակարանները:

Այդ բոլոր հարստութունների տերերը կապիտալիստներն ե-

յին: Նրանք դառնում եյին յերկրի գլխավոր ուժը: Նրանց ֆարրիկները կոշիկ, գործվածքեղեն, շաքար, հագուստ, կահ-կարասիք ե այլ իրեր եյին պատրաստում: Այդ բոլորն արտադրվում եր վարձու բանվորների ձեռքով ե յուրացվում եր կապիտալիստների—ֆարրիկների, դադգյահների ե մեքենաների տերերի կողմից: Կապիտալիստներին ձեռնառու յեր վարձել սոված գյուղացիներէ: Նրանք բանվորներին ցածր աշխատավարձ եյին տալիս, յերկար բանվորական որ սահմանում, առգանքներ վերցնում ե այլն: Կապիտալիստը բանվորներին ստիպում եր 17 ժամ աշխատել: Չնչին աշխատավարձը հազիվ եր բավարարում բանվորներին:

Այդպես եր ստեղծվում տերերի կապիտալը, այդպես եր աճում բուրժուազիայի հարստութունը: Բանվորների աշխատանքի հաշվին կապիտալիստները շոայլ ու շքեղ կյանք եյին վարում:

### § 17. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԱՐԱԿԱՆ ՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ահա թե ի՞նչ եր պատում այն ժամանակների բանվորների դրութեան մասին Մոսկվայի Չուլհակ Պյոտր Ալեքսեյեվը, վորն իր կյանքը նվիրել եր բանվորներին ու գյուղացիներին գործին: Պյոտր Ալեքսեյեվն իր հեղափոխական աշխատանքի համար դատապարտվեց 10 տարի տաժանակիր աշխատանքի ե աքսորվեց Սիբիր: Դատարանում 1877 թվին նա արտասանեց իր հուշակավոր ճառը, վորի մեջ պատմում եր, թե ի՞նչպես են ապրում բանվորները:

«Մենք, բանվորական ազգաբնակչութեան միլիոնները, անասուններից ափելի վատ ենք ապրում,— ասում եր նա,— մեզ մանկութունից մեր հայրերն ու մայրերը հանձնում են բախտի քմահաճույքին: Տասը տարեկան հասակից մեզ հացից կտրում, աշխատանքի յեն ուղարկում: Ի՞նչ ե մեզ սպասում: Հասկանալի յե, մի կտոր սե հացի համար վաճառվում ենք կապիտալիստին: Մեզ ճիպտով ու քացիներով վարժեցնում են մեր ուժից վեր աշխատանքի: Մնվում ենք ձեռք բնկածով, վատ ողից ու փոշուց խեղդվում ենք, քնում ենք՝ ուր վոր պատահի— հատակի վրա, վորեւե ցնցոտու մեջ փաթաթված:

Ահա թե մենք, բանվորներս, ինչ որեր ենք քաշում դեռ մանկական հասակում: Կապիտալիստների այդ լուծը, այդ վիրավորանքները մինչև վորոշ ժամանակ համբերելու վճռականութունը մանկութունից կոփվում ե մեր մեջ: Մանկութունից մեր մեջ

ատելութիւնն և ամբանում կապիտալիստների հանդեպ, միայն-  
տական ամբողջ կարգերի հանդեպ :

Մեզ չնչին աշխատավարձ են տալիս : Յեւ այդ աշխատավար-  
ձից ել կապիտալիստները փորձում են տույժերով ու հանումնե-  
րով խել բանվորների աշխատանքային կոպեկները : Ու այդ թա-  
ւանը նրանք իրենց յեկամուսն են համարում : Բանվորները խո-  
նարհվում են կապիտալիստների առաջ, յերբ նրանք տուղանում  
են իրենց, բանվորներին : Նրանք վախենում են զրկվել մի կտոր  
հացից, վորը նրանք ձեռք են բերում ծանր աշխատանքով :

Բանվորը ճորտի վիճակումն է, նա ինքը չի կարող հեռանալ  
կապիտալիստներից : Յեթե մենք հարկադրված լինենք թողնել  
Փարբիկը և հաշիվ պահանջենք կապիտալիստների ճնշումների,  
ուժից վեր տույժերի համար, մեզ կմեղադրեն խողովության մեջ :  
Զինվորի հրացանի կոթով մեզ կհարկադրեն շարունակել աշխա-  
տանքն այդ կապիտալիստի մոտ : Մեր լավագույն բնկերներին  
աքորում են հեռավոր կողմեր, Սիրիը, տաժանակիր աշխատան-  
քի, բանտ են նստեցնում : Բանվորը չի կարող բողոքել կապիտա-  
լիստի դեմ : Վոտտիկանն ու ժանդարմը, վորոնք ծառայում են  
Փարբիկատիրոջ, խփում են մեր բերանին, դեն են քշում :

Բանվորները չեն կարողանում բավարարել մարդու ամենա-  
անհրաժեշտ պահանջները : Նրանք մեռնում են կիսաբաղց, դան-  
դաղ մահով :

— Մեզ մոտ, Ռուսաստանում, բանվորին հալածում են գիրք  
կարդալու համար, և հատկապես այն ժամանակ, յերբ նրա մոտ  
տեսնեն մի գիրք, ուր խոսվում է նրա գրության մասին : Են ժա-  
մանակ արդեն պրծավ : Նրան ուղղակի ասում են, — «դու, ախպեր,  
բանվորի նման չես, դու գիրք ես կարդում» :

Այսպես եր խոսում դատարանում առաջին բանվոր-հեղափո-  
խականներից մեկը՝ Պյոտր Ալեքսեյեվը : Նա իր խոսքը վերջացրեց  
հետևյալ բառերով .—

«Սակայն կրարձրանա բանվոր մարդկանց միլիոնների մկա-  
նուտ ձեռքը և զինվորների սվիններով պաշտպանված ցարական  
ինքնակալության լուծը մոխիր կդառնա» :

§ 18. ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՇՍՀՄԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԿԱՆԱՆՅ ՈՒ  
ՅԵՐԵՆԱՆԵՐԻՆ

Կապիտալիստները հարկադրում եյին իրենց համար աշխատել  
վոչ միայն տղամարդ բանվորներին, այլև կանանց ու յերեխա-  
ներին :

Յուրաքանչյուր հանքահորում— խորը հողի տակ, յուրա-  
քանչյուր Փարբիկում՝ ամենավտանգավոր աշխատանքներում  
կարելի յեր տեսնել կանանց ու յերեխաների : Պարբիկատերերը  
ցանկանալով ավելի շատ շահ ստանալ, եժան բանվորական ձեռք  
եյին փնտուում : Իսկ կանանց ու յերեխաների աշխատանքը շատ  
եժան եր դնահատվում : Կինը յերկու անգամ պակաս եր ստանում  
տղամարդուց : Յերեխաները դրանից ել պակաս : Իսկ յերեխաներն  
այնքան ժամ եյին աշխատում, վորքան և մեծահասակները :

Յարական օրենքները չեյին պաշտպանում կանանց ու յերե-  
խաների աշխատանքը : Յարական Ռուսաստանում բանվորների աշ-  
խատանքի պաշտպանութիւնն չկար :

Ահա թե դրոյ Սերաֆիմովիչն ինչպես է նկարագրում փոք-  
րահասակ հանքափորի աշխատանքը ցարական իշխանության ժա-  
մանակ .—

«Կեղտոտ, վոտից մինչև զլուխ քարածխի փոշու մեջ խեղդ-  
ված հանքափորը մերկ վոտներին հագած կոշիկներով քայլում եր  
ձյան վրա : Նրա վորդին, տասը տարեկան յերեխա, նույնպես սև,  
զլգզված, նույնպես մերկ վոտները յերեվում եյին պատուոված  
կոշիկների մեջից :

Շուտով նրանք հասան մի հսկայական, մութ շենքի, ուր ա-  
դոտ կերպով յերեւում եյին վիթխարի մեքենաներ, գլաններ,  
շարժիչ փոկեր և շղթաներ : Դա այն շենքն եր, վորտեղից նրանք  
հանքահոր եյին իջնում : Եդտեղ ել գտնվում եր գրասենյակը :

Հանքափորը մոտեցավ գրասեղանին .— Իվան Իվանիչ, Սեն-  
կայիս գրիբ ջրհան մեքենայի վրա աշխատելու : Թող պարապ  
չթափառի :

Իվան Իվանիչը գլուխը բարձրացրեց, սառն ու անտարբեր  
նայեց խոտոյի վրա և գլուխը ծռելով շարունակեց գրել ինչ վոր  
մի բան :

— Ի՞նչ է, երեսիդ գրկո՞ւմ ես ազատութիւնից, — մոայլ կեր-

պով հարցրեց յերեխայի կողքին կանգնած մի ուրիշ հանքափոր :  
— Յես չեմ գրկում , կարիքն ե գրկում :

— Յերեխային վերցրու փոքրիկ ջրհանի վրա ,— ասաց գրասենյակային ծառայողը հանքափոր Ֆինոգենովին :

Ֆինոգենովը շեղակի նայեց յերեխային :

— Ի՞նչ եք նրան ինձ տալիս : Յես ի՞նչ անեմ նրա հետ :

— Նո՛ւ , նո՛ւ , գնա՛ ու մի՛ խոսի :

— Գնա . . . ինքդ գնա , յեթե ուզում ես : Ձեզ են ե , վոր ամեն բան ետան լինի , մրմուռաց Ֆինոգենովը հողի խորքը տանող բացվածքին մոտենալով :

Յերեխան լուռ հետևեց նրան :

Նրանք մոտեցան հանքարերնի քառակուսի բացվածքին և մտան շղթաներից կախված վանդակի մեջ :

— Նո՛ւ , շարժվիր , ի՛նչ ես բերանդ բաց արել . . . բղավեց Ֆինոգենովը յերեխայի վրա , յերբ վանդակը ցնցվեց ու կանգ առավ : Յեվ նրանք գնացին լուռթյան ու խավարի միջով , ծովելով ու գլուխը խոնարհելով , վորպեսզի չխփվեն շերտերը պահող փայտյա նեցուկներին :

Ահա նրանք հասել են իրենց տեղը :

— Տես , թե ի՛նչ եմ ասում , Սենկա ,— խոսեց Ֆինոգենովը ,— կանգնիր և առաջ դու ճոճիր : Ինչքան ես ճոճում , հաշվիր : Հենց վոր հարյուրի հասար , ինձ կանչիր , իսկ յես մի քիչ քնեմ :

Սենկան ծովեց , շոշափեց ու գտավ ջրհանի կոթը , ու ջանք թափելով ճոճեց :

— Մե-եկ ,— ասաց Սենկան , գլալով թե ինչպես ծակ կոչկից սառը ջուրն իր վոտներն ե լցվում : Յեվ Սենկան սկսեց ճոճել , վոչինչ չնկատելով իր առաջ : Յերբեմն նա չփոթում եր հաշվիլը , հանկարծ ուշքի գալով շտապ կանգ եր առնում վորևե թվի վրա և նորից սկսում եր միապաղաղ ու միախար հաշվել : Նա արդեն վաղուց եր հարյուրն անցել : Ձուրը միշտ բաձրանում եր : Ժամանակն անցնում եր , վոտներն արդեն ջրի մեջ էյին : Սենկան ել ուժ չունեի ճոճելու . . . :

— Քեռի . . . ել չեմ կարող աշխատել ,— լուռթյան մեջ տարածվեց Սենկայի ձայնը :

Ձուրը վեր ու վեր եր բարձրանում , թաց վարտիքը կպել եր մարմնին :

— Նո՛ւ , ինչո՞ւ յես վնասում : Ինչքան ջուր ե հոսել . . . — ամուր պպտակը խլացրեց Սենկայի աջ ախանջը :

— Ի՞նչ ես կանգնել , գնա՛ :

Սենկան տեղավորվեց մանր , խոնավ ածուխի կույտի վրա ու պառկեց այնտեղ : Ածուխը մի քիչ նստեց : Սենկան ծոցից հանեց խոնավությունից խմոր դարձած մի կտոր սև հաց ու սկսեց ուտել : Ձեռները , վոտները , մեջքը բութ ու համառ ցավում էյին :

## § 19 ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ՊԱՅԻԱՐԵԼ

Ռուսաստանում ֆաբրիկներն ու գործարաններն մշտական ավելանում էյին : Բանվորների թիվն աճում եր : Ստեղծվում եր նոր դասակարգ , բանվորների գասակարգը , վորպիսին չկար ճորտապիրական Ռուսաստանում :

Կարիքն ու տաժանակիր աշխատանքը բանվորներին մղում էյին պայքարելու կեղեքիչ-կապիտալիստների դեմ : Յերբ բանվորների դրությունն անտանելի ծանր եր դառնում , նրանք գործադուլ էյին կազմակերպում : Բանվորներն աշխատանքը թողնում էյին և հայտարարում աիրոջը , վոր գործադուլը չեն ընդհատի , մինչև վոր նա չկատարի իրենց պահանջը : Նրանք սովորաբար պահանջում էյին ավելացնել աշխատավարձը , կրճատել բանվորական որը , նվազեցնել տույժերը , բարելավել այն բնակարանները , վորոնց մեջ ապրում էյին բանվորները :

Առաջին խոշոր գործադուլներն սկսվեցին Պետերբուրգում (Լենինգրադում) : Հետո բռնկեցին նաև Մոսկվայում , Ուֆայում , Սարկովում , և այլ քաղաքներում : 1878-ից մինչև 1880 թվականը , 3 տարվա ընթացքում Ռուսաստանում յերեսուներե ավելի գործադուլներ տեղի ունեցան , վորոնք ընդգրկեցին 35 հազար բանվոր :

Բանվորներն այն ժամանակ դեռ իրենց կուսակցությունը չունեյին : Դրա համար ել առաջին գործադուլներն անց էյին կենում անհամերաշխ , առանց ղեկավարության : Կապիտալիստները վոտսիկանության և զորքի ոգնությամբ հեշտությամբ ճնշում էյին այդ գործադուլները :

Սակայն բանվորները շուտով հասկացան , վոր ֆաբրիկատերերի դեմ մղվող պայքարում հարկավոր ե , վոր բոլորը միասին , համերաշխ ու կազմակերպված դուրս դան : Բանվորները միշտ ափելի ու ավելի էյին հասկանում , վոր կեղեքիչների դեմ մղվող

կազմակերպված սրայբարի միջոցով միայն նրանք կկարողանան բարելավել իրենց կյանքը:

§ 20. ՄՈՐՈՉՈՎՅԱՆ ԳՈՐԾԱՂՈՒԼԸ

Բանվորների սրայբարի առաջին տարիներում ամենամեծ ու հիշատակելի գործադուլը մորթողական գործադուլն էր 1885 թվին, Որեխովո-Չուլիսյում: Ահա թե ինչ է պատմում այդ գործադուլի մասին նրա զեկավարներից մեկը, բանվոր-ջուլճակ Մոյսեյենին:

— Յես աշխատում եյի Որեխովո-Չուլիսյում, Մորթովի Փարբիկայում: Այնտեղ խիստ կարգեր կային, տույժերով խեղճում էյին, յուրաքանչյուր քայլափոխում պակաս էյին հաշվում աշխատանքը: Որակն 16—17 ժամ էյինք աշխատում: Հենց վոր մի քիչ հիվանդանայիր—խողոց էյին չպրտում: Հենց վոր հասակ առնեյիր, մի քիչ թուլանայիր—չան նման փողոցի ճանապարհն էյին ցույց տայիս:

Բանվորի կյանքը տաժանակիր աշխատանք էր: Ֆարբիկը լիքն էր լրտեսներով և վոստիկաններով:

Ամեն մի խորամանկութան դիմում էյինք՝ բանվորութան մեջ հեղափոխական աշխատանք կատարելու համար: Պատահում էր, վոր բանվորները համարվում էյին ծխելու, ժողովուրդը լցվում էր, ծուխ ու մութ, շնչել չես կարող: Իսկ մենք բանվոր Վոլկովի հետ վերցնում ենք վորևե թերթ, ինչ վոր պատահեր, և իրր թե կարդում ենք: Բայց իրականութան մեջ մեզանից էյինք ասում:

— Մինչև յե՞րբ դուք պիտի համբերեք այս տաժանակիր աշխատանքը: Չե՞ վոր տերը կշտացել է մեր արյունից, չուտով սրայթելու յե, մենք հո վոչխար չենք:

Բոլորը կանդնել, շնչառությունը պահած լսում են ու դարձանում:

— Ի՞նչ լավ են հիմա թերթերում դրում: Ի՞նչ ժամանակներ են յեկել: Անխաթմիչ, եղ դու վո՞նց ես մթության մեջ տառերը ջուրում—հարցնում են ինձ:

Ինչպես պետք է ջուրիս, յերբ թերթը թարս ես բռնել: Ահա այսպիսով մենք բանվորությանը բարձրացրինք:

Ութը հազար հոգի մեկ մարդու նման գործը թողին: Սկսվեց գործադուլը: Դա 1885 թվի հունվարին էր: Ֆարբիկը կանդ առեց: անմիջապես յեկան իշխանավորները, կազակներ ու գորք բերին:

Բանվորները բղավում էյին—

— Քարուքանդ կանենք Փարբիկը և վերջ կտանք:

Հունվարի 11-ին հազարավոր ջուլճակներ փողոց դուրս յեկան: Նրանք գնում էյին առանց դենքի, խաղաղ: Առաջից գնում էր Վոլկովը՝ կարմիր դրոշը ձեռքին: Նահանգապետի տանը հասնելով գործադուլավորներն իրենց ներկայացուցիչներին ուղարկեցին բանակցությունների համար, ժողովուրդը խաղաղվեց: Վոլկովն առաջ անցավ և հանձնեց ջուլճակների պահանջների. տետրակո: Գործադուլավորները պահանջում էյին աշխատավարձի բարձրացում, տույժերի կրճատում<sup>1</sup>, ընտրովի ավագների թույլտվություն:

— Ձերբակալել դրան,—հրամայեց նահանգապետը:

Ձինվորները չըջապատեցին ջուլճակների ներկայացուցիչներին: Վոլկովը չչփոթվեց:

— Թե կործանվելու յենք, բոլորս միասին կործանվենք: Կամ յես ամենքի համար, կամ ամենքն ինձ համար,—կանչեց նա բանվորներին:

Վրա հասան կազակները՝ Նրանք ամբոխից մոտ հարյուր հոգու քչեցին ու փակեցին ճաշարանում: Իսկ դռան մոտ լցրած հրացաններով զինվորներ դրին:

— Բոլորս, բոլորս,—պատասխանեցին բանվորները և վրա տվին ազատելու ձերբակալվածին:

Տեսնում եմ, վոր հարկավոր է ազատել այդ ընկերներին, թե չի գործադուլը կտասպարվի:

Եղ ժամանակ ինձ մոտ են գալիս մեր դարձարանային յերեսխաները և փսփսոււմ.—

— Քեոի, տան մյուս կողմից պահակ չկա:

Պտույտ տվինք տան հետևը, տեսանք, ճիշտ է, պահակ չկա: Իոները փակված են, ծանր, կաղնե դռներ: Յես փորձեցի ուսով տեղահան անել դուռը, տեսա իմ բանը չի:

Նորից յերեսխաները կանչում են.—«Քեոի, ենտեղ նստարան կա, նստարանով խփիր»: Յերեսխաների հետ միասին բարձրացրինք նստարանը, ճոճեցինք մեր ձեռքերում ու տվինք, դուռը բացվեց:

<sup>1</sup> Այդ ժամանակ կազակները արդեն դարձել էյին վոստիկանական պարտականությունների կատարողներ: Յարական կառավարությունը նրանց դարձրել էր իր պահապանները, և այդ ամսթախի, դահճային ծառայության համար նրանց շատ հող էր տվել:

Յերեկաները «ուռա» կանչեցին և բանտարկվածներն սկսեցին դուրս թռչել:

Մեկ ել տեսնեմ բոլոր բանվորներն ես կողմն են վազում, իսկ զինվորները նրանց հետևից: Ձինվորներն ընկել եյին բանվորներէ մրա ու ծեծում: Վազեցի դեպի զինվորները և ինձ անձանութ ձայնով բղավում եմ:—

— Վո՞նց, հարազատնե՞րին... ծեծել... հարազատներե՞ն ծեծել:

Մեկ ել մի զինվոր ուժերը հավաքած սվինն ուղղակի կրծքիս տվեց:

Յես կիսամուշտակ եյի հաղել: Կարողացա բռնել սվինը, հրաշածը խլել և խփել սառույցին: Կոթը պոկվեց: Յես զինվորին դեն հրեցի և նորից ինձ անձանութ ձայնով կանչեցի:—

— Մեփական յեղբայրներին ծեծե՛լ...:

Իմ աղաղակից թե զինվորները և թե բանվորները հետ քաշվեցին: Այդպիսով յես նրանց մեջ անցք բաց արի և գնում-գալիս ու խոտում եյի:—

— Մեկը մյուսին ձեռք միք տա, յեղբայրներ՛: Չե՞ վոր դուք հարազատներ, արյունակիցներ եք:

Յերեկոյան հանրակացարանում հանվում եմ: Տեսնեմ շապիկս կրծքիս վրա կոշտացել է: «Ճհե, եդ նրա ովինիցն ե»: Թե վերքն է չորացել, թե արունն է չորացել շապիկիս վրա, իսկ չե՞ վոր այն ժամանակ, յերբ նա ինձ խփեց, յես իսկի բռն ել չզղացի:

Մորոզովի գործադուլն ամբողջ Ռուսաստանում թնդաց վորպես նախահեղափոխական վորոտ: Մի շարք քաղաքներում— Իվանովո-Վոզնեսենակում, Տվերում—բանվորները լսելով Մորոզովի ջուլհակների գործադուլի մասին, նույնպես գործադուլ արին:

Այդ բոլորը ցարական կառավարութեանն ստիպեց զիջումներ անել բանվորներին: Նա հարկադրված եր որենքներ հրատարակել, վորոնք մի ջիչ բարելավեցին բանվորների դրությունը: Տույժի համար չափ սահմանվեց: Փարբիկատերերին և գործարանատերերին առաջարկվեց ամսական վոչ պակաս քան 2 անգամ բանվորներին աշխատավարձ տալ: Որինականացվեց բանվորների իրավունքը՝ ցանկացած ժամանակ քանդելու տիրոջ հետ կնքած պայմանագիրը:

Ցարական կառավարությունն, իհարկե, հանդիսա չթողեց գործադուլավորներին: Բազմաթիվ բանվորներ արտաքսվեցին: Ամենից ավելի հեղափոխականորեն տրամադրված բանվորները բանտ նետվեցին: Գործադուլի կազմակերպիչը վոստիկանութեան հսկողութեան տակ արսորվեց Արխանգելսկ նահանգը:

Սակայն Մորոզովի գործադուլը հսկայական նշանակութուն ունեցավ բանվորների հետագա պայքարի համար: Բանվորները տեսան, վոր իրենք մեծ ուժ են՝ յեթե միաբան ու համերաշխ պայքարեն իրենց կեղեքողների դեմ:

Լենինը այսպես է գրել Մորոզովի գործադուլի մասին.— «Կառավարությունը վախեցավ, զիջեց: Բանվորները պետք է իրենց դրությունը թեթևացնելու համար շուրհակալ լինեն վոչ թե իշխանութեանը, այլ իրենց ընկերներին, վորոնք պայքարեցին ու կարողացան վերացնել այլանդակ ճնշումները»:

Գործադուլը բանվորութեանը հասկացրեց, վոր ճնշումներն ու աշխատանքի ծանր պայմանները պետք է վերացնել վոչ միայն իրենց ֆարբիկում, այլև բոլոր մյուս ֆարբիկներում: Տարբեր քաղաքների բանվորներն առաջին անգամ ընկերական կապ հաստատեցին միմյանց միջև:

Մորոզովյան գործադուլը ցույց տվեց, վոր մասսաներին հարկավոր են այնպիսի առաջավոր բանվոր-հեղափոխական ղեկավարներ, ինչպես Մոյխեյսենկոն և Վոլկովը: Հատկապես այդպիսի առաջավոր բանվոր-հեղափոխականները կարող են համախմբել բոլոր բանվորներին և նրանց իրենց հետևից տանել:

Գործադուլը ցույց տվեց, վոր բանվորները գնում են իրենց ղեկավարների հետևից, կանգ չառնելով նույնիսկ զինված ուժի առաջ:

## § 21. ՊԱՅԳԱՐՆ ԱՃՈՒՄ Ե

1891—1900 թվերի տասնամյակում ցարական Ռուսաստանում արագութեամբ աճեցին նոր խոշոր գործարաններ ու ֆարբիկներ: Չտեսնված չափերով հարստանում եյին կապիտալիստները:

Բանվորների դրությունը շատ ծանր եր: Աշխատավարձը շատ ցածր եր (այդ ժամանակ ջուլհակներն ամսական ստանում եյին վոչ ավելի քան 12—15 ռուբլի): Ավելի ու ավելի յեր սրվում բանվորների և կապիտալիստների պայքարը: 1882 թվից մինչև 1886



Թիվը, հինգ տարվա ընթացքում, գործադուլ արին 80 հազար բանվոր, իսկ 1895 թվից մինչև 1899 թիվը, 5 տարվա ընթացքում, գործադուլ արին մոտ կես միլիոն բանվոր: Բանվորների գործադուլները մասսայական (բաղմամարդ) դարձան: Կապիտալիստների դեմ առաջին հերթին պայքարում էլին խոշոր ֆաբրիկների ու գործարանների բանվորները: Խոշոր ֆաբրիկներում ու գործարաններում գործադուլները լինում էլին կազմակերպված և ավելի օժեղ ու կայուն:

Պայքարն ավելի ու ավելի յեր համախմբում բանվորներին: Բանվորներն արդեն ունեցին իրենց առաջին հեղափոխական կազմակերպությունները—ընդհատակյա խմբակները և «պայքարի միությունները»: Դրանցից հետո կազմակերպվեց հեղափոխական բանվորական կուսակցություն:

Հեղահատե ավելի ու ավելի յեր բորբոքվում բանվորների դասակարգային ատելությունը դեպի կեղեքիչները: Նրանք տեսնում էլին, վոր այդ պայքարում ցարական կառավարությունը միշտ պաշտպանում է կալվածատերերին ու կապիտալիստներին, բանվորներին դեմ դորք ու վտարկանություն է ուղարկում: Բանվորները համոզվում էլին, վոր պետք է պայքարել վոր թե առանձին կապիտալիստների, այլ ցարական ամբողջ կարգերի դեմ:

Այդ տարիներին բանվորներն գործադուլներ շատ էլին լինում: Սակայն դրանցից ամենանշանավորները—Պետերբուրգի ջուլհակների գործադուլն էր, Ռուսիայի գործադուլը (նույնպես Պետերբուրգում) և Ռոստովի 1902 թվի գործադուլը:

## § 22. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԶՈՒԼՀԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼ

Ջուլհակների գործադուլը տեղի ունեցավ Պետերբուրգում (Լենինգրադում) 1896 թվին: Գործադուլն սկսվեց գործվածքային ֆաբրիկներից մեկում, հետո նրան միացան քաղաքի բոլոր գործվածքային ֆաբրիկների բանվորները: Միանգամայն գործադուլ արին 35 հազար հողի: Գործադուլն ղեկավարում էր «Բանվոր դասակարգի պայքարի և Աղատագրություն Պետերբուրգի միությունը»: Գործադուլավորները յերկար ու համառ դիմացան:

Յարական Ռուսաստանը դեռ յերբեք չէր տեսել, վոր բանվորները ֆաբրիկատերերի դեմ դուրս դային միանգամից բազմաթիվ ֆաբրիկներում, այն էլ համերաշխ, մեկ մարդու նման, մեկը մյուսին պաշտպան կանգնած: Վտարկանու-

թյան սպառնալիքները չէլին վախեցնում բանվորներին: Մետաղագործ բանվորները փող հավաքեցին գործադուլավորների համար:

Գործադուլի մասին իմացան նաև արտասահմանում:

Գործադուլին ողնեցին անգլիական բանվորները՝ գործադուլավորներին փող ուղարկելով: Ռուսաստանի բանվորներն առաջին անգամ իրենց պայքարն ընդհանուր թշնամու—կապիտալիստների դեմ կապեցին մյուս յերկրների բանվորության պայքարին:

Ֆաբրիկները մի քանի ամիս կանգ առան: Ֆաբրիկատերերը մեծ կորուստներ ունեցան: Յարական կառավարությունը և ֆաբրիկատերերը վախեցան բանվորների գործությունից:

Պետերբուրգի ջուլհակները Մորոզովի ջուլհակների նման ցարական կառավարությունն ստիպեցին զիջումներ անել: 1897 թվի հուլիսի 2-ին հրատարակվեց մի որենք, վորը 13 ժամյա բանվորական որսի փոխարեն 11 1/2 ժամյա բանվորական որ սահմանեց:

Ջուլհակների հաղթանակը վողեորեց մյուս քաղաքների բանվորներին: Ամբողջ յերկրում բանվորական շարժումն սկսեց աճել ու ծավալվել:

## § 23. ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԵՎ ՌԲՈՒՆՈՎՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1901 թվին բռնկվեց Ռբուխովի գործադուլը:

Մայիսի մեկի առավոտյան, յերբ Պետերբուրգի գործարանների սուլիչները բանվորներին գործի էլին կանչում, Ռբուխովի Թնդանովի գործարանի մեկ ու կես հազար պրոլետարներն աշխատանքի դուրս չեկան: Գործարանը պատկանում էր ցարական կառավարությանը: Գործարանի պետ դեներալ Վլասյեվը հրամայեց հեռացնել բազմաթիվ բանվորներին:

Այն ժամանակ բանվորական ընդհատակյա կուսակցական կազմակերպությունը վորոշեց վտառի հանել վողջ գործարանը:

— Դեպի գործադուլ, ընկերներ, — ասում էր ընդհատակյա աշխատող Անդրեյեվն առաջավոր բանվորներին, — դուրս բերեք բոլոր բանվորներին, պահանջեցեք, վոր ազատեն մայիս մեկի առթիվ հեռացվածներին:

Մի ժամից հետո բոլոր վեց հազար բանվորները մի մարդու նման գործադուլ արին: Գործադուլ արին մայիս մեկը տոնելու համար բանվորներին հալածելու դեմ: Դա նորություն էր նույ-

նիսկ Պետերբուրգի մետաղագործների առաջադիր ջոկատի համար:

— Պինդ կա՛ց, ընկեր Անդրեյեվ, մի հուսահատվիր, կպաշտպանենք մեր ընկերներին: Թող չխանդարեն մեր տոնը, —լավում երամեն կողմից:

Յեվ բանվորները շարժվեցին դեպի գործարանի վարչութչուներ:

— Կանչեցեք իրան՝ պետին, Վլասյեվին կանչեցեք, — համառութչամբ պահանջում էյին բանվորները: Բանվորների առաջ յեբևաց գեներալ Վլասյեվը: Արագ և հաստատուն քայլերով նրա առաջ կանգնեց Անդրեյեվը:

— Մենք պահանջում ենք, —ասաց Անդրեյեվն այնպես, վոր նրան կարողանա լսել բոլոր վեց հազար հոգին, — աշխատանքի ընդունել մայիս մեկի գործադուլի առթիվ՝ բոլոր հեռացվածներին:

— Մենք պահանջում ենք ազատել ձերբակալվածներին:

— Մենք պահանջում ենք մայիս մեկը սահմանել վորպես տոն բոլոր բանվորներին համար:

— Մենք պահանջում ենք 8 ժամյա բանվորական օր:

Գեներալը տանել չեր կարողանում բանվորներին, սակայն հասկանում եր, վոր գործը լրջանում է: Դրա համար ել գեներալք խորամանկութչյան դիմեց:

— Յես համաձայն եմ, —մեղմ ասաց նա, — բանակցութչուների համար ընտրեցեք ձեր ներկայացուցիչներին:

Այդ ժամանակ նրա հրամանով ժանդարմները զնացին կազակներին ողնութչյան կանչելու: Գեներալին հարկավոր եր ժամանակը ձգձգել, վորպեսզի կազակները վրա հասնեն և մեկ հարվածով ճնշվի գործադուլը: Սակայն վորքան մեծ յեղավ գեներալի դարձանքը, յերբ կազակները հանդիպեցին բանվորների վճռական հակահարվածին: Բանվորները վորոշեցին ամուր պաշտպանել իրենց պահանջները: Նրանք կազակներին քարերով դիմավորեցին:

Կազակներին ողնութչյան հասան զինվորները: Հրամանատարը բանվորների վրա կրակելու հրաման տվեց: Յեվ ահա— 1901 թվի մայիսի 7-ին— սկսվեց Որուխովի գործարանի բանվորների հուշակավոր ինքնապաշտպանութչունը:

Յեվ կազակների ու զինվորների վրա թափվեց քարերի, ավաղի, փայտի, յերկաթի պողպատի, ծանր մեքենաների կտորտանք-

ների կարկուտ: Գործարանի բոլոր գլխավոր անցքերը մի աղբութարթում ծածկվեցին բարիկաղներով<sup>1)</sup>:

Ամենուրեք հնչեց Անդրեյեվի համարձակ մարտակոչը:

— Մեզ հետ են Պետերբուրգի բոլոր բանվորները, — ասում եր նա իր ընկերներին:

Յեվ Անդրեյեվը ճիշտ եր ասում: Որուխովյիներին ողնութչյան հասան հարևան գործարանների բանվորները: Ծուտով 20 հազարից ավելի բանվորներ բոլոր կողմերից քարեր էյին տեղում կազակների և զինվորների վրա:

Յարական գործերը հետ քաշվեցին: Բանվորների պահանջները ժամանակավորապես բավարարվեցին: Սակայն յերկու ամսից հետո կառավարութչունն Որուխովի բանվորներից հետ խլեց նրանց նվաճումները: Նա վայրենի կատաղութչյամբ վրեժխնդիր յեղավ Մայիս մեկի իր ամոթալի պարտութչյան համար: Յերկու բանվոր տաժանակիր աշխատանքի ուղարկվեցին Սիբիր: Մոտ 30 բանվորի բանտ նստեցրին:

Որուխովի ինքնապաշտպանութչունը միշտ վառ կմնա բանվորների հիշողութչյան մեջ: Դա առաջին գործադուլն եր, յերբ բանվորներն առաջին անգամ պայքարում էյին Մայիսի մեկի համար, 8 ժամյա բանվորական օրվա համար: Որուխովի գործադուլը ցույց տվեց ամբողջ աշխարհի բանվորներին, թե ինչպես ե աճել ուստական պրոլետարխատը: Նա քարով սկսեց իր առաջին զինված պայքարն իր թշնամիների դեմ: Գարը արթնացող բանվորների առաջին զենքը յեղավ:

§ 24. ՌՈՍՏՈՎԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

1902 թվին ամբողջ Ռուսաստանով մեկ բռնկվեց Ռոստովի Նչանավոր գործադուլը:

Դա սկսվեց Վլադիկավկազի յերկաթուղու գլխավոր արհեստանոցների կաթսայագործների գործադուլով: Արհեստանոցների բանվորների դրուխունը շատ ծանր եր: 10-ժամյա շատ ծանր աշխատանքի համար սեւագործ բանվորն ստանում եր 60 կոպեկ: Որական մի ուուրլի ստանալու համար պետք եր 14 ժամ աշխատել:

1) Բարիկադ.— սյուներից, փայտերից, տակառներից, քարերից և այլ առարկաներից շինված պատնեշ: Բարիկաղներ գործադուլում են փողոցային կռիվների ժամանակ:

Աշխատանքը հյուժող և քայքայիչ եր: Տուգանքներն ու պանդան գանձումները կրճատում էյին առանց այն ել վողորմելի աշխատավարձը: Մյուս կողմից ել վարպետները կուպիտ էյին վարվում բանվորների հետ:

Բանվորների դժգոհությունն որ-որի աճում եր: Բանվորին ծեծող մի վարպետի կուպիտ վարմունքը համբերությունից հանեց բանվորներին:

— Սուլեցեք:

Բանվոր Անատոլի Սաբինոն մի խումբ յերիտասարդ բանվորների հետ նետովեց հնոցի բաժինը: Անհանդիստ սուլոցներ ավին: Բայրը բաժիններում հնչում եր.—

— Թողեք աշխատանքը:

Գործադուլավորների հազարավոր ամբոխի միջից դուրս յեկավ յերիտասարդ բանվոր բոլշևիկ Իվան Ստավսկին: Նա կազմակերպված ձևով պայքարելու կոչ եր անում:

— Հարկավոր ե կապ պահպանել բանվորական կուսակցության Դոնի կոմիտեյի հետ: Այսոր վոչ վոք չպետք ե աշխատանքի անցնի: Վաղն առավոտյան հավաքվենք այստեղ գործարանի մոտ, գործադուլային կոմիտե ընտրենք ու ջննենք մեր պահանջները— ատում եր նա:

Մյուս որ առավոտյանը բանվորները նորից հավաքվեցին գործարանի մոտ: Նրանց հետ միասին յեկան նրանց կանայք ու յերեխաները: Բանվորական կուսակցության Դոնի կոմիտեյից հռետորներ յեկան:

Բանվորները գործադուլային կոմիտե ընտրեցին: Մշակեցին իրենց պահանջները:

Բանվորները պահանջում էյին.— Ծ-ժամյա բանվորական որ մտցնել, բանվորների յերեխանների համար ձրի դպրոցներ բաց անել: Բանվորները պահանջում էյին նաև ցարական իշխանության ասպարւումը:

Ռոստովի Փարրիկների ու գործարանների բանվորները միացան յերկաթուղային արհեստանոցների բանվորների գործադուլին: Վոստրիկանությունն անկարող եր ձնչել բանվորների հզոր յելույթը:

Հաջորդ որը 30 հազար բանվորներ հավաքվեցին քաղաքից դուրս: Բանվորական պատվիրակությունը վերադառնալով նահանգապետի մոտից լուր բերեց, թե պետն առաջարկում ե.—

— Հանձնել գործադուլի բոլոր ղեկավարներին: Աշխատանքի անցնել: Յեվ միայն դրանից հետո իշխանությունը կհամաձայնվի ջննել բանվորների պահանջները:

— Նո՛ւ, ի՞նչ պիտի անենք, ընկերներ՛, — հարցնում եր Իվան Ստավսկին, — համաձայն եք:

— Վոչ, — միաբերան պատասխանում էյին բանվորները, — կշարունակենք պայքարել: Կորչի՛ ցարական իշխանությունը:

Մեկ ել հանկարծ, ձիավոր կազակները հարձակվեցին բանվորները վրա: Բանվորների մեջ իրարանցում առաջացավ: Իվան Ստավսկին անվրդով ե, — պառկեցեք, ընկերներ՛, — ասում ե նա:

Բոլորը փոխեցին դեմնին: Կազակները կանգ առան տանյակ հազարավոր բանվորների առաջ, վորոնք վորոշել էյին մեռնել ձիերից վոտխնակոխ լինելով, սակայն չփախչել:

Միտինդը շարունակվեց ամբողջ որը: Կազակներն սպասում էյին: Իսկ յերբ բանվորները վերադառնում էյին տները, առանց զբուշացնելու՝ նրանց վրա կրակ բաց արին: Յ բանվոր անմիջապես սպանվեցին, իսկ 12 հոգի ծանր վիրավորվեցին: Գործադուլային կոմիտեն ձերբակալվեց: Գիշերով ժանդարմները մտնում էյին բնակարանները, ձերբակալում և տանում էյին ամենից ավելի ակախվ հեղափոխական բանվորներին:

Գործադուլը ջախջախվեց: Նոյեմբերի 23-ին բանվորները աշխատանքի անցան:

Ռոստովի գործադուլը հսկայական նշանակություն ունեցավ: Դա բանվորների առաջին համաքաղաքային գործադուլն եր Ռոսսաստանում: Դա բանվորների ուժի առաջին ցույցն եր՝ կուսակցության ղեկավարությամբ: Բանվորներն առաջին անգամ գործադուլի դուրս յեկան, իրենց դրոշակները վրա գրելով.— «Կորչի ինքնակալությունը»:

## § 25. ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԸ ԲԱԳՎՈՒՄ

1903 թվի ամառը բռնկվում ե Բաղվի նավթային բանվորության խոշոր գործադուլը, վորը կարճ ժամանակում տարածվելով բնդգրկում ե նաև Թիֆլիսի, Բաթումի, Բուխարայի և Պաշուրի (այժմ Սաալինիսի) բանվորությունը:

Այնուհետև, 1904 թվի դեկտեմբերին բռնկվում ե Բաղվի՝ իր ուժգնությամբ, թափ ու ծավալով աննախընթաց գործադուլը: Մոտ հիսուն հազար բանվորներ մարտական միաձուլությամբ

Թողնում են աշխատանքը, իրենց վճռական պահանջներն առաջադրելով հանքատերերին:

Գործադուլը ճնշելու բոլոր միջոցներն ապարդյուն են անցնում և վերջ է վերջո նախկինները ստիպված են լինում ընդունել գործադուլավորների պահանջը՝ կոլեկտիվ պայմանագրեր կնքելու, աշխատանքի ժամերը կրճատելու, աշխատավարձը - բարձրացնելու, ապահովություն և այլնի մասին:

Բազմի բանվորության 1904 թվի դեկտեմբերյան գործադուլն իր հաջողական վախճանով մի փայլուն էջ է Ռուսաստանի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի պատմության մեջ:

§ 26. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊՍՅՒՄՈՐԸ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Որոշումով և Ռուստովի գործադուլներն արդեն ղեկավարում էր բանվորական կուսակցությունը՝ նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ:

Կուսակցությունը միանգամից չձնվեց: Սկզբում խոշոր արդյունաբերական քաղաքներում բանվորական հեղափոխական խմբակներ առաջացան: Առանձնապես շատ խմբակներ կային Պետերբուրգում (Լենինգրադում), ուր գտնվում էին ամենամեծ գործարաններն ու Փարրիկները: Ոմբակները մեծ աշխատանք էին կատարում բանվորության մեջ և հաճախ ղեկավարում էին գործադուլները:

Այդ ժամանակ, 1893 թվի աշնանը, Պետերբուրգում սկսեց աշխատել Վ. Ի. Լենինը: Նա այն ժամանակ 23 տարեկան էր: Վլադիմիր Իլյինը միանգամից իր վրա դարձրեց բանվորների ուշադրությունը: Նա նրանց ապշեցնում էր բանվորական գործին իր նվիրվածությամբ և իր խոր գիտելիքներով: Լենինը շուտով դարձավ Պետերբուրգի հեղափոխական խմբակների ղեկավարը:

Հեղափոխական բանվորները 1898 թվին միացան և բանվորական կուսակցություն կազմակերպեցին:

§ 27. ՆԻԿՈՂԱՅ ՊԵՏՐՈՎԻՉԸ  
(Բանվորի պատմաճը)

Բանվոր Կնյազևիլը պատմում է, թե Լենինն ինչպես սկսեց աշխատել բանվորների մեջ:

— Նավահանգստում, ուր յես փականագործ էյի, բազմաթիվ

հեղափոխակ... բանվորներ կային: Հեղափոխական խմբակը յերեկոյան գաղտնի կերպով հավաքվում էր իմ մոտ:

Մի անգամ յես իմացա, վոր մեր խմբակը Նիկոլայ Պետրովիչ անունով նոր ղեկավար կունենա:

— Դա լավագույն ղեկավարներից մեկն է, — ասացին ինձ:

Նշանակված ժամին մեկը թակեց մեր դուռը: Դուռը բաց ահելով յես տեսա փոքրիկ, շիկահեր միբուքով, կլոր դեմքով և խորթափանց աչքերով մոտ յերեսուն տարեկան մի տղամարդ: Նա աշնանային վերարկու ուներ հագին, բարձրացրած ոճիքով, թեև ամառ էր, և մինչև աչքերը քաշած գլխարկ: Ներս մտնելով սենյակը նա հարցրեց.—

— Այստե՞ղ ե ապրում Կնյազևիլը:

— Այո՛, Կնյազևիլը յես եմ, — պատասխանեցի:

Են ժամանակ նա տվեց իր անունը:

— Յես Նիկոլայ Պետրովիչն եմ:

— Մենք ձեզ էյինք սպասում, — ասացի յես:

Նիկոլայ Պետրովիչն ասաց, վոր նա յերկար ժամանակ թափառում էր փողոցներում, վորովհետև ցարական լրտեսները հետևում էյին նրան:

Մենք մտանք կիսամութ սենյակը: Բոլորն արդեն հավաքվել էյին:

Նիկոլայ Պետրովիչը մեզ բացատրեց, թե ինչ պիտի անենք խմբակում: Նա այնքան վստահ ու համոզեցուցիչ էր խոսում, վոր չէր կարելի նրան չհավատալ: Բանվորները նրան լսում էյին մեծ ուշադրությամբ: Նա մեզանից հարցրեց, թե վո՞րտեղ ենք աշխատում և ի՞նչ ենք կարդում, թե գիտե՞նք արդյոք, ի՞նչի համար և ի՞նչպես պետք է պայքարել: Հետո նա մեզ պարզ ու հասկանալի բացատրեց, վոր մենակ վոչինչ չի կարելի ձեռք բերել: Միայն այն ժամանակ, յերբ մենք համախմբվենք, կղառնանք այնպիսի ուժ, վորից կսարսափեն տերերը:

Բանվորներին անմիջապես դուր յեկավ, վոր Նիկոլայ Պետրովիչն այնպես պարզ ու հասկանալի յե խոսում:

Եզ որվանից հետո Նիկոլայ Պետրովիչը հաճախ էր գալիս մեզ մոտ: Նա պատմում էր, թե մյուս յերկրների բանվորներն ի՞նչպես են պայքարում լավ կյանքի համար, թե բանվորներն ի՞նչպես պետք է պայքարեն իրենց ազատագրման համար և նոր ձևով վերականգնեն բանվորների ու բոլոր աշխատավորների կյանքը:

Մենք սիրեցինք Նիկոլայ Պետրովիչին: Մենք անհամբերութեամբ սպասում եյինք նրա յուրաքանչյուր այցելութեանը: Յեթե վորեւէ բան մեզ անհասկանալի լիներ, մենք միմյանց ասում եյինք.—

— Կգա Նիկոլայ Պետրովիչը և կբացատրի:

Մի անգամ մենք սպասում եյինք Նիկոլայ Պետրովիչին, սակայն նա չեկավ: Կողմնակի կերպով յես իմացա, վոր Նիկոլայ Պետրովիչը մի ուրիշ խմբակում ել եր պարապում և այնտեղ ձերբակալվել եր:

Յես ի՛նչքան դարմացա, յերբ հետո, արդեն ծերութեան հասկում, հեղափոխութեանից հետո իմացա, թե ով եր Նիկոլայ Պետրովիչը: Իմ ուրախութեանը վերջ չկար: Չե՞ վոր Նիկոլայ Պետրովիչն ինքը Լենինն եր:

Յես հպարտանում եմ նրանով, վոր Լենինը մեզ հետ պարապել է գաղտնի խմբակում և վոր յես Լենինի աշակերտն եմ:

### § 28. ԼԵՆԻՆԸ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍՍԿՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ

Լենինը սովորեցնում եր, վոր բանվորները միայն դյուրացիների հետ միանալով կարող են տապալել ցարի և կալվածատերերի իշխանութունը: Սակայն դրա համար բանվորները պետք է կազմակերպվեն: Բանվորները պետք է իրենց մարտական կուսակցութեանն ունենան:

Բանվոր դասակարգը միայն իր կուսակցութեան ղեկավարութեամբ կարող է իր հետևից տանել աշխատավոր դյուրացիութեանը և տապալել ցարին ու կապիտալիստներին—սովորեցնում եր Լենինը: Կուսակցութեանը պետք է համախմբի ամբողջ յերկրի լավագույն, առաջավոր, դիտակից բանվորներին և ղեկավարի բանվորների ու նրանց ղառնակից դյուրացիութեան պայքարը:

Յեկ Լենինն իր վրա վերցրեց այդպիսի կուսակցութեան կազմակերպելը: 1895 թվին Պետերբուրգի բանվորական խմբակները միացան «Բանվոր դասակարգի ազատագրութեան պայքարի Պետերբուրգի միութեան» մեջ: Այդպիսի միութեաններ կազմակերպվեցին նաև մյուս քաղաքներում:

1895 թվի ղեկավարներին Լենինին բանտ նստեցրին, իսկ հետո արտերթին Սիբիր: Սակայն թե բանտից և թե արտերթիցից նա միշտ գրում եր իր ընկերներին: Լենինը գրում եր, վոր հասել է

ժամը, յերբ հարկավոր է բանվորական հեղափոխական կուսակցութեան կազմակերպել:

1898 թվի մարտին Մինսկ քաղաքում կայացավ բանվորական հեղափոխական խմբակների առաջին համագումարը: Համագումարը տեղի ունեցավ զաղտնի: Այդ համագումարը բանվորական կուսակցութեան սկիզբը դրեց:



Վ. Ի. Լենին

Այդ ժամանակ Վլադիմիր Իլիչը գտնվում եր Սիբիրի հեռավոր արտերթիցում, Մինսկի գավառի Շուշենսկոյե դյուրում, դրա համար ել չեր կարող ներկա լինել համագումարին:

Աքսորը վերջացնելով 1900 թվի ամբան Լենինը գնաց արտասահման:

Լենինը, ապրելով արտասահմանում, շարունակում եր ղեկավարել բանվորների պայքարը կապիտալիստները դեմ: Նա ընդհատակյա աշխատողներից<sup>1)</sup>, բանվորներից նամակներ եր ստանում, և նրանց խորհուրդներ ու ցուցմունքներ եր տալիս: Լենինի ղեկավարութեամբ հրատարակվում եր «Իսկրա» («Կայծ») թերթը: Այդ թերթի միջոցով Լենինն ու նրա կողմնակիցները բանվորներին սովորեցնում եյին, թե նրանք ինչի՛ համար և ի՛նչպես պետք է պայքարեն:

1). Ընդհատակյա աշխատող (սոցիալիստներ) — նշանակում է բուրժուազիայից զաղտնի աշխատող հեղափոխական:

«Իսկրա» թերթը դադանի կերպով փոխադրվում էր Ռուսաստան: Այստեղ այն տարածում էին Փարբիկներում ու գործարաններում: Լենինն այնպես կազմակերպեց աշխատանքը, Վոր բանվորներն սկսեցին գրել «Իսկրայում»:

«Իսկրայի» միջոցով Լենինը մեծ պայքար էր մղում ուժեղ բանվորական կուսակցություն ստեղծելու համար:

1903 թվից Լենինի ստեղծած բանվորական կուսակցությունը կոչվեց բոլշևիկյան, իսկ նրա անդամները—բոլշևիկներ:

### § 29. Ի. Վ. ԱՏԱԼԻՆ

Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը Լենինի լավագույն զինակիցն էր: Լենինի հետ միասին նա ստեղծել է բոլշևիկների բանվորական կուսակցությունը: Նա յերբեք չի հեռացել Լենինից: Լենինի



Ի. Վ. Ստալին

հետ միասին նա պայքարել է բոլոր նրանց դեմ, ովքեր ուզում էին բանվորներին տանել սխալ ճանապարհով:

Ցարական կառավարությունն առանձնապես հետապնդում էր ընկ. Ստալինին: 1902 թվին ընկ. Ստալինը ձերբակալվում է նրաստեղծում է Բաթումի բանտը: Այստեղ նա նստում է մինչև 1903 թիվը, վորից հետո նրան աքսորում են Սիբիր—Նովոյա-Ուզա գյուղը:

Բայց աքսորավայրը հասնելուց ընդամենը մի ամիս հետո Ստալինը փախչում է այդտեղից և նորից ձեռնամուխ է լինում հեղափոխական աշխատանքի:

1904 թվից սկսած մինչև 1913 թիվը Ստալինը յերեք անգամ ձերբակալվում է շարական ոխրանկայի կողմից և աքսորվում Սոլովչեգոսկի, Էսլոզդա, Նարբմ: Բայց ամեն անգամ էլ Ստալինը փախչում է աքսորից և անխոնջ կերպով շարունակում հեղափոխական պայքարը:

1913 թվին ցարական աստիճանավորները, դադադած Ստալինի փախուստներից, նրան աքսորում են Տուրուխանսկի յերկրամասի մի հեռավոր ու խուլ գյուղ—Կոտեյկա: Այդտեղ գիշերը վեց ամիս է տևում: Ընդամենը մի յերկու խրճիթ, թաղված ձյունի մեջ: Հարյուրավոր կիլոմետրներով յերկաթուղուց հեռու: Միայն տարեկան յերկու անգամ էր շոգենալ գալիս: Այդպիսի պայմաններում ապրում է Ստալինը մինչև 1917 թվի հեղափոխությունը:

Ստալինի ամբողջ կյանքը՝ դա համառ ու անշեղ պայքար է բանվորների ու գյուղացիների գործի համար:

Ստալինը շարունակում է Լենինի գործը: Նա մեր լենինյան Կոմունիստական կուսակցության և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդն է:

### § 30. ՅԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Ե ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻՆ

Ցարական կառավարությունը շուտով նկատեց, թե բանվորների վրա ինչ ազդեցություն են գործում բոլշևիկները:

Կառավարությունն անգթորեն հալածում էր բոլշևիկներին: Ձերբակալություն, բանտ, աքսոր, տաժանակիր աշխատանք, զնդակահարություն և կախաղան—այս բոլորը ցարական իշխանությունը գործադրում էր հեղափոխական բանվորների վերաբերմամբ: Բանվորների ու գյուղացիների շահերի համար մղվող պայքարում բազմաթիվ բոլշևիկներ սպանվեցին: Մորտովը, Կալինինը, Վորոշիլովը, Կազանովիչը, Ֆրունզեն, Չերժինսկին, Բուրնովը, Սվերդլովը և ուրիշները, բոլշևիկների մեջ լավագույններից լավագույնները բազմիցս ձերբակալվել, բանտ են նստել ու աքսորվել:

Սակայն ջնայած հետապնդումներին ու հալածանքներին, բոլշևիկները շարունակում էին համառ կերպով պայքարել բան-

վորներին և բոլոր աշխատավորներին ցարի, կապիտալիստների և կալվածատերերի լծից ազատելու համար: Նրանք բանվորներին պատրաստում էին պրոլետարական հեղափոխութեան համար, իշխանութեանը բանվորների կողմից դրավելու համար:

### ԿՐԿՆԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

1. Բուրժուազիան ինչո՞ւ չէր հարստանում, իսկ բանվորներն ընկնում էին աղքատութեան մեջ:
2. Վո՞ր թվից յեղավ Մորոզովի գործադուլը:
3. Բանվորների գործադուլներն ինչո՞ւ ավելի միաբան ու անհասանջ դարձան:
4. Որուխովյան և Ռոստովի գործադուլների ժամանակ բանվորներն ի՞նչ պես նոր ձևով պայքարեց սովորեցին:
5. Յարական կառավարութեանն ինչո՞ւ մի ժողովրդին զրգուտ էր մյուսի դեմ:
6. Վո՞ր թվից կազմակերպվեց բանվորական կուսակցութեանը:

## V. 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

### § 31. ՀԵՂԱՓՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԵՐ

1904 թվին սկսվեց ուսու-ճապոնական պատերազմը: Պատերազմն սկսեց Նիկոլայ II ցարը՝ կալվածատերերի, Փարբիկատերերի և բանկիրների ոգտին:

Պատերազմի զլխավոր նպատակն էր նոր հողեր—Մանջուրիան և Յորեան—գրավել: Դա հարկավոր էր կալվածատերերին, այնտեղ ապրող գյուղացիներին շահագործելու համար: Դա էլ ավելի հորկավոր էր խոչոր առևտրականներին և Փարբիկատերերին, վորպեսզի այնտեղ ավելի շահավետ կերպով ծախեյին իրենց ապրանքները:

Սակայն, բացի դրանից, ցարական կառավարութեանը մասածում էր պատերազմի միջոցով բանվորներին և գյուղացիներին հեռացնել հեղափոխութեանից:

Ճապոնիայի կապիտալիստները նույնպես ձգտում էին դրավել այդ հողերը: Նրանք պատերազմի դաշտ ուղարկեցին լավ զինված և վարժեցրած զինվորներ: Ռուսաստանի ռազմական տեխնիկական ցածր էր ճապոնիայի ռազմական տեխնիկայից, և զորքն ավելի վատ էր վարժեցրած ու վատ սպառազինած:

Հենց պատերազմի սկզբում ռուսական զորքերը մի շարք խո-

չոր պարտութեաններ կրեցին: Շուտով նրանք վերջնականապես ջախջախվեցին: Ամբողջութեամբ կործանվեց ռուսական նախատորմիղը: Ահազին քանակութեամբ բանվորներ ու գյուղացիներ վոչնչացան, հաշմանդամ դարձան,՝ կռվելով կապիտալիստների շահերի համար:

Պատերազմն էլ ավելի քայքայեց գյուղացիներին և բանվորների դրութեանն անտանելի դարձրեց:

Բանվորներն սկսեցին դուրս գալ իրենց կեղեքողները դեմ:

1904 թվի ոգոստոսին ամբողջ յերկրում բանվորական խոչոր գործադուլներ են տեղի ունենում: Մեծ միտականութեամբ հրապարակ յեկան Բազվի բանվորները:

Բազվի բանվորները պահանջում էին ցարական իշխանութեան տապալումը:

Բանվորների յելույթները ղեկավարում էին բոլշևիկները: Բազվի գործադուլը հաջող անցավ: Բանվորների պահանջների մի մասը բավարարվեց:

1905 թվի հունվարին գործադուլ բռնկվեց Պուտիլովի գործարանում: 1904 թվի գեկտեմբերի վերջին Պուտիլովի գործարանում 4 բանվորի գործից հեռացրին: Այդ գործարանում բանվորների դրութեանն այնքան վատ էր, վոր միայն այդ բանվորների հեռացումը բավական էր, վորպեսզի վիթխարի գործարանը գործադուլ հայտարարեր:

Պուտիլովի բանվորներն իրենց ներկայացուցիչներին ուղարկեցին մյուս գործարանները: Պետերբուրգի մյուս գործարանների ու Փարբիկների բանվորները, աղքատութեանից և քաղցից տանջված, միացան պուտիլովցիներին: Հունվարի 8-ին Պետերբուրգի ավելի քան 140 հազար բանվորները գործը թողին:

Գործադուլներ սկսվեցին Պետերբուրգի բոլոր խոչոր գործարաններում և Փարբիկներում: Գործադուլավոր բանվորները պահանջում էին կրճատել բանվորական որը, ավելացնել աշխատավարձը, ձրի բժշկել բանվորներին և բանվորների յերեխաներին ուսում տալ դպրոցներում:

### § 32. ԴԵՊՒ ՑԱՐԸ

Բանվորներին հեղափոխական պայքարից, հեռու պահելու և նրանց մեջ դեպի ցարը հավատ պահպանելու համար ցարական գաղտնի վոստիկանութեանը Պետերբուրգում կազմակերպեց ռուսական բանվորների ընկերութեանը:

Այդ ընկերութեան գլուխը կանգնեց վոստիկանութեան կողմից կաշառված տերտեր Գապոնը: Գապոնն աշխատում էր հավատացնել բանվորներին, վոր իրենց բոլոր թշվառութեաններն մեջ մեղավորը վոչ թե ցարն է, այլ նրա մերձավորները և առանձին ֆարրիկատերերը:

Յերբ գործադուլներն սկսվեցին, Գապոնը, ցանկանալով բանվորներին հեռու պահել հեթանոսութեանից, նրանց առաջարկեց խնդրադրով դիմել ցարին: Նա առաջարկեց այդ խնդրադրի մեջ հիշել իրենց բոլոր կարիքներն ու ցավերը: Վորոչ բանվորներ խաբվեցին Գապոնի առաջարկութեանից: Նրանք դեռ հավատում էին, վոր բավական է դիմել ցարին և նա կթեթևացնի իրենց ծանր վիճակը:

Իսկ բուլչեիկները նախագգուշացնում էին բանվորներին, վոր նրանք ցարի մոտ չգնան: «Ընկերներ, —ասում էին բուլչեիկները,—դուր ե ցարին դիմելը և նրանից ազատութեան սպասելը: Խնդրանքով ազատութեան չեն ստանում: Յարից վոչ թե պիտի խնդրել, այլ տապալել նրա իշխանութեանը: Միայն այդ ճանապարհով կարելի յե ազատութեան ձեռք բերել: Ազատութեանը գնվում է արյունով, նվաճվում է դենքը ձեռքին՝ անողոք պայքարում»:

Այդպես էին գրում բուլչեիկները հունվարի 8-ին բանվորներին ուղղած իրենց կոչերում: Առաջավոր, դիտակից բանվորները դուրս էին գալիս ժողովներում, պաշտպանում էին բուլչեիկներին, նախագգուշացնում էին բանվորներին:

Սակայն մեծամասնութեան մեջ դեռ ուժեղ էր դեպի ցարը յեղած հավատը: Նրանք չէին յենթադրում, վոր Գապոնը դավաճան է: Գապոնը համոզում էր բանվորներին խաչ ու բուրվառով ցարի մոտ գնալ: Բանվորները հավատացին Գապոնին և մձուեցին խնդրանքով գնալ ցարի մոտ:

### § 33. ԱՐՅՈՒՆՈՏ ԿԻՐԱԿԻՆ

Հունվարի 9-ի (22-ի) կիրակի օրը, պարզ ու ցրտաչունչ առավոտյան, քաղցից ու պատերազմից հյուժված Պետերբուրգի բանվորները գնացին ցարի մոտ:

Բանվորները խաղաղ էին տրամադրված, հազել էին տոն օրվա շորերը: Մի քանի հազար բանվորների զլխին դնում էր Գապոնը: Բանվորները տանում էին սրբապատկերներ և ցարի նկա-

րը: Բանվորների հետ միասին գնում էին նրանց կանաչքն ու յերեխաները: Քաղաքի բոլոր կողմերից դանդաղ կերպով դեպի Ձմեռային պալատ էին շարժվում բանվորական զանգվածները:

Բանվորների յերթը խաղաղ էր: Սակայն կառավարութեանը գնդակներով և սվիններով դիմավորեց բանվորներին: Յարը հրամայեց կրակ բաց անել բանվորների հակայական բազմութեան վրա:

Նարվայի դուների մոտ և Տրոիցկու կամուրջի մոտ զորքերը փակեցին յերթի ճանապարհը: «Յրվեք» հրամանից հետո, վորը վոչ վոք չլսեց, սպաների կարգադրութեամբ զինվորները կրակ բաց արին բանվորների վրա: Բանվորները փախան: Կազակներն ընկան փախչողների հետևից:

Նման կոտորած յեղավ նաև Պետերբուրգի մյուս ուայոններում: Ամենուրեք կրակ էին բաց անում: Կազակներն ու զինվորները ջշում էին բանվորներին, սպանում նրանց:

Բանվորական շարքերի մնացորդներն այնուամենայնիվ կարողացան ճանապարհ բաց անել դեպի Ձմեռային պալատը, ուր ապրում էր ցարը: Սակայն այստեղ էլ բանվորներին ընդունեցին նրանց վրա կրակ բաց անելով:

Բանվորները հետ դարձան: Նրանք փախչում էին: Իսկ նրանց հետևից գնդակներ էին սողում:

Յարական պալատի մոտ, հրապարակում, շատ սպանվածներ ու վիրավորներ մնացին: Այդ օր Պետերբուրգում սպանվեց 1200 բանվոր և վիրավորվեց ավելի քան 5 հազար հոգի:

Հունվարի 9-ի (22-ի) օրը «արյունոտ կիրակի» անունն ստացավ:

### § 34. ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՐԲՈՔՎՈՒՄ Ե

Հունվարի 9-ի օրը դարձավ 1905 թվի հեղափոխութեան սկիզբը:

Բազմաթիվ բանվորներ սկսեցին հասկանալ, վոր ցարն ու ամբողջ ցարական կարգերն իրենց ամենակատաղի թշնամին են: Նրանք սկսեցին հասկանալ, վոր հույաները պետք է դնեն միմիայն իրենց վրա և իրենց բուլչեիկյան կուսակցութեան վրա: Իսկ բուլչեիկները հունվարի 9-ից անմիջապես հետո կոչ բաց թողին, վորով բանվորներին ընդհանուր գործադուլի և զինված ապստամբութեան էին կանչում:



Հունվարի 9-ն այն կայծը յեղալ, վորից բորբոքվեց հեղափոխութեան հրդեհն ամբողջ յերկրում: Անդեն բանվորների գնդակահարութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց հին Ռուսաստանի նույնիսկ ամենահեռավոր ծայրերում: Ամեն տեղ բանվորները վոտքի կանգնեցին պայքարելու համար: Մոսկվայում, Բազմում, Ռոստովում, Սարկովում, Ուքեսայում—ամենուրեք բանվորները գործադուլ արին:

Գործադուլավորների կարմիր դրոշների վրա գրված էր.— «Կարչի ցարը», «դենք վերցրեք ցարի ու կալվածատերերի դեմ», «հողը գյուղացիներին»:

Հեղափոխութեանը բորբոքվում էր, ընդդրվում ամբողջ յերկրը: Գործադուլների ազդեցութեան տակ գյուղացիական ապստամբութեաններ սկսվեցին, խռովութեաններ ծաղեցին բանակում և նավատորմիցում:

### § 35. ՅԱՐԸ ԶԱՐԴԵՐ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Յարական կառավարութեանն աշխատում էր հեղափոխութեանը ճնշել հենց սկզբից: Նա մեկ փորձում էր բանվորներին խաբել խոստումներով, մեկ էլ նրանց դեմ զինված ուժ էր գործադրում:

Յարական կառավարութեանն աշխատում էր բանվորներին հեղափոխութեանից հեռու պահել՝ ազգային թշնամութեան բորբոքելու միջոցով: Նա մի ազգութեանը զրգուում էր մյուսի դեմ: Բազմաթիվ քաղաքներում հրեյական ջարդեր կազմակերպվեցին: Հոկտեմբերին, մի շարքովս ընթացքում, հարյուրից ավելի ջարդեր յեղան: Այդ 7 որվա ընթացքում սպանվեց 3 հազար և վիրավորվեց 10 հազարից ավելի մարդ:

Ընկեր Լենինն այսպես էր գրում հրեյական ջարդերի մասին.— «Յերբ անիծյալ ցարական միապետութեանն իր վերջին դրերն էր ազդում, նա աշխատում էր հետամնաց բանվորներին ու գյուղացիներին զրգուել հրեյաների դեմ: Յարական վոստիկանութեանը կալվածատերերի ու կապիտալիստների հետ միասին հրեյական ջարդեր էր կազմակերպում: Կալվածատեր-չահագործողներն աշխատում էին կարիքից տանջված բանվորների ու գյուղացիների ատելութեանն ուղղել հրեյաների դեմ: Մյուս յերկրներում էլ կապիտալիստները միշտ թշնամութեան են բորբոքել ու բորբոքում հրեյաների դեմ, վորպեսզի փակեն բանվորի աչքը, շեղեն նրա ու-

չադրութեանը աշխատավորութեան իսկական թշնամիներեց—կալվածատերերից: Դեպի հրեյաները յեղած ատելութեանն ամուր պահպանվում է միայն այնտեղ, ուր կալվածատերերի ու կապիտալիստների կեղեքումը անթափանց խավար է ստեղծել բանվորների ու գյուղացիների համար: Միայն ամենախավար ու ամենահետամնաց մարդիկ կարող են հավատալ հրեյաների մասին տարածված ստին ու զրպարտութեաններին:

Աշխատավորութեան թշնամիները հրեյաները չեն: Բանվորների թշնամիները բոլոր յերկրների կապիտալիստներն են: Հրեյաների մեջ բանվորներ կան, նրանց մեծամասնութեանն աշխատավորներ են: Նրանք մեր յեղապրներն են կապիտալի կողմից շահագործվելու դժով, մեր ընկերները՝ սոցիալիզմի համար մղվող պայքարում: Հրեյաների մեջ, բոլոր ազգութեանների նման, կան կուլակներ, շահագործողներ, կապիտալիստներ... հարուստ հրեյաները, հարուստները միմյանց հետ դաշն կապած ճնշում, կեղեքում, բաժան-բաժան անելով կազմալուծում են բանվորներին»:

Նույն 1905 թվի փետրվարին կառավարութեանը վրեժ լուծեց հեղափոխական բազմեցիկներից՝ փառապանծ գործադուլի համար: Նա թուրքերին ու հայերին զրգուեց իրար դեմ: Վոստիկանութեան զործակալները ջարդ կազմակերպեցին և մասնակցեցին կոտորածին: Վոստիկանները թուրքերի շոր հագած սկսեցին կոտորել հայերին: Սարսափն ու իրարանցումը բռնեց Բազմին: Չարդարարները մանում էին տները, կոտորում, այրում, ավերում:

Ահա ինչ է պատմում հայ-թուրքական կոտորածի ականատեսը:

«Մեր գնացքը սուրում էր դեպի Գյուրգամիր: Նա լցված էր Յիսապիտալի (Գյանջայի) հայ-փախստականներով, ուր մի քանի որ էր ինչ հայ-թուրքական կոտորած էր տեղի ունենում: Գնացքում մեծ մասամբ կանայք, յերեսաներ ու ծերունիներ էին: Ամբողջ գնացքը լցված էր կանանց ու յերեսաների լացով և ծերունիների անմխիթար հառաչանքով:

Մեր վագոնի մեջ կար գիտակցութեանը կորցրած մի կին: Նրա աչքերի առաջ մորթել էին նրա ամուսնուն ու յերեք յերեսաներին: Թշվառը շորերի մեջ մի կապոց գրկած յերեսակայում էր վոր դա իր յերեսան է, որբում էր:

Ամեն կողմից հուսահատութեան դառն կոկիծներ էին լըսվում —

- Մարդու մորթեցին :
- Ձապակներս կորան :
- Աղջկանս անբախտացրին :
- Ինչո՞ւ յենք ապրում :

Հանկարծ պատուհանի ապակին ջարդվեց և կտորտանքը թափվեցին հատակին : Դա կրակոց եր : Վազոնում բոլորն իրար խառնվեցին , այս ու այն կողմ փախան : Մենք անդոր եյինք կանանց հանգստացնելու : Նրանցից վոմանք ծուռիկ չոքած աղաչում եյին , վոր կտորած թույլ չտանք :

Յես պատուհանից նայեցի : Մի քանի տասնյակ թուրքեր , խմբերով , Ծ—Ծ—ապակ մարդ , սեվին եյին տալիս յերկաթուղու գծից վոչ շատ հեռու հարթութեան յերեսին : Նրանք սպառնալից կերպով շարժում եյին դաշույնները : Սակայն մեր դնացքը քամու նման սուրում եր և անցավ նրանց կողքից :

Կայարան հասնելով յես խմացա , վոր թուրք բնակչութեանն ել պակաս ահ ու սարսափ չի ապրել : Կոտորվել եր մեծ թվով թուրք բնակչութեան , նրանցից շատերը կորցրել եյին իրենց հայրերին , դավակներին , աղջկերանց : Ետտեքը վորք կամ այրի եյին դարձել :

Այդ ժամանակ յես հասկացա ցարական իշխանութեան դիտափորութեանը : Նա ստորաբար մի ժողովրդին բերդեղ եր մյուսի դեմ : Դա պետք եր նրան , վորպեսզի աշխատավորները չկուվեյին իրենց թշամիների—կալվածատերերի , կուլակների դեմ :

Աշխատավորութեան թշնամի—բուրժուական կուսակցութեանները—դաշնակներն ու մուսավաթիստներն ալելի ու ալելի եյին բորբոքում այդ կոտորածները , տալով նրանց կազմակերպված բնույթ : Յեւ միայն բուլղարիկներն եյին , վոր յեռանդագին մերկացնում եյին այդ կոտորածների պատճառը—ցարական կառավարութեան դիտափորութեանները , կոչ անելով հայ և թուրք լաշխատավորութեանը դասակարգային համերաշխութեամբ յեղնել ընդհանուր թշնամու ,—կապիտալիստների և կալվածատերերի դեմ :

Ջարդերը չկանգնեցրին հեղափոխութեանը , այլ ընդհակառակն՝ մոտեցրին այն : Աշխատավոր հայերը , թուրքերն ու հրեյաններն ալելի մեծ վճռականութեամբ շարունակեցին պայքարել ցարի և կապիտալիստների դեմ :

§ 36. ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱՎԱՏՈՐՄԱՆՈՒՄ ՈՒ ԲԱՆԱԿՈՒՄ

Բանվորական գործադուլներից և գյուղացիական խռովութեաններից անմիջապես հետո ապստամբութեաններ ծագեցին նավատորմում և բանակում :

Յարական կառավարութեանը ջանք եր թափում նավաստիններից և զինվորներից ցարական կարգերի հավատարիմ պահպաններ դաստիարակել : Հրամանատարները նշանակվում եյին ազնվականներից , կալվածատերերից , կապիտալիստներից և այլն : Ձինվորական յեկեղեցիներ կային , ուր տերտերներն ամեն կերպ յկոչ եյին անում զինվորներին՝ հպատակվել իրենց պետերին :

Սակայն զինվորներն ու նավաստինները նույն բանվորներն են ու գյուղացիները , միայն զինվորական շոր հագած : Յարական բանակի զինվորները բանվորների և գյուղացիների նման շատ վատ եյին ապրում : Ձինվորները նույնպես դժգոհ եյին ցարական կարգերից : Բոյլընիկները թափանցում եյին բանակի ներսը , այնտեղ ստեղծում եյին իրենց բՆԻՏները և զինվորներին բացատրում եյին թալանչիական պատերազմի իմաստը :

Յարական բանակի պարտութեանը ռուս-ճապոնական պատերազմում՝ ուժեղացրեց զինվորների և նավաստիների դժգոհութեանը : Բանակին սկսեց տատանվել : Մի քանի գործասեր հրթրյալները : Բանակին սկսեց Կրամանները : Բանակի և նավատորմի վրեժխնդար կատարել պետերի հրամանները : Բանակի և նավատորմի վորոչ մասերում ապստամբութեաններ սկսվեցին :

Դրանցից ամենանշանավորը Սեծովյան նավատորմի «Պոտոյովին» զրահանավի ապստամբութեանն եր :

1905 թվի հունիսի 14-ին , նավաստիները սպաների դադանային վերաբերմունքից վրդովված ապստամբեցին : Նրանք սպանեցին զրահանավի հրամանատարներին և սպաներին ու շարժեցին Ուեսաս , ոգնելու այնտեղ գործադուլավոր բանվորներին :

Սակայն ապստամբած նավաստիները , ապստամբների մեջ յեղած տարաձայնութեանների պատճառով , չկարողացան միանալ դադանայի բանվորներին : Ապստամբներից վոմանք կողմնակից եյին Ուեսասյի վախեցած իշխանավորներն աշխուժացան : Նրանք ոգտվեցին «Պոտոյովին» ժամանակավոր անգործութեանից և քաղաքում ճնշեցին բանվորներին ապստամբութեանը :

Ուեսասյի վախեցած իշխանավորներն աշխուժացան : Նրանք ոգտվեցին «Պոտոյովին» ժամանակավոր անգործութեանից և քաղաքում ճնշեցին բանվորներին ապստամբութեանը :

«Պոստյոմկին» զրահանավը 11 որ զիմացավ, հույս դնելով ամբողջ նախատորմի ապստամբութեան վրա: Սակայն Սեծովյան ամբողջ նախատորմից ապստամբներին միացավ միայն «Գեորգի Գրեբոնոսիցը», այն եւ կարճ ժամանակով: Յարական նախատորմի նախատինների մեծամասնութիւնը դեռ հեղափոխական գիտակցութիւն չուներ: Իրենք պոստյոմկինցիներն եւ բավականին վճռական չեյին:

Հունիսի 24-ին «Պոստյոմկինը» տեսնելով, վոր քարածուխն ու մթերքները վերջանում են, զնաց Ռուսինիա և այնտեղ հանձնվեց ուժմնական իշխանութիւններին: Յեղբ ապստամբութեան ղեկավար նախատի Մատյուշենկոն վերադարձավ Ռուսաստան, նա կախաղան բարձրացվեց ցարական դահլիճներէ կողմից:

«Պոստյոմկինի» յերույթը հսկայական նշանակութիւն ունեցավ: Դա առաջին բացարձակ անցումն էր պայքարող բանվորներէ ու դյուղացիներէ կողմը:

Բանակը, վորը ցարի ու կարվածատերերի իշխանութեան գլխավոր հենարանն էր, դառնում էր անհուսալի:

### § 37. ԱՊՍՏԱՄԲԱԾ ՆԱՎԸ

(Ապստամբութեան մասնակցի հիշողութիւնը)

Հունիսի 17-ի գիշերը պոստյոմկինցիներն անհանգիստ անցկացրին: Նրանք գիտեյին, վոր եսկադրան<sup>1)</sup> լրիվ կազմով բաց ծով է դուրս յեկել Սեվաստոպոլի նախահանգստից: Յուրաքանչյուր բոպե նա կարող էր հարձակվել ապստամբած նավի վրա:

Քնում էյին առանց հանվելու, վորպեսզի յուրաքանչյուր բոպե պատրաստ լինեն: Թնդանոթները լցված են: Բոլոր միջոցները ձեռք են առնված գիշերային հարձակումից պաշտպանվելու համար:

— Եսկադրան յերևում է... Եսկադրան դալիս է, — լսվեց հանկարծ լուսաբացին ամբողջ նավում:

Բոլորը մի մարդու նման վտաքի կանգնեցին: Հորիզոնի վրա բարձրանում էյին սև ծխի սյուները: Շուտով յերևաց ամբողջ Սեվ-ծովյան եսկադրան:

«Պոստյոմկինը» ամբողջ արագութեամբ շարժվեց դեպի եսկադրան: Ռումբերը մոտեցրին հրանոթներին:

Տիրեց մեռելային լուսթյուն:

Գալիս էյին 5 զրահանավ, հաճանավեր և մեծ թվով տկանակիրներ:

«Պոստյոմկինի» կայմից ազդանշան տրվեց— «խարխիս գցել թե չե կրակում ենք»:

Եսկադրան դանդաղեցրեց ընթացքը: Անթել հեռագիրը տվեց ծովակալի դեպեշան<sup>2)</sup> —

«Սեվ- ծովյաններ, մենք ամաչում ենք ձեր արարմունքից, անմիտներ, հանձնվեցեք և ներումն կստանաք»:

«Ապստամբները չեն հանձնվում», — պատասխանեց «Պոստյոմկինը» և շարունակեց առաջ ընթանալ:

Պոստյոմկինցիները պատրաստվում էյին մահացու բռնամարտի: Մատյուշենկոն հրամաններ էր տալիս: Վճռվել էր անհաջող կովի դեպքում ընկղմել նավը: Մի քանի նախատիններ դլխարկները հանում, հրաժեշտ էյին տալիս իրար:

Եսկադրան մարտական կարգով բացաղատվեց «Պոստյոմկինը» շրջապատելու համար:

Բայց ահա, ինքը, ապստամբած զրահանավը մղվում է առաջ ու մտնում եսկադրայի կենտրոնը: Պոստյոմկինցիները յուրաքանչյուր բոպե սպասում էյին, վոր կրակ պիտի բացվի իրենց վրա: Բայց հանկարծ թնդանոթային համազարկի փոխարեն յերեք զրահանավերից թնդում է խրոխտ ու հուժկու աղաղակ —

— Ուռա՛, ուռա՛, կեցցե աղատութիւնը:

Նախատինները թողնում են թնդանոթները, վերև են բարձրանում և գլխարկները շարժում ոգի մեջ:

Մատյուշենկոն ցատկում է նավի կողքը և ազդանշանում է մոտով անցնող «Սինոպին» — «ձերբազայեցեք ձեր սպաներին և միացեք մեզ հետ»:

Ծովակալը սարսափեց: Վախենալով վոր մյուս նավերի վրա էլ ապստամբութիւն կարող է լինել, նա ամենայն արագութեամբ եսկադրան ուղղեց դեպի բաց ծովը: Ծովակալն ուղղութիւն վերցրեց դեպի Սեվաստոպոլ:

«Պոստյոմկինը» արագութեամբ սուրբայ եսկադրայի հետևից, Զրահանավերից մեկը — «Գեորգի Գրեբոնոսիցը» — հանկարծ ալանց դանդաղել և միացավ ապստամբներին: «Սինոպն» էլ մի քիչ

1). Եսկադրա — արձանավախումբ.

2). Դեպեշա — հեռագիր:

առատանկեց, հետ մնաց եսկադրայից, սակայն նորից արագու-  
թյամբ հասավ եսկադրային:

«Թնդանոթներն ու աղաններն ուղղել «Պոստյոմկինի» վրա և  
այն ջուրն ընկզմել»— հրամայում է նախատորմողին փախչող ծո-  
փակալը: Սակայն նախատինները չեն մոտենում թնդանոթներին:  
Նրանք թնդանոթների փականները ծով են գցում, վորպեսզի  
սպաները չկարողանան կրակել:

Մի ամբողջ եսկադրա գլխապատառ փախչում էր միայնակ  
«Պոստյոմկինից»:

### § 38. ՀՈԿՏԵՄԲԵՐԹԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

1905 թվի հոկտեմբերին բանվորների հեղափոխական շար-  
ժումը հասավ ամենամեծ դարգացման:

Հոկտեմբերին Մոսկվայում բռնկվեց յերկաթուղային բան-  
վորների գործադուլը: Գործադուլը տարածվեց բոլոր գլխավոր  
յերկաթգծերում: Գնացքները կանգ առան: Շարժումը յերկրում  
կանգ առավ: Յերկաթուղային բանվորներին միացան Փարբիկին-  
բը, գործարանները, հեռագիրը, փոստը: Ընդհանուր գործադուլն  
ընդգրկեց ամբողջ յերկիրը:

Ապստամբների գլխավոր պահանջներն էին.—ինքնակալու-  
թյան տապալումը և Ց-ժամյա բանվորական որվա հաստատումը:  
Պետերբուրգում գործադուլը ղեկավարելու համար բանվորները  
Բանվորական Պատգամավորների Սորհուրդ կազմակերպեցին:

Այդ ժամանակ խռովություններ տեղի ունեցան նախատինների  
մեջ՝ Կրոնշտադում, և զինվորների մեջ՝ Մոսկվայում, Վրյեվում,  
Սարկովում ու այլ քաղաքներում:

Որ—որի ուժեղանում էր գյուղացիական շարժումը: Հոկտեմ-  
բերին և նոյեմբերին ամբողջ յերկրի գավառների մի յերրորդից  
ավելին ընդգրկված էր գյուղացիական ապստամբություններով:  
Գյուղացիները մոտ 2 հազար կալվածատիրական ազարակներ այ-  
րեցին և իրենց մեջ բաժանեցին ազնվական գելադուլներին կողմից  
ժողովրդից թալանած հարստությունները:

Հեղափոխությունն ավելի ու ավելի յեր բորբոքվում: Թվում  
էր, թե ահա—ահա հիմնահատակ կքանդվեն ցարական ատելի  
կարգերը:

Ընդհանուր գործադուլի սկզբից բուլչիկների կուսակցու-  
թյունը սկսեց առանձնահատուկ յեռանդով բանվորներին նախա-

պատրաստել զինված ապստամբություն համար: Նա ապացուցում  
էր, վոր միայն այդ ճանապարհով կարելի յե վերջնականապես  
վերջնացնել խարխլված ցարական կարգերը:

Այդ ժամանակ արտասահմանից յեկավ ընկ. Լենինը: Նա  
ղեկավարում էր բուլչիկներին պայքարը:

### § 39. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 1905 ԹՎԻՆ

Հեղափոխության ժամանակ ապստամբած բանվորները կու-  
սակցության ղեկավարությունում ընտրում էին իրենց գործադու-  
լային կոմիտեները: Յուրաքանչյուր գործարանից, յուրաքանչյուր  
լային կոմիտեները: Յուրաքանչյուր ընտրում էր մեկ պատգամա-  
Փարբիկայից ամեն մի 500 բանվոր ընտրում էր մեկ պատգամա-  
վոր: Գործադուլի ղեկավարությունը գտնվում էր գործադուլա-  
յին կոմիտեյի ձեռքում: Նրանք թուղթիկներ էին բաց թողնում,  
հրամաններ տալիս: Այդ գործադուլային կոմիտեներից էլ 1905  
թվին կազմակերպվեցին բանվորական պատգամավորների առաջին  
խորհուրդները:

1905 թվի խորհուրդները մեր խորհրդային իշխանության  
սաղմը հանդիսացան: Առաջին խորհուրդը կազմակերպվեց գեռ  
1905 թվի մայիսին՝ Իվանովո-Վոզնեսենսկում: Սակայն առանձ-  
նապես մեծ նշանակություն ունեցավ Պետերբուրգի բանվորական  
խորհուրդը: Պետերբուրգի խորհուրդն ըն-  
պատգամավորների խորհուրդը: Պետերբուրգի խորհուրդն ըն-  
տրվեց 1905 թվի հոկտեմբերին: Նա ղեկավարում էր ընդհանուր  
գործադուլը, ամբողջ հեղափոխական պայքարը: Խորհուրդը Պե-  
տերբուրգում Ց-ժամյա բանվորական որ մտցրեց, խուսի, ժո-  
տերբուրգում Ց-ժամյա բանվորական որ մասին որենք հրատարակեց:  
Ղովներին և մամուլի ազատության մասին որենք հրատարակեց:  
Իր խորհուրդն սզնություն կազմակերպեց գործադուլներին: Իր  
խորհուրդն սզնություն կազմակերպեց խորհուրդը տպագրում  
հրամաններն ու կարգադրություններն խորհուրդի խորհրդի  
եր իր թերթում— «Բանվորական պատգամավորների խորհրդի  
լրատուում»:

Շուտով խորհուրդներ առաջացան բոլոր յոչոր արդյունա-  
բերական կենտրոններում— Մոսկվայում, Սարկովում, Վարչավա-  
յում, Ուեսայում, Ռոստովում և մյուս արդյունաբերական քա-  
ղաքներում:

### § 40. ԴԵԿՏԵՄԲԵՐԹԱՆ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Հեղափոխական պայքարը յերկրում ավելի ու ավելի յեր բոր-  
բոքվում: Դեկտեմբերին բուլչիկների կուսակցությունը վորոչեց  
զինված ապստամբություն բարձրացնել:

— Զինվելով ու կազմակերպվելով մենք կպատրաստվենք, վորպեսզի մեր յեղբայր-բանվորները—լեհերի, հրեայների, կովկասցիների, Ֆինների և մյուսների հետ վերջին հարվածը հասցնենք հին, փթած կարգերին:

— Կո'րչի ցարը: Կեցցե՛ հեղափոխությունը:

— Կեցցե՛ սոցիալիզմը:

Բուլչեիկներն այսպիսի կոչերով էլին դիմում բանվորներին: Խոչը քաղաքները Փարբիկներում ու գործարաններում բուլչեիկները բանվորական շոկատներ էլին կազմակերպում, նրանց զենք էլին մատակարարում և բանվորներին սովորեցնում էլին գործածելը:

Սակայն ցարական կառավարությունն ինքն եր վորոշել հարձակում սկսել հեղափոխության դեմ: Կապիտալիստները Պետերբուրգում 75 հազար բանվոր հեռացրին աշխատանքից: Դեկտեմբերի սկզբին ցարական կառավարությունը ձերբակալեց Պետերբուրգի խորհուրդը:

Ի պատասխան ցարիզմի հարձակման, ամբողջ յերկրում նոր ընդհանուր գործադուլ բռնկվեց: Այժմ բանվորները չէին կարող սահմանափակվել միայն գործադուլով: Բանվորները հասկացան, վոր այստեղ միայն մի յեղք, մի ճանապարհ կա, դեպի վորը կանչում եր բուլչեիկների կուսակցությունը— զինված ապստամբության ճանապարհը ինքնակալության դեմ:

Մոսկվայում և այլ քաղաքներում բանվորները դեկտեմբերին զինված ապստամբություն բարձրացրին: Բանվորական ապստամբության կենտրոնն այդ անգամ Մոսկվա դարձավ:

Պետերբուրգի պրոլետարիատը, վորը հոկտեմբերի գործադուլներից ավելի յեր թուլացել, քան մյուս քաղաքների պրոլետարիատը, չեր կարող զինված ապստամբություն բարձրացնել:

Մոսկվայի խորհուրդը, ի պատասխան Պետերբուրգի խորհուրդի ձերբակալման, բանվորներին գործադուլ անելու կոչ արեց: Առաջին իսկ որը գործադուլ արին 150 հազար բանվոր:

Դեկտեմբերի 10-ին ամբողջ Մոսկվան ծածկվեց բարեկազմներով: Մոսկվայի Խորհուրդն ուներ նաև իր բանվորական զինված շոկատները: Այդ շոկատներին ղեկավարում եր կուսակցության Մոսկվայի Կոմիտեն:

Չորքը տատանվում եր.—նրանց մի մասը փակված նստել եր. հրամանատարները վախենում էին նրանց փողոց բաց թողնել:

Բանվորները հերոսաբար դիմադրում էին: Կառավարությունն ստիպված եր նոր ոժանդակ դորք ուղարկել Մոսկվա: Պետերբուրգից յեկան Մեմյոնովսկու սպայական գունդը և այլ զորամասեր: Յարական գեներալ Դուրբասովը մեծ և լավ զինված ուժերով սկսեց հարձակումը:

Բանվորները մարտնչում էին արիաբար, սակայն չկարողացան դիմանալ: Ապստամբների մեծ մասը միայն ատրճանակներ ուներ՝ ցարական զորքերի թնդանոթների, զնդացիների ու հրացանների դեմ:

Բանվորական շոկատները նահանջեցին Մոսկվայի ծայրամասը—Պրեսնյան: Այնտեղ ապստամբ բանվորները, սեղմված նեղ ողակի մեջ, մի քանի որ աննախընթաց հերոսությամբ հետ էլին մղում շրջապատող զորքերին:

#### § 41. ԲԱՐԻԿԱԴԱՅԻՆ ԿՈՒՎՆԵՐԸ ՊՐԵՍՆՅԱՅՈՒՄ

Մոսկվայի բանվորական ծայրամասը—Պրեսնյան—ապստամբության ամրոցը դարձավ: Նա ամբողջությամբ ծածկվեց բարեկազմներով: Ռումբերով, հրացաններով և ատրճանակներով զինված 500 շոկատային-բանվորներն այդ ամրոցի հուսալառ, հերոսական կայազորն էին:

Պրեսնյացիները 10 որ աննախընթաց հերոսությամբ դիմանում ային թվով իրենցից զգալի կերպով շատ կազակներին և զինվորներին:

— Վոչնչացնել Պրեսնյան, սակայն ճնշել ապստամբությունը,—այս եր դահլճ Դուբասովի հրամանը:

Դեկտեմբերի 17-ին Պրեսնյան շրջապատվեց ցարական զորքերի յերկաթյա ողակով: Արշալույսին ուժեղ համադարկ սկսվեց թնդանոթներից: Թնդանոթների համադարկերը վոչ մի բնույթ չէին լուծում: Յերկու կողմից մինչև զլչերը կրակ էլին թափում Պրեսնյայի վրա: Տներն ու բարեկազմներն այրվում էին: Պրեսնյան վառվում եր հսկայական հրդեհով: Գլչերը ցերեկվա նման լույս եր:


Պրեսնյան մահացու մարտի յեր պատրաստվում: Սև ծխի թուլանների մեջ կանայք ու յերեխաները փամփուշտ էլին հասցնում շոկատայիններին:

Հանկարծ, անսպասելիորեն յերկաթգծի կողմից զորքերը ներխուժեցին Պրեսնյան: Պրեսնյան այդ կողմից պաշտպանող

յերկաթուղային ջոկատայինները չկարողացան հետ մղել հարձակումը:

Ապստամբների դեմ փոթորկալի կրակ սկսվեց նաև յերրորդ կողմից:

Ջոկատայինները լարում էին իրենց ամբողջ ուժը, վորպեսզի հետ մղեն հարձակումը: Բանվորական ջոկատի ղեկավար բանվոր-բուլչեիկ Սեդոյը վիրավորվեց: Բայց նա կռիվը չթողեց, շարունակում եր ղեկավարել ապստամբությունը:



Նկ. 10. Պրեսնյայի բարիկադները

— Պայթեցնել Փուզասը—լավեց նրա հրամանը: Խլացուցիչ վորոտով հող, գերան ու ծուխ է վեր բարձրացում: Մահվան յերկյուղով բռնված ղինվորները հետ են փախչում:

— Ուռու!, ուռու!, կեցցե աղատությունը,—ուրախ աղաղակում են ջոկատայինները:

Մահայն նոսրանում են հերոսների շարքերը: Բուլորին պարզ եր, վոր Պրեսնյան չի դիմանա:

Առավոտյան ընկեր Սեդոյը ցրվելու հրաման է տալիս:

Պրեսնյան գրավվեց: Մխի, մոխրի, ավերակների մեջ լռել եր Պրեսնյան: Փողոցներում ղինվորական պահակներ էյին պտտում:

Հատ ու կենտ կրակոց եր լավում: Այդ ցարական «խաղաղաց-

նողներն» էյին ղվարձանում, սպանելով անցորդներին: Նրանք աղակում էյին բնակարանները, դենք էյին փնտոում, վորսում էյին նրանց, ում վոր նկատի էյին առել և տանում էյին Մոսկվա գետը: Իսկ այնտեղ ղնդակահարում էյին: Գետի սառույցը ծածկվեց ղիակներով: Ամեն տեղ յերևում էյին սառույցի վրա բացված արնաչաղախ անցքեր:

§ 42. ՄԵՔԵՆԱՎԱՐ ՈՒՆՏՈՄՍԿԻՆ

Յարական կառավարությունը ղաղանորեն պատժում եր հեղափոխականներին:

Գնդապետ Ռիմանի պատժիչ ղորամասը 1905 թվի ղեկտեմբերին Մոսկվա յեկավ կաղանի յերկաթգծով: Այդ ղորամասը հայտնի եր իր անորինակ ղաժանությամբ:

Ռիմանը հրաման ստացավ.—  
— Ձերբակալվածներ չունենալ. լինել անողոք:

Յեվ ցարական ղահիճը ճշտությամբ կատարում եր այդ հրամանը: Նա իսկապես չեր ձերբակալում ու ղատում: Նա տեղում, առանց ղատի ու քննության, կախում ու սպանում եր:

Նա իր ուղին ծածկեց լավաղույն հեղափոխական բանվորների ղիակներով: Դրանց թվում հերոսաբար ընկավ մեքենավար Ուխտոմսկին:

Այդ տեղի ունեցավ Լյուբերցա կայարանում: Ուխտոմսկին բռնվեց պատժիչ ղորամասի կողմից:

Հարցաքննության ժամանակ նա հրաժարվեց իր անունը տալուց: Սպան ղիտելով լուսանկարները, նա նմանությունը ղտավ նրանցից մեկի ու ձերբակալվածի միջև.—

— Դու մեքենավար Ուխտոմսկին ես, ղու պիտի ղնդակահարվես:

— Յես այդպես ել ղիտեյի—հանդստությամբ պատասխանում ե Ուխտոմսկին:

Նրան ղաչտ տարան: Նրա հետ գնում էյին կապոտած ձեռքերով նույնպես մահվան ղատապարտված յերեք բանվոր: Ուխտոմսկին գնում եր ղլուխը բարձր պահած:

— Յես ղիտեյի,—ղիմեց նա սպային,—վոր ղուք ինձ կսպանեք, յեթե յես ընկնեմ ձեր ձեռքը: Դրա համար ել յես ինձ հանգիստ եմ ղղում: Իսկ հիմա լսեցեք: Յերբ Մոսկվայի բոլոր ձանապարհները բռնված էյին ձեր ղորքերով, յես բանվորական մար-

տական ջրկատին գնացը նստեցրած դուրս բերի ու փրկեցի մարտական ջրկատի գլխավոր մասնակիցներին ու գործադուլային կոմիտեյին:

Ամենավտանդավոր տեղում, բաց թեքության վրա, ուր դըրված էին ձեռք գնդացիները, յես գնացքի արագությունը հասցրի մի ժամում 70 կիլոմետրի: Յեզվ յերբ մեր գնացքը սարսափելի արագությամբ առաջ եր սուրում, ձեր գնդացիները ճարձատեցին: Սակայն նրանք սարսափելի չէին մեզ համար: Դուք այն ժամանակ վերավորեցիք 6 հոգու: Բայց վոչ վոքի չկարողացաք սպանել: Բուրբ փրկվեցին և այժմ հեռու յեն դտնվում: Դուք նրանց չեք կարող բռնել: Յես խմն արի: Այժմ դուք ձերն արեք, — վերջացրեց Ուխտոմսկին:

Սպանության տեղում Ուխտոմսկուն առաջարկեցին աչքերը կապել: Նա հրաժարվեց:

— Յես ուզում եմ մահվան դիմավորել դեմ առ դեմ, — ասաց նա:

Ուխտոմսկին լուսթյամբ հետևում եր գնդակահարության նախապատրաստություններին: Հետո բարձրաձայն դռաց. —

— Կապիտան, կրակեցե՛ք:

Լավեց համադարկը... Ուխտոմսկու ընկերներն անշունչ ընկան: Իսկ Ուխտոմսկին ձեռները կրծքին ծալած անշարժ մնաց:

Ձինվորները խոր հարգանքով եյին նայում, թե ինչպես են մեռնում հեղափոխականները: Նրանք, կարծես թե խոսքները մեկ արած, նրա կողքով եյին կրակում: Սպան բղավեց ղինվորները վրա, սպառնաց գնդակահարել:

Լավեց յերկրորդ համադարկը: Ուխտոմսկին ընկավ ձյան վրա: Նա դեռ կենդանի յեր և ամենայն գիտակցությամբ նայում եր ղինվորներին, շրջապատին:

— Կե՛ցե հեղափոխությունը, — բարձրաձայն ասաց նա:

Կապիտանը մոտեցավ Ուխտոմսկուն և ատրճանակից կրակելով սպանեց կարմիր մեքենավարին:

Բանվոր դատակարգի լավագույն մարդիկ այսպես եյին մեռնում հեղափոխության համար:

### § 43. ԱՅՐՎՈՒՄ Ե ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍԱՆԸ

Ամբողջ յերկրում մեկ այստեղ, մեկ այնտեղ դյուղացիական ապստամբություններ եյին բռնկվում: Ահա ականատեսի պատմածն այդ ապստամբություններից մեկի մասին. —

Մենք իջանք մի չքավոր դյուղացու մոտ: Խրճիթը փոքր եր, նեղ, մի պատուհանով ու ալշեցնում եր իր խեղճությամբ: Մեծ վառարանից սառնություն եր փչում: Սեղանի վրա ծխում եր անապակի փոքրիկ լամպը:

— Եսպես ել յեղանա՞հ, — ասաց մեր կառապանը, — ձյունը խփում ե յերեսիդ ու վրոնում, խավարից բան ել չի յերևում: Կարծում եյինք, վոր մեր վերջը հասել ե: Մեկ ել տեսանք փոքրիկ կրակ ե բոցկլտում... Ե՛հ, մտածում եմ, բարի մարդիկ են, խոր գիշեր ե, իսկ նրանք չեն քնել...

— Իսկ հիմա ո՞վ ե քնում, — կցկուտը ասաց տանտերը: — Հիմա քնելու ժամանակ չի... բավական ե, ինչքան քնեցինք: Եատ ենք քնել... հարկավոր ե վեր կենալ:

— Իսկ դուք ի՞նչ տեղից եք դալիս, — հարցրեց տանտերը:

— Կայարանից:

— Ահա թե վորտեղից: Ուրեմն յերկաթուղին աշխատո՞ւմ ե:

— Աշխատում ե:

— Ուրեմն գործադուլին վե՞րջ են դրել: Եղպես... նշանանակում ե չեն դիմացել: Իսկ մենք կարծում եյինք...

— Նու, ի՞նչ նորություն կա ձեր կողմերում. լավ բան սպասվո՞ւմ ե — նորից հարցրեց տանտերը, — թե՞ ամեն բան ճնշում են:

— Նա լոեց և ահավոր հանգստությամբ ավելացրեց. —

— Իմ ել... տղայիս սպանեցին:

— Ի՞նչպես սպանեցին, — հարցրի յես:

— Ենպես... խարաղանով:

Վառարանի վրա նվաղ հեծկտոցներ լավեցին: Տանտիրոջ դեմքը վրդովվեց:

— Նա՛ւ, բավական ե, — ասաց նա դառնալով դեպի վառարանը ու բացատրեց, — պատուխ ե... միշտ լաց ե լինում: Հենց վոր հիշում ե, սկսում ե... միակն եր... լսո՞ւմ ես, բավական ե:

Հեծկտոցները կտրվեցին, խրճիթում լուսթյուն տիրեց: Բուքը վրոնում եր դրսում ու խփվում պատերին, ապակուն: Տանտերը նստել եր ու գլուխը չեր բարձրացնում. նրա դեմքը խիստ եր ու դաժան:

Մի քիչ լուելուց հետո նա շարունակեց.—

— 18 տարեկան եր: Բանիմաց տղա յեր: Միշտ կայարան եր վազում թերթի համար: Յեղանակին մտիկ չեր անում, վազում եր: Մի ամբողջ կապոց բերում եր ու փողոց դուրս գալիս կարդում գյուղացիների համար: Ամբողջ գյուղը գլխին եր հավաքվում: Շատ լավ եր կարդում...

Նա մի քիչ կանգ առավ ու հետո համարյա փսփսալով վերջացրեց.—

— Յեվ վոնց ծեծեցին... բոլոր վոսկորները շարդեցին... աչքերը դուրս պրծացրին... Միսը վոսկորների վրայից թափվում եր...

— Պարզ, հասարակ հողագործ մարդիկ ենք: Ապրում եյինք փոսի մեջ: Լույս չեյինք տեսնում: Հող եյինք ճանկուում ու հողին նայում, սակայն հույս ունեյինք... աստուց ու ցարից վողորմություն եյինք սպասում: Մտածում եյինք, թե մեզ չե, դոնե մեր զավակներին... Ես ել քեզ ցարն ու աստվածը: Հիմա ել վոչ ցարին եմ հավատում, վոչ ել աստուցն... Ու եսպիսի մտքեր են պտտում գլխումս—թե դուք ուժով եք զոռում, մենք ել ուժով... մինչև ողակը վզիդ կանցկացնեն, լավ ե կացինը վերցրու:

Մեկ ել պատուհանից ինչ վոր թրխից լավեց և ինչ վոր մի դեմք մոտեցավ ապակուն:

Տանտերը դողաց և արագությամբ շարժվեց դեպի պատուհանը: Հետո կանգնեց, վերցրեց կացինը ու դուրս յեկավ:

Քիչ հետո հանկարծ հառաչանքի ձայներ լսվեցին: Մենք ա-կանջներս սրեցինք:

— Ահադանգ,— կանչեց կառապանը և խրճիթից դուրս խուժեց, ամբողջ ուժով զարկելով դուռը: Յես նեավեցի նրա հետևից:

Գյուղացիները դնում, վազում եյին դեպի կալվածատեր Գորդեյիվի կալվածքը: Ամբողջ գյուղը դուրս եր յեկել աղայի վրա, առաջից դնում եր չքավորների մեծ խումբը, նրա գլխին, մեծ կացինը ողի մեջ ճոճելով, դնում եր մեր տանտերը:

— Յեթե դուք ուժով եք զոռում, ապա մենք ել ուժով,—միշտ կրկնում եր նա:

Անցավ մոտ տասը րոպե: Գիշերային յերկնակամարի մուսյլ տարածության մեջ, վիթխարի ջահի նման, կրակի ու ծխի ծիրա-

նեդույն սյուն եր կանգնած: Դա կալվածատեր Գորդեյիվի տունն եր վառվում:

— Ե՛հ... այ մեկն ել,— ասաց կառապանը: Նա ցույց տվեց աջ կողմը: Այնտեղ լուսնյակի նման ինչ վոր մեծ ու լայն վարդապույն կետ եր շողչողում:



Նկ. 11. Հրդեհում են կալվածատերերի կալվածքները

— Ամեն որ վառում են,—նկատեց կառապանը,—դա վարապանովսիու ազարակնե՞րն են, թե իշխան իմեկելսիու շաքարի գործարանները...

Նա լուց նայելով հեռավոր հրդեհների շողին ու հանկարծ բացականչեց.—

— Սյրվում ե կալվածատիրական Ռոբաստանը:

§ 44. ԻՆՉՈ՞Ւ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՅ 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Ճնշվեց Մոսկվայի արարամբությունը: Դրանից հետո ցարական կառավարությունը ճնչեց նաև մյուս քաղաքների արարամբությունը:

Բանվորական գործադուլները դեռ յերկար բռնկվում եյին առանձին տեղերում: Գյուղացիական խռովությունները դեռ շարունակվում եյին գյուղում: Սակայն յուրաքանչյուր ամիս ավելի պարզ եր դառնում, վոր հեղափոխությունը պարտություն կրեց:



Յարական կառավարութեանը հաջողից իշխանութիւնը պահել իր ձեռքում և հետաձգել իր կործանումը:

Իսկ ինչո՞ւ պարտութիւն կրեց 1905 թվի հեղափոխութիւնը:

Հեղափոխութիւնը պարտութիւն կրեց, վորովհետև բանվորները վատ եյին զինված և ղեռ հեղափոխական պայքարի համար բավարար փորձ չունեյին:

Գյուղացիները բանվորների նման համառորեն չեյին պայքարում, նրանք անկազմակերպ եյին ու անվճռական: Գյուղացիների ապստամբութիւնները համաձայնեցված չեյին բանվորների յեւրոյթների հետ, այդ հանգամանքն էլ ոգնում եր թշնամիներին նախ և առաջ ջախջախելու հեղափոխութեան գլխավոր ուժը հանդիսացող բանվորներին, իսկ հետո էլ հեշտութեամբ ջախջախել նաև գյուղացիական ապստամբութիւնները:

Բանվոր դասակարգը չկարողացավ բանակն ու նախատորմիղը ժամանակին ներգրավել հեղափոխական պայքարի մեջ:

Յարին մեծ ոգնութիւն ցույց տվեց մյուս յերկրների բուրժուազիան: Իրենց շահերի համար ոտարերկրյա կապիտալիստները շատ փող տվին ցարին, վորպեսզի նա ճնշի հեղափոխութիւնը: Ոտարերկրյա կապիտալիստները ոռւսական կապիտալիստների հետ միաբան եյին գործում: Նրանք վախենում եյին, վոր չլինի թե իրենց բանվորներն ու գյուղացիներն էլ հետեւն ոռւսական բանվորներին ու գյուղացիներին որինակին:

### § 45. 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈՒՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1905 թվի հեղափոխութիւնը հսկայական նշանակութիւն ունեցավ բանվոր դասակարգի ու գյուղացիութեան համար:

Առաջին անգամ միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ վոտքի յեղան պայքարելու ինքնակալութեան դեմ:

— Բանվորներին հաղթեցին, — ասում եր լենինը, — սակայն դա մեկն է այն պարտութիւններից, վորոնք ապագա հաղթանակների գրավական են:

Բանվորներն ու գյուղացիները պարզ ատան իրենց դասակարգային թշնամիներին: Նրանք տեսան, վոր ցարը միաբան է կալվածատերերի ու կապիտալիստների հետ:

Հեղափոխութիւնը ցույց տվեց, վոր միայն բուլշևիկներն են բանվոր դասակարգի միակ հեղափոխական կուսակցութիւնը:

վորն ընդունակ է մինչև վերջը հասցնել բանվորների հաղթանակը ցարիղմի դեմ:

Բանվորներն ու գյուղացիները համողվեցին, վոր նրանք իրենց ազատութիւնը կարող են ձեռք բերել միայն ղենքը ձեռքին տապալելով ցարի, կապիտալիստների ու կալվածատերերի իշխանութիւնը:

Շահագործողների դեմ գյուղացիութեան մղած պայքարում բանվորների ղեկավար դերն աճում եր որ-որի: Բանվորները գործադրկութեան ժամանակ հայրենի վայրերը վերադառնալով՝ գյուղ եյին տանում բանվոր դասակարգի ձգտումները: Գյուղացիութեան մեջ առանձնապես խոշոր հեղափոխական աշխատանք եյին տանում այն բանվորները, վորոնք գործադուլ կազմակերպելու պատճառով գյուղ եյին աքսորվել:

### ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

1. Ու՞մ շահերի համար սկսեց պատերազմը ձապոնիյի դեմ և ի՞նչ տվեց նա բանվորներին ու գյուղացիներին:
2. Յարական կառավարութիւնն ի՞նչ նպատակով եր ջարդեր կազմակերպում:
3. Յարական կառավարութիւնն ի՞նչ նպատակով կազմակերպեց «ուսու բանվորների ընկերութիւնը»:
4. Բուլշևիկներն ի՞նչպէս վերաբերվեցին ղեպի ցարը կազմակերպող յերթին:
5. Ի՞նչ նշանակութիւն ունեցավ հունվարի 9-ը:
6. Ի՞նչպէս անցավ ու ի՞նչով վերջացավ հոկտեմբերյան գործադուլը:
7. Վ՞որտեղ կազմակերպվեցին առաջին խորհուրդները: Ո՞վ եր նրանց ղեկավարում:
8. Ի՞նչու պարտութիւն կրեց 1905 թվի հեղափոխութիւնը:
9. Բանվորներին և գյուղացիներին ի՞նչ սովորեցրեց 1905 թվի հեղափոխութիւնը:

### VI. ՀՈՎՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆԸ

#### § 46. ՊԱՅՔԱՐԸ ՁԻ ՎԵՐՋԱՅՆԸ

1905 թվի հեղափոխութիւնից հետո ցարական դահլճներն սկսեցին դաժան հաշվհարդար կատարել բանվորներին և գյուղացիներին հետ: Պատժիչ զորմասերը ման եյին դալիս ամբողջ յերկրում, կախում ու դնդակահարում եյին հեղափոխութեան մարկիներին, բանա եյին նստեցնում ազատութեան մասին ասված յուրաքանչյուր խոտքի համար:

Հատկապես խստորեն հալածում էին բոլշևիկներին: Կուսակցութիւնը հարկադրված էր նորից ընդհատակ անցնել<sup>1)</sup>:

Վ. Ի. Լենինը 1907 թվի դեկտեմբերին նորից արտասահման գնաց: Վոստրիկանովցիները մեծ յեռանդով փնտռում էր նրան, վորպեսզի սպանի:

Սակայն նույնիսկ այդ աներեւակայելի ծանր պայմաններում մեր կուսակցութիւնը չարունակում էր մեծ աշխատանք կատարել բանվորութեան մեջ:

«Հեղափոխութիւնը չի վերջացել» — ասում էին բոլշևիկները, — նա ջախջախել է, սակայն նա նորից պետի դա: Բանվորներն ու գյուղացիները նորից վտոգրի կկանգնեն ու կտապալեն ցարի և կալվածատերերի իշխանութիւնը»:

Բոլշևիկներն սկսեցին բանվորներին ու գյուղացիներին նոր ապստամբութեան պատրաստել իրենց կեղեքողների դեմ: Լենինը, ապրելով արտասահմանում, դեկավարում էր բոլշևիկյան կուսակցութեան աշխատանքը և բանվորների պայքարը:

Բանվորական շարժումն սկսեց կամաց-կամաց կազդուրվել 1905—1906 թվերին նրան հասցված պարտութիւններից: Գործադուլները հաճախակի դարձան: Ամրացավ բոլշևիկների կուսակցութիւնը: Հրատարակվել սկսեց բոլշևիկյան «Պրավդա» թերթը, վորի մեջ գրում էին Լենինը, Ստալինը, Մոլոտովը, Կալինինը և մյուս բոլշևիկները, նույնպես և բանվորները: «Պրավդան» մեծ հեղինակութիւն ուներ բանվորների շրջանում:

1917 թվի մարտին Լենն գետի հովտում (Միբիբ) վոսկեսանքերի բանվորները չդիմանանալով անողոր շահագործմանը, ըմբոստացան հանքերում տիրող կապիտալիստական կեղեքման դեմ: Նրանք գործադուլ հայտարարեցին, գործադուլային կոմիտե ընտրեցին և հանքերի պետին մի շարք պահանջներ ներկայացրին: Գործադուլավորները պահանջում էին Տ-ժամյա բանվորական որ, աշխատավարձի բարձրացում և այլն: Ցարական կառավարութիւնը դուրք ուղարկեց գործադուլավորների դեմ: Գործադուլային կոմիտեն ձերբակալեց: Իսկ յերբ բանվորներն իրենց կանանց ու յերեխանների հետ դիմեցին դեպի հանքերի վարչութիւնը և պահանջեցին աղատել գործադուլային կոմիտեն, նրանց վրա կրակ բաց

1) Ընդհատակ անցնել՝ նշանակում է գաղտնի աշխատել, կամ ինչպես ասում են՝ անիզալ աշխատել:

արին: Այդ արյունոտ սպանդանոցի հետևանքը յերկուստ 270 սպանված և 250 վիրավոր:



Անդեն բանվորները այդ զնդակահարութիւնը յարմար պահանջում էին բարեկամել հանքերում աշխատանքը անվտանգ դաժան պայմանները, ցնցեց բանվորական մասսաները: Ինչպես 1905 թվի հունվարի 9-ը հետո, Լենայի զնդակահարութիւնից հետո էլ գործադուլներն ընդգրկեցին ամբողջ յերկիրը: Պետերբուրգում բանվորներն սկսեցին բարիկաղներ կառուցել, զենքը ձեռքին դուրս գալ ցարի ու կապիտալիստների դեմ: Չնայած, վոր հեղափոխական բանվորներին անողոր կերպով ճնշում էին, նորից հեղափոխական շարժումը Ռուսաստանում որեց-որ աճում էր:

§ 47. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1914 թվին սկսվեց համաշխարհային պատերազմը, վորը բազմաթիվ տարիների ընթացքում պատրաստվում էր կապիտալիստների կողմից: Այդ պատերազմում միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ միմյանց կոտորում էին կապիտալիստների շահերի համար:

Պատերազմն սկսեցին մի կողմից Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան, վորոնց հետո միացան Թուրքիան ու Բուլղարիան, իսկ մյուս կողմից Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, վորոնց հետագայում միացան Իտալիան, Ճապոնիան, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները և այլ յերկրներ:

Այդ պատերազմում զերմանական կապիտալիստները հույս ունեցին թալանելու իրենց ավելի հարուստ դրացիներին — Անգլիային ու Ֆրանսիային: Գերմանական կապիտալիստները վաղուց պատրաստվում էին լլլելու նրանց աֆրիկյան, հնդկական ու չինական գաղութները: Նրանց այդ գաղութները հարկավոր էին, վորպեսզի այնտեղ սպառելին իրենց ապրանքները և հսկայական փող դիզելին այդ գաղութների բանվորների ու գյուղացիների եժան աշխատանքով:

Իսկ Անգլիան ու Ֆրանսիան վաղուց էր, ինչ պատրաստվում էին հարձակվել Գերմանիայի վրա: Այդ յերկրների կապիտալիստները չէին կարող թուլլ տալ, վոր ուժեղանա Գերմանիայի արդյունաբերութիւնը: Այդ նվազեցնում էր նրանց վաստակը: Դրա համար էլ անգլիական ու ֆրանսիական կապիտալիստները վաղուց պատրաստվում էին ջախջախելու Գերմանիային, լլլելու

նրանից նրա գաղութները և իրար ու իրենց դաշնակիցների մեջ բաժանելու Ալստրիայի ու Թուրքիայի հողերը :

Ռուսական կալիտալիստներն ու կապիտալիստներն Անգլիայի ու Ֆրանսիայի կողմը բռնեցին : Նրանք վաղուց յերազում եյին Թուրքիայից խել նրա մայրաքաղաքը—Կոնստանդնուպոլիս քաղաքը : Այդտեղից, Սև ծովի վրայով, ռուսական բուրժուազիայի համար ծովային ճանապարհ էր բացվում դեպի բոլոր յերկրները և մեծամեծ շահեր եր խոստանում :

Կապիտալիստները հիանալի կերպով հասկանում եյին, թե ինչի համար են նրանք կռվում : Նրանք ցանկանում եյին, վոր չին, հնդկի, թուրք բանվորն ու գյուղացին, նույնպես և աֆրիկյան գաղութների նեգրերն աշխատեյին իրենց համար : Նրանք ցանկանում եյին ել ավելի մեծ շահ ստանալ գաղութների աշխատավորութայն շահագործումից, վորոնց աշխատանքն եժան էր :

Սակայն պատերազմող յերկրներից յուրաքանչյուրի կապիտալիստները խարում եյին աշխատավորական մասսաներին, ասելով, վոր իրենք պատերազմում են իրենց ժողովրդի շահերի համար :

Պատերազմող բոլոր յերկրների տերտերները ազդային թշնամություն եյին բորբոքում, կոչ եյին անում պատերազմել «ճանուն հավատքի ու հայրենիքի» : Կրոնը կապիտալիստների ու նրանց կառավարութունների լավագույն ոգնականն էր, նա խարում էր բանվորներին ու գյուղացիներին, խրախուսում էր շահագործողների շահերի համար կատարվող մասսայական սպանությունները :

• § 48. ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ

Բուլշևիկներն իրենց առաջնորդ Լենինի գլխավորութայմբ ամբողջ աշխարհի առաջ բացահայտ կերպով դուրս յեկան պատերազմի դեմ : Լենինը մերկացնում էր կապիտալիստների պլանները, բացատրում թալանչիական պատերազմի եյությունը :

«Յուրաքանչյուր որ ավելի պարզ ե դառնում, — գրում էր Վլադիմիր Իլիչը, — վոր դա կապիտալիստների, խոշոր ավազակների պատերազմ է, վորոնք վիճում են միմյանց հետ, թե նրանցից վո՞րն ավելի շատ վորս ստանա, ավելի շատ յերկրներ թալանի, ավելի շատ ազդություններ ճնշի ու կողմնակիցներ գտնի :

Թալանչիական պատերազմը չի կարող ոգտվել բանվոր դասակարգի և գյուղացիութայն աջակցությունից» :

Բուլշևիկներն աշխատում եյին գլխավորների մեջ : Նրանք գլխավորներին ասում եյին, վոր թալանչիական պատերազմը վոչ մի ոգնություն չպիտի ստանա բանվոր դասակարգից ու գյուղացիությունից : Բանվորները պետք ե դուրս գան բուրժուազիայի դեմ : Նրանք պետք ե իմպերիալիստական պատերազմը վերածեն քաղաքացիական պատերազմի, այսինքն շահագործողների դեմ ուղղված աշխատավորութայն պատերազմի : Բուլշևիկները գլխավորներին յեղբայրանալու կոչ եյին անում :



Նկ. 10 Յեղբայրացումը ռազմաճակատում

Այդ տեսակետից հետաքրքիր ե հետևյալ դեպքը, վորը տեղի յե ունեցել պատերազմի ժամանակ : Չերնոյարսկի գոմնդը, վորում ծառայում էր գլխավոր Վալեար, հոկտեմբերի 3-ին վաղ առավոտյան հարձակման անցավ :

Չինվորները գնում եյին անտառի միջով : Հեռվում ումբեր եյին պայթում : Յուրաքանչյուր քայլում գլխավորները հանդիպում եյին պատերազմի սարսափների հետքերին : Թվերի տակ ու բաց անդերում սպանվածների դիակներ եյին փռված :

Վալեար և նրանց միացած գլխավորն անցան առաջին շարքերը և միտտին գնում եյին : Նրանք միտտին թրան մութ խրամատի մեջ :

— Պետք է ման գալ գետնափորերում, թերևս ուտելու բան գտնենք, — առաջարկեց Վալետին իրա ընկերը :

— Գնանք, — պատասխանեց Վալետը, — դու գեպի աջ, իսկ յետ գեպի ձախ : Մինչև մերոնց դալը մենք կստուգենք :

Նրանք տարբեր կողմեր գնացին : Վալետը յերեք գետնափոր մտավ, հանդիպելով սառած դիակներին : Վառքով բաց արեց չորրորդի դուռը և հաղիվ չընկավ իրեն անհասկանալի աղաղակից :

— Ո՞վ է, — հարցրեց գերմանացի զինվորն իր լեզվով՝ դուրս գալով գետնափորից : Եդ դո՞ւ յես, Ոտտո : Ինչո՞ւ եղպես ուշացար :

— Ձեռքները վե՛ր, — հանձնվի՛ր, — խուսոտ ձայնով կանչեց Վալետը մարտի պատրաստ :

Վախեցած գերմանացի զինվորը դանդաղությամբ բարձրացրեց բանվորական մեծ ձեռքերը և սարսափով նայում էր սվինի փայլուն ծայրին : Վալետը քայլեց դեպի գերմանացին :

— Փախի՛ր, — ասաց նա հետո փաղաքշական ձայնով, — փախի՛ր, գերմանացի : Յես քո դեմ վոչինչ չունեմ : Ձեմ կրակի :

Սակայն գերմանացին չե՛ր հասկանում նրան : Այն ժամանակ Վալետը հրացանը հենեց խրամատի պատին, առաջ շարժվեց ու առանց տատանվելու վերցրեց գերմանացու աջ ձեռքը :

— Յես բանվոր եմ, — ուրախությամբ ասաց Վալետը : Գողալով իր ժպիտից : Ի՞նչի համար յես պետք է քեզ սպանեմ : Փախի՛ր, — և նա իր աջ ձեռքով թեթև հրեց գերմանացուն, ցույց տալով անտառը, — փախի՛ր, թե չէ մերոնք շուտով վրա յես հասնելու :

Այսպես շարունակվեց մի քանի վայրկյան : Գերմանացու աչքերը հանդիպեցին Վալետի աչքերին և նրա հայացքը հանկարծ պայծառացավ ուրախ ժպիտով : Նա ամեն բան հասկացավ : Նա մի քայլ հետ գնալով ազատ մեկնեց իր ձեռքը և ամուր սեղմեց Վալետինինը :

— Դու ինձ չես բռնում, հիմա յես հասկացա : Դու ոուս բանվոր ես, վոնց վոր յես գերմանացի բանվոր... ուրախությամբ թոթովեց նա իր լեզվով :

Վալետը գերմաներեն չգիտեր, սակայն նա հասկացավ, թե ինչ էր ասում գերմանացի զինվորը : Նրա կոշտ ձեռները ծալվեցին ու ընկան կրծքին :

— Նո՛ւ, այո, յես բանվոր եմ, բոլշևիկ : Գլխի ընկար, հա՞ իսկ դու փախի՛ր... դե՛, բաժանվենք, յեղբայր : Ձեռքդ տո՛ւր :

չե՞ վոր մենք հարազատներ ենք, իսկ հարազատներն այդպես չեն քաժանվում :

Բնազդորեն միմյանց հասկանալով, միմյանց ձեռք սեղմած, իրար աչքերին ելին նայում : Բարձրահասակ, թիկնեղ բավարացին և փոքրիկ ոուս զինվորը, վորոնք քիչ առաջ թշնամիներ էլին, այժմ դաշնակիցներ դարձան :

Անտառից լսվում էլին մոտեցող զինվորների քայլերը : Բավարացին փսփսաց. — «ապագա դասակարգային մարտերում մենք կլինենք նույն խրամատներում, այնպես չե՞, ընկեր» — և արագությամբ դուրս թռավ :

### § 49. ԻՆՔՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՊԱՆՈՒՄԸ

Պատերազմն որ-որի ավելի յեր քայքայում բանվորներին ու գյուղացիներին : Դրանով նա նպաստում էր աշխատավորության հեղափոխական շարժմանը թե քաղաքում և թե գյուղում : Պատերազմի ընդհանուր տանջանքները միմյանց մոտեցրին բանվորներին ու գյուղացիներին, — զինվորներին, նավաստիներին ու կադակներին : Բանվորությունն ու չքավոր գյուղացիությունն ավելի ու ավելի ելին համոզվում, վոր միակ յելքը միայն ցարական ատելի կարգերի վոչնչացումն է : Ուժեղացան բանվորական գործադուլները : 1917 թվի սկզբի բանվորական շարժումը հիշեցնում էր սպառնալի 1905 թիվը :

Մի փոքրիկ կայծ էր հարկավոր, վորպեսզի բոցը բռնկեր : Այդ կայծը հանդիսացավ Պուտիլովի գործարանի (Պետրոգրադ) բանվորների գործադուլը, վորը նրանք հայտարարեցին 1917 թվի փետրվարի 18-ին : Բանվորների պահանջները չբավարարվեցին : Պուտիլովցիներին միացան մյուս գործարանների բանվորները :

Բանվորների հեղափոխական պայքարը ղեկավարում էլին բոլշևիկները : Փետրվարի 23-ին (մարտի 6-ին) սոված բանվորներն իրենց կանանց ու յերեխաների հետ բոլշևիկյան լոզունգներով փողոց դուրս յեկան :

«Հա՛ց», «կորչի՛ պատերազմը», «կորչի՛ ինքնակալությունը», «կեցցե՛ ամբողջ աշխարհի բանվորների յեղբայրությունը» :

Չորքը հրաժարվեց կրակել բանվորների վրա : Չինվորներն անցնում էլին հեղափոխության կողմը : Բոլշևիկները նրանց մեջ աշխատանք էլին տանում : Բանվորներին առաջինը միացավ Վոլինսկու գունդը՝ կարմիր դրոշակներ բարձրացնելով : Նրա որինա-

կին հետևեցին մյուս գնդերը: Սկսվեց Պետրոգրադի բանվորութ-  
վան ընդհանուր գործադուլը, վորն առաջին իսկ որն ընդգրկվեց  
250 հազար հոգի:

Փետրվարի 27-ին (մարտի 12-ին) ապստամբած բանվորու-  
թյանը միացան Պետրոգրադի բոլոր գորգերը:

Յարի բախտը վճովեց: Նիկոլայ II ցարը հարկադրված եր-  
հրաժարվել իշխանությունից: Յարն ու մինիստրները ձերբա-  
կալվեցին:

Փետրվարի 27-ը (մարտի 12-ը) համարվում է ինքնակալության  
տապալման օրը: Նա տապալվեց բանվորների և գյուղացիների  
միությամբ՝ բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

### § 50. ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ԳՐԱՎԵՅ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ ինքակալությունը տապալվեց, բանվորները դեռ բա-  
վարար չափով կազմակերպված չէին: Բոլշևիկները կուսակցու-  
թյունը, վորն այն ժամանակ նոր եր դուրս յեկել ընդհատակից,  
դեռ բավարար չափով ուժեղ չէր: Բանվորների և գյուղացիների  
մեծամասնությունը դեռ նրա կողմը չէր:

Յարի տապալումից հետո, կապիտալիստներն իշխանությունը  
վերցրին իրենց ձեռքը: Նրանք կազմակերպեցին իրենց ժամանա-  
կավոր կառավարությունը: Բուրժուական կառավարության մեջ  
մտան բազմաթիվ խոշոր ֆաբրիկատերեր ու կալվածատերեր:  
Պետրոգրադի բանվորներն ու զինվորները կազմակերպեցին Բան-  
վորական ու զինվորական պատգամավորների խորհուրդներ:  
Այդպիսի խորհուրդներ կազմակերպվեցին նաև Մոսկվայում ու  
խոշոր արդյունաբերական քաղաքներում: Սակայն խորհուրդները  
մեջ խցկվեցին կապիտալիստների պաշտպաններ մենչևիկներն ու  
եսերները: Մենչևիկներն ու եսերները—գրանք այն կուսակցու-  
թյուններն էին, վորոնց ոգնությամբ բուրժուական քայքայում  
եր աշխատավորության միասնական հեղափոխական ճակատը:  
Յել մենչևիկների ու եսերների ազդեցության տակ, փոխանակ  
անմիջապես և վերջնականապես իշխանությունն իրենց ձեռքն առ-  
նելու, խորհուրդները պաշտպանեցին ժամանակավոր կառավա-  
րությունը:

Ժամանակավոր կառավարությունը շարունակեց պատերազ-  
մը: Հողը մնաց կալվածատերերի, իսկ ֆաբրիկներն ու գործարան-

ները՝ կապիտալիստների ձեռքին: Զինվորները կոտորվում էին  
խրամասներում:

Սույն ավելի ու ավելի յեր գրոհում բանվորները վրա:

Բոլշևիկները բացատրում էին բանվորներին ու գյուղացի-  
ներին, վոր ժամանակավոր կառավարությունը խարում է նրանց,  
նրանք ապացուցում էին, վոր ժամանակավոր կառավարությու-  
նը պաշտպանում է բուրժուական շահերը: Բոլշևիկներն ասում  
էին, վոր հարկավոր է վերջ տալ պատերազմին, բանվորա-գյու-  
ղացիական կառավարություն հաստատել և սկսել նոր կյանք կա-  
ռուցել, ուր չեն լինի բանվորների ու գյուղացիների հաշվին ապ-  
րող շահագործողներ:

Բոլշևիկներն ավելի ու ավելի մեծ հաջողություն էին գտնում  
բանվորների ու զինվորների մեջ:

### § 51. ԼԵՆԻՆԸ ՅԵԿԱՎ

Բոլշևիկների կուսակցությունը դուրս գալով ընդհատակից  
սկսեց աճել և ուժեղանալ, վերադարձան բանտերը նետված և աք-  
սորավայրեր ու տաժանակիր աշխատանքի քչված հին մարտիկ-  
ները: Տարագրությունից վերադարձավ կուսակցության առաջ-  
նորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը:

Լենինը փետրվարյան հեղափոխության լուրն առավ Շվեյցա-  
րիայում, ուր նա յերկար տարիներ պարում եր տարագրության  
մեջ: Իլյիչը հենց վոր լսեց հեղափոխության մասին, վորոչեց ան-  
միջապես Ռուսաստան գալ:

— Հարկավոր է գնալ: Հարկավոր է այստեղից վորքան կարելի  
յե շուտ դուրս պրծնել: Թանգ է յուրաքանչյուր բուպեն, — ասում  
եր նա իր ընկերներին: Վլադիմիր Իլյիչը հուզվում եր, դիչեր-  
ները չէր քնում ու միշտ մտածում եր, թե ի՞նչպես գնալ Ռու-  
սաստան:

Դա դժվար խնդիր եր: Պատերազմ եր: Բոլոր ճանապարհները  
փակված: Վոչ մի յերկիր չէր համաձայնվի բաց թողնել բոլշևիկ-  
ների առաջնորդին:

Լենինը մեծադույն դժվարությամբ հասավ ուսական սահ-  
մանը: Լենինին դիմավորելու համար Պետրոգրադից դուրս յեկավ  
ընկ. Ստալինը: Բեռոստրովում միմյանց հանդիպեցին մեծ բոլ-  
շևիկ-հեղափոխականները: Կիսամութ վազոնում նրանք նախա-  
դեցին հեղափոխական պայքարի ծրագիրը:

1917 թվի ապրիլի 4-ին (17-ին) Լենինը Պետրոգրադ (Լենինգրադ) հասավ: Գիշեր եր: Ֆինլյանդական կայսրանն ու հրապարակը վողողված եր լուսարձակների լույսով, լցված եր բանվորներով ու զինվորներով: Իրենց առաջնորդին էլին սպասում:

Ահա, վերջապես մութ հեռվում կրակներ շողացին: Ահա, վառ լուսավոր գնացքն ձեռն նման պտույտ արեց... անխիղճները զրնգացին, շողեմեքենան փնչաց ու կանգ առավ:

Նվազախումբն «Խնտերնացիոնալ» նվագեց: Գիմավորողները նետվեցին դեպի վազոնները: Հինգերորդ վազոնից դուրս յեկավ Վլադիմիր Իլյիչը, նրա հետևից Ն. Կ. Կրուպսկայան և ընկերները:

Զգա՛ստ—կայսրանում, հրապարակում տարածվեց պատվո պահակ կանգնած զինվորական մասերին, բանվորական զինված շուկատներին ուղղված հրամանը: Բոլոր նվագախմբերը թնդացին, բոլոր զորքերը պատվո կեցվածք ընդունեցին:

Մարդկային ձայները բողբոջապես լուցին: Միայն նվագախմբերի վողերի ձայնն եր դղրդում: Հետո հանկարծ միանգամից, վոնց վոր ամեն բան ցնցվեց, վորոտաց հուժկու, ցնցող և սրտաբուխ «ուռոտան»...

Վլադիմիր Իլյիչը քաղցր ու ուրախ վողջունեց բոլորին, ուզում եր իրեն հատուկ արագ քայլերով առաջ գնալ, սակայն յերբ վորոտաց «ուռոտան», նա կանգ առեց և կարծես թե մի քիչ չփոփված հարցրեց.—«սա ի՞նչ բան է»:

— Դա հեղափոխական զորքն ու բանվորութունն է ձեզ վողջունում,—ասացին նրան:

Անլուելի «ուռոտան» տարածվում եր հեղափոխական ամբողջ մայրաքաղաքում: Բանվորներն ու զինվորները խանդավառութամբ գիմավորեցին իրենց առաջնորդին:

— Ժամանակավոր կառավարութունը խարում է բանվորներին ու գյուղացիներին,—ասում եր Լենինը բարձրանալով դրահապատ ավտոմոբիլի վրա:

— Ժողովրդին խաղաղութուն, հող ու հաց է հարկավոր:

— Կեցցե՛ք, սոցիալիստական հեղափոխութունը:

Նորից խանդավառության բուռն պոթիկումներ:

Իլյիչը դրահապատի վրա նստած մտնում է հեղափոխական մայրաքաղաքը: Նա պտտում է բանվորների և զինվորների խիտ շարքերի միջով, վորոնց վողեորության սահման չկար:

— Յեկավ Լենինը: Յեկավ առաջնորդը,— ասում էլին բանվորները:

## § 52. ԻՆՉ ԵՐ ԱՍՈՒՄ ԼԵՆԻՆԸ

Լենինն իր գալու հենց առաջին գիշերը յեկույթ ունեցավ բողջեիկների, բանվորների ու զինվորների մեծ ժողովում: Այդտեղ Վլադիմիր Իլյիչն արտասանեց իր հռչակավոր ճառը: Նա ցույց տվեց, թե բանվորներն ինչպես պետք է պայքարեն իշխանության համար:

Լենինը հայտարարեց, վոր ժամանակավոր կառավարութունը բանվորներին ու գյուղացիներին յերբեք խաղաղութուն, հող ու հաց չի տա: Նա պաշտպանում է հարուստների շահերը և միայն նրանց շահերի համար է հարյուր հազարավոր և միլիոնավոր աշխատավորների պատերազմ ուղարկում:

— Վո՛չ մի պաշտպանութուն չպիտի ցույց տալ ժամանակավոր կառավարությանը,—ասում եր Վլադիմիր Իլյիչը:

Լենինը պահանջում եր անմիջապես դադարեցնել պատերազմը, կալվածատերերի ամբողջ հողն առանց փրկագնի, ձրի բաժանել գյուղացիներին:

— «Կո՛րչի թալանչիական պատերազմը, հողը գյուղացիներին»,— ասում եր նա:

Լենինը պահանջում եր, վորպեսզի իշխանութունն անցնի թորհուրդների ձեռքը:

— Ամբողջ իշխանութունը խորհուրդներին,—ասում եր նա:

Բողջեիկների կուսակցութունը պետք է պայքարի, վորպեսզի իր շուրջը համախմբի պրոլետարիատին ու զինվորությանը: Հարկավոր է պայքարել խորհուրդների ղեկավարութունը բողջեիկյան դարձնելու համար: Այն ժամանակ խորհուրդները բողջեիկների գլխավորութամբ բանվորներին ու աշխատավոր գյուղացիությանը խաղաղութուն, հող ու հաց կտան:

Լենինն ասում եր, վոր բանվորները հեղափոխութուն են կատարել վոչ թե նրա համար, վոր իշխանութունն անցնի իրենց շահագործողներին—կապիտալիստներին: Բանվորները պետք է իշխանութունը վեցնեն իրենց ձեռքը, վորպեսզի նոր, լավագույն կյանք կառուցեն:

Յեվ այժմ դրա համար պետք է պատրաստել բանվորներին քաղաքներում և չքավոր գյուղացիությանը՝ գյուղերում:

Բանվորներն ու գյուղացիներն որ-որի ավելի էյին համոզ-վում, վոր բոլշևիկները ճիշտ են ասում: Տանջված զինվորները խաղաղություն էյին սպասում: Քաղցն որից-որ ուժեղանում եր: Հողը մնացել եր կալվածատերերի ձեռքում: Կառավարությունը վոչինչ չեր անում բանվորների ու գյուղացիների համար:

Բոլշևիկները համառությամբ մերկացնում էյին ժամանակա-վոր կառավարության դավաճանությունը: Բանվորական, զինվո-րական և գյուղացիական դանդախներն ավելի ու ավելի էյին հա-մախմբվում կուսակցության և նրա առաջնորդ Լենինի շուրջը: Բանվորական մեծ ցույցեր կազմակերպվեցին: Պետրոգրադի բանվորներն ու զինվորները բոլշևիկների ղեկավարությամբ բազմաթիվ անգամ ցույցեր կազմակերպեցին՝ պահանջելով խա-ղաղություն, հող ու հաց և իշխանության հանձնումը խորհուրդ-ներին: Գյուղերում գյուղացիներն սկսեցին հողը խլել կալվածա-տերերից:

Բուրժուազիան աշխատում եր լավագույն հեղափոխական զնդերը մայրաքաղաքից դուրս հանել և այդպիսով թուլացնել հե-ղափոխությունը: Այդ բոլորը նորանոր դժգոհություններ էյին առաջացնում աշխատավորության մեջ:

Պետրոգրադի բանվորներն ու զինվորները հուլիսի 3-ին նորից զինված փողոց դուրս յեկան: Սկսվեց հեղափոխական մասսաների աննախընթաց ցույցը:

— Կո՛րչի պատերազմը: Կո՛րչին կատալիստ մինիստրներ-ը, հրդը՝ գյուղացիներին, ամբողջ իշխանությունը խորհուրդ-ներին, — պահանջում էյին բանվորներն ու զինվորները:

Սակայն բոլշևիկների կուսակցությունը դիտեր, վոր դեռ բո-լոր ուժերը պատրաստ չեն: Ճակատում բանակը դեռ հավատում եր ժամանակավոր կառավարությանը: Դեռ բոլոր բանվորները, զինվորները և գյուղացիները չէյին հասկացել պայքարի հետագա ընթացքը: Ապստամբությունը կարող եր պարտությամբ վերջա-նալ: Դրա համար ել կուսակցությունը բոլոր միջոցները ձեռք ա-ռավ, վորպեսզի բուրժուազիան չջախջախի բանվորության ու-ժերը: Կուսակցությունը կոչ եր անում խաղաղ ցույց կազմակեր-պել «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լողունգով:

Ժամանակավոր կառավարությունը հրամայեց զենքի ուժով

ձնչել բանվորների ու զինվորների ցույցը: Ճակատից յեկան դեռ կառավարությանը հավատարիմ մնացած զորքերը և սկսեցին կրակել իրենց յեղբայրների վրա:

Սկսվեց հաշվահարդարը—ձերբակալեցին բոլշևիկներին և հե-ղափոխական բանվորներին: Բոլշևիկյան «Պրավդա» թերթը խա-փանեցին: Բուրժուազիան կատաղի հալածանք սկսեց Լենինի դեմ: Նրա գլխի համար նշանակվեց 200 հազար ռուբլի:

§ 54. ԼԵՆԻՆԸ ԸՆԴՀԱՏՍԿՈՒՄ

Բուրժուազիան Լենինին փնտռում եր, վորպեսզի նրան սպա-նի: Լենինը կուսակցության Կենտկոմի վորոշմամբ ընդհատակյա դրության անցավ:

Բանվոր Յեմելյանովը Լենինին թաղցրեց իր տանը, Սեստյո-րեցկում, Պետրոգրադից վոչ շատ հեռու: Վլադիմիր Իլյիչը տե-ղավորվեց չարդախում: Սակայն այնտեղ յերկար մնալ չեր կա-րելի, բազմաթիվ լրտեսներ ու վոստիկաններ հետևում էյին նրան:

Հարկադրված էյին ավելի անվտանգ տեղի մասին մտածել: — Սոտհարքի ժամանակ ե, — ասաց Յեմելյանովը: Ի՞նչ կլի-նի, Վլադիմիր Իլյիչ, յեթե ձեզ մարդաղետին տանենք: Սուր տեղ ե—անտառում մարդաղետին: Չեզ համար ենտեզ հնձվորի զիչերատեղ կսարքեմ:

Լենինն ընդունեց այդ առաջարկը: Հաջորդ ուրը Ռադլիվ փոք-րիկ լճակից են կողմը, մարդաղետնի ու անտառի մեջ արագու-թյամբ տաղավար սարքվեց: Տաղավարը պատրաստեցին ճյուղերից և խոտով ծածկեցին: Կողքին ել խոհանոց սարքեցին—ցցեր տըն-կեցին, վրան փայտ դրին ու փայտից մի փոքրիկ կաթսա կախե-ցին:

Լենինի տաղավարը շուտով «հեղափոխության շտաբը» դար-ձավ: Լենինն այստեղ շատ աշխատեց: Պետրոգրադից նրա մոտ էյին դալիս ընկերները և խորհուրդներ ստանում նրանից: Լենինն ընկերներին սովորեցնում եր, թե ինչպես պատրաստել և անցկաց-նել զինված ապստամբությունը, վորպեսզի հաղթանակը մնա բան-վորների կողմը:

Գաղտնի վոստիկանները գլուխները կորցրին: «Հարվածային դումարտակի» 50 սպաներ յերգվեցին, վոր նրանք «կամ կմեռնեն, դումարտակի» Թերթերը գրում էյին, վոր Լենինը թաղ-կամ կգտնեն Լենինին»: Թերթերը գրում էյին, վոր Լենինը լրա-նըվել ե սուղանավում, վոր նա ողանավով փախել ե: Լենինը լրա-

գրական գրչակներին «Տնարարյան խեղճատակներ» եր անվանում և ծիծաղում եր բուրժուազիայի հնարած ստերի վրա :

Աշխան անձրեներն սկսվեցին : Այլևս հնարավոր չեր տաղավարում մնալ : Այդ ժամանակ ընկ . Յեմելյանովը Լենինի համար բանվոր Կոնստանտին Պետրովիչ Իվանովի անունով անցադիր ճարեց :

Լենինի համար կեղծամ, բանվորի հագուստ ճարեցին, դեմքը գրիմ արին : Իլյիչը դարձավ իսկ և իսկ Կոնստանտին Պետրովիչ, վորի նկարը փակցված եր անցադրի վրա :

Լենինը վստահելի մեքենավարի մոտ շոգեմեքենայի վրա հնոցապան դարձրին : Վլադիմիր Իլյիչն այդ յեղանակով անցավ Ֆինլանդիա, ուր թաղնվեց համարյա մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը :

Այստեղից Լենինը շարունակում եր ղեկավարել կուսակցությունը : Նրա ղեկավարությունը Ստալինը, Սվերդլովը, Չերտինսկին, Բուրնովը և այլ բոլշևիկներ նախապատրաստեցին ապստամբությունը :

Մոտենում եյին բուրժուազիայի իշխանությունի վերջին որերը :

§ 55. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսյան որերից մի ամիս հետո Պետրոգրադում տեղի ունեցավ կուսակցության հերթական համագումարը : Այդ համագումարն անցավ առանց Լենինի, ընկ . Ստալինի ղեկավարությամբ : Ստալինը միշտ կապ եր պահպանում Լենինի հետ և նրանից ցուցումներ եր ստանում, թե ինչպես պետք ե գործել :

Համագումարը, հետևելով ընկ . ընկ . Լենինի և Ստալինի ցուցումներին, վորոշեց ուժերը նախապատրաստել զինված պայքարով իշխանությունը գրավելու համար :

Բոլշևիկները թուրքիկներ եյին տարածում բանվորների և զինվորների մեջ և նրանց հետ զրուցում եյին այն մասին, թե հարկավոր ե վերջ տալ պատերազմին, քչել բուրժուազիային և կալվածատերերին : Կուսակցություն ամենուրեք Կարմիր զվարդիայի ջոկատներ ստեղծեց : Այդ ջոկատների մեջ քաղաքներում մտնում եյին նվիրված բանվորները և գյուղերում՝ չքավորները :

— Դուք չպետք ե միմյանց սպանեք, — գրում եյին բոլշևիկները բանվորներին, զինվորներին և գյուղացիներին ուղղված կոչերում : Չեր թշնամիները հարուստներն են, կալվածատերերը,

Փարրիկատերերը և բոլոր նրանք, ովքեր նրանց հետ միաբան են Դուք պետք ե ձեր զենքը նրանց դեմ բարձրացնեք :

Բուրժուազիան ել եր պատրաստվում : Նա հավաքում իր իր ուժերը — յուսկեներին, սպաներին, աշխատում եր հեղափոխական զնդերը մայրաքաղաքից դուրս հանել : Ժամանակավոր կառավարության նախագահ Կերենսկին հեղափոխությունը ճնշելու համար աշխատում եր ճակատից դուրք բերել Պետրոգրադի վրա :

Հուլիսյան որերը բանվորներին և գյուղացիներին փայլուն կերպով ցույց տվին, թե ո՞ւմ շահերն ե պաշտպանում ժամանակավոր կառավարությունը : Բանվորներն ու գյուղացիները զնուժ եյին բոլշևիկների հետևից : Գյուղերում գյուղացիները խլում եյին աղաների կալվածները, քչում ու սպանում եյին նրանց տերերին : Զինվորները թողնում եյին խրամատները, տուն եյին զնում, ել չեյին ուզում պատերազմել հարուստների շահերի համար :

1917 թվի սեպտեմբերին թե Պետրոգրադում և թե Մոսկվայում խորհուրդներն անցան բոլշևիկների ձեռքը : Նրանց պատգամավորների մեծ մասը բոլշևիկների հետևից եր զնում :

Լենինը Ֆինլանդիայից գրում եր . —

— Բանվորների և զինվորների մեծամասնությունը մեր կողմն ե : Հաղթանակն ապահովված ե : Հարկավոր ե շուտ սկսել ապստամբությունը :

Հասունացել եր ոլորտաբանական հեղափոխությունը :

Կուսակցությունը Լենինի գլխավորությամբ բանվորներին և գյուղացիներին աանում եր զեպի այդ հեղափոխությունը :

§ 56. ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԳՐԱՎԵՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1917 թվի հոկտեմբերի 10-ն ե : Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն գաղտնի կերպով հավաքվել ե մի փոքրիկ սենյակում : Նիստին ներկա յե Լենինը : Նա անճանաչելի յե — մի րուքը խուզել ե, գլխին կեղծամ ե դրել :


Լենինը հուզված եր, վոր չլինի թե ապստամբության համար բարենպաստ մոմենտը բաց թողնվի : Դրա համար ել հոկտեմբերի 9-ին Իլյիչն անսպասելի կերպով Պետրոգրադ յեկավ, չնայած վոր նրան կարող եյին ձերբակալել : Կերենսկու գաղտնի վոստիկաններն ամենուրեք փնտռում եյին նրան :

Լենինն ասում եր . —



— Բանվորները բուլճերիկները կողմն են: Զինվորները բուլճերիկների կողմն են: Գյուղական չքավորութունը բուլճերիկների կողմն է: Հաղթանակն ասպհովված է: Բուլճերիկները պետք է գրավեն իշխանութունը: Դանդաղել չի կարելի:

Լենինն ապացուցում էր, վոր ուժերը յերկու մայրաքաղաքներում—Պետրոգրադում և Մոսկվայում—պետք է միաժամանակ հավաքել, հակառակորդին հանկարծակիի բերել, մոմենտը վորսալ, քանի նրա զորքը ցրված է: Հարկավոր է Պիտերը կտրել, գրավել այն՝ նախատորմի, կարմիր գվարդիականների և զինվորների գրոհով:



Նկ. 11. Իլյիչն Սմոլնիում

Հետո յելույթ ունեցավ ընկ: Ստալինը: Նա ամբողջ ուժով ապաշտպանում էր Լենինի առաջարկը:

Կենտրոնական Կոմիտեն վորոշեց.—«սկսել զինված ապստամբութունը»:

Կուսակցութունն սկսեց համարձակ կերպով ու վճռականորեն բանվորներին պատրաստել ապստամբության համար: Ռազմական ղեկավարության համար Կենտրոնական Կոմիտեն հոկտեմբերի 13-ին Ռազմահեղափոխական կոմիտե ընտրեց: Ռազմահեղափոխական կոմիտեյի մեջ մտան ընկ. ընկ. Ստալինը, Սվերդլովը, Զեյդենշտեյնը, Բուրժուիզի և Ուրիցկին:

Ռազմահեղափոխական Կոմիտեն իր կոմիտարներին ուղարկեց բոլոր զորամասերը:

Կերենսկին հրաման արձակեց ձերբակալել Ռազմահեղափոխական Կոմիտեյի կոմիտարներին: Սակայն Կերենսկուն վոչ վոք չէր լսում: Զինվորները վորոշումներ եյին ընդունում.—«հնազանդվել միայն Հեղկոմի հրամաններին»:

Հոկտեմբերի 25-ին նշանակված էր խորհուրդների համառոտական համադումարը: «Մենք պետք է նվաճված իշխանութուն տանք համադումարին: Վոչ մի դեպքում իշխանութունը չթողնել Կերենսկու ձեռքում մինչև հոկտեմբերի 25-ը: Գործը վճռել այսօր, անպայման յերեկոյան կամ գիշերը: Հարկավոր է ինչ գնով ել լինի՝ այսօր յերեկոյան, այսօր գիշերը ձերբակալել կառավարութունը, զինաթափել ու հաղթահարել յունկերներին ու սպաներին»—գրում էր Վլադիմիր Իլյիչը հոկտեմբերի 24-ին:

Հոկտեմբերի 24-ի յերեկոյան ընկ. Լենինը մի կերպ Սմոլնի հասավ,— ուր տեղավորված էր կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և Հեղկոմը, վորպեսզի այդտեղից ղեկավարի ապստամբութունը:

§ 57. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՄԻՔՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Դեռևս հոկտեմբերի 23-ին Ռազմահեղափոխական կոմիտեյի կողմն անցավ Պետրոպոլյայի ամբողջ կայազորը, վորի զինանոցներում պահվում էյին 100 հազար հրացաններ: Այդ հրացաններով զինվեցին Կարմիր գվարդիան և կայազորի այն զորամասերը, վորոնք անցել էյին Ռազմահեղափոխական կոմիտեյի կողմը:

Հոկտեմբերի 24-ին Ռազմահեղափոխական կոմիտեն զորքերը քաշեց Սմոլնու կողմը և անցավ ախտիլ ռազմական գործողությունների: Ռազմական յելույթին ռժանդակելու համար Հելսինգֆորսից պահանջվեցին նավատիրներ:

Լենինը ամբողջ ժամանակ ղեկավարում էր հեղափոխական զորքերի շարժումները:

Հոկտեմբերի լույս 25-ի գիշերը հեղափոխական ջոկատները գրավեցին կայաքաններն ու կամուրջները: Առավոտյան ժամը 8-ին գրավված էյին հեռագրատունն ու հեռախոսային կայանը:

Պետրոգրադում ապստամբության հաջողութունն ապահովված էր: Իշխանութունը փաստորեն տնցավ Ռազմահեղափոխական կոմիտեյի ձեռքը:

Յերեկվա ժամը 2-ն անց 30 րոպեյին Ռազմա-հեղափոխական կոմիտեյի կողմից հրաժիրվեց բանվորական և զինվորական պատ-  
գամավորները լենինգրադի խորհրդի նիստ: Նիստին յեւույթ ու-  
նեցավ լենինը:

Նա ասաց—

— Ընկերներ, բանվորական և գյուղացիական հեղափոխու-  
թյունը, վորի մասին ամբողջ ժամանակ խոսում եյին բոլշևիկ-  
ները, կատարվեց: Այդ հեղափոխությունը բանվորներին ու գյու-  
ղացիներին կհասցնի սոցիալիզմի հաղթանակին: Կեցցե համաշ-  
խարհային պրոլետարական հեղափոխությունը:

Յերեկոյան կողմ արդեն կառավարական բոլոր հիմնարկները  
գրավել եյին ապստամբ զորքերի կողմից: Ժամանակավոր կա-  
ռավարությունը սպաների ու յունկերների հետ թագնւել եր Զմե-  
րային պալատում:

Ռազմա-հեղափոխական կոմիտեյի կոմիտար ընկ. Անտոնով  
Ռվսեյնկոն ժամանակավոր կառավարությանը հանձնեց վերջին  
պահանջը,—

— Անմիջապես հանձնվել: Մտածելու համար տրվում ե 20  
րոպե: Յեթե կառավարությունը չհանձնվի, ապա պալատի վրա  
թնդանութները կրակ կբացվի:

Կառավարությունը լուծ եր, պատասխան չեր տալիս: Զմե-  
ռային պալատի շուրջ հրացանաձողություն սկսվեց:

Յերեկոյան ժամը 10-ն անց 40 րոպեյին Սմոլնիում բացվեց  
Խորհուրդների Համառուտական 2-րդ համագումարը: Համագու-  
մարին ներկա եյին յերկրի բոլոր ծայրերից յեկած ավելի քան 600  
պատգամավորներ:

Համագումարը լարվածորեն հետևում եր Սմոլնի պատերից  
գուրս տեղի ունեցող մեծ պայքարին:

Հանկարծ լավեց հեռավոր խլացուցիչ մի վորոտ: Պատուհան-  
ների ապակիները ցնցվեցին: Բոլորը հասկացան թե բանն ինչումն  
ե: Դա՛ «Ավրորայի» նավաստիները համազարկ տվին Զմերային  
պալատին:

Սկսվեց գրոհը:

Սեղմ ողակով պալատը պաշարող կարմիր զվարդեիականները,  
նավաստիներն ու զինվորները հարձակվեցին Զմերայինի վրա:


Կրակոցներից լուսավորվող գիշերային խավարի մեջ ահար-

կու սավերները նման առաջ եր շարժվում բանվորները, նավաս-  
տիների և զինվորների շղթան:

Դեպի պալատ եյին արշավում զինվորներով ծանր բեռնավոր-  
ված գրահապատները, ավտոմիբիլները: Թուչում եյին ձիավորները:

— Կեցցե պրոլետարական հեղափոխությունը, — գոչում եյին  
գրոհող զորքերը:

Առաջինը պալատի հրապարակը ներխուժեց Պուտիլովի գոր-  
ծարանի բանվոր Կրիվենկոյի հրամանատարությամբ գործող կար-  
միր զվարդեիական ջոկատը: Գնդակների կարկուտը թափվեց նրանց  
վրա: Յունկերները կրակում եյին գնդացիներից ու հրացաննե-  
րից, ումբեր եյին նետում:



Նկ. 12 «Ավրորա» համամովի նավատի կարմիր զվարդեիականներ

Սակայն վոչինչ չեր կարող կանգնեցնել հեղափոխական գոր-  
քերի գրոհը:

Գերանները դեն շարտելով, փայտի կույտերի վրայից ցատ-  
կելով, ընկնելով ու կանգնելով, կարմիր-զվարդեիականների ու  
նավաստիների ջոկատները նետվեցին դեպի պալատի դռները:  
Նրանց հետևից շտապում եյին զինվորները՝ լցնելով բոլոր փողոց-  
ներն ու հրապարակը:

Յունկերները սարսափահար նետվեցին դեպի պալատի ներսը:

— Առա՛ջ, ընկերներ՛ր, — կանչում եյին կարմիր հրամանատար-  
ները, — վոչնչացնել թշնամուն:


Պալատի ներսում, միջանցքներում և սանդուխտների վրա

սկսվեց վերջին բռնամարտը: Գրավում էին սենյակ առ սենյակ: Սակայն հանկարծ, ընդհանուր աղմուկի մեջ կարմիր գլխազինակները, նավաստիները և զինվորները լսեցին պետի հրամանը: Նրանք ձանապարհ տվին և առաջ անցավ ընկ. Սնտոնով—Ուսեյենկոն:

— Բավական է, — լծոթարար ասաց նա յունկերներին, — դիմադրելն անողուտ է: Ձեռքերը վար դրեք: Վո՞րտեղ է ժամանակավոր կառավարութունը—հարցրեց նա:

Յունկերներից մեկը բացեց այն առանձնասենյակի դուռը, ուր նստել էին վոլորմելի ու անողնական մինխտրները:

— Ժամանակավոր կառավարութունը խնդրում է հաղորդել, վոր նա զիջում է ուժին և հանձնվում է—ասաց յունկերը:



Նկ. 13 Ձմեռային պալատի գրավումը

Անտոնով—Ուսեյենկոն մինխտրներին ձերբակալեց և կես ժամից հետո արդեն Սմոլնիումն էր:

Համադումարը «ուռա» գոչելով դիմավորեց պալատի գրավման և ժամանակավոր կառավարության ձերբակալելու լուրը:

Այսպես, Ռուսաստանում 1917 թվի հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով նոյեմբերի 7-ին) վոչնչացվեց կապիտալիստների և կալվածատերերի իշխանութունը:

Խորհուրդների համադումարը Ռուսաստանը հայտարարեց Խորհրդային սոցիալիստական հանրապետութուն:

Համադումարը հանրապետության գլուխ դրեց Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը: Վ. Ի. Լենինը ընտրվեց նրա նախագահը:

Սուաջին անդամ պատմության մեջ հաստատվեց բանվոր դասակարգի իշխանութունը:

## § 58. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Պետրոգրադից հետո համարյա ամբողջ յերկրում հաստատվեց խորհուրդների իշխանութունը: Միայն մի քանի ծայրամասերում դեռ իշխանության գլուխ էին մնացել աշխատավորության թշնամիները՝ ջախջախված Հոկտեմբերյան հեղափոխության կողմից: Նրանք հենվում էին սպանների, յունկերների և բուրժուազիայի այլ կողմնակիցների վրա: Ձինվորների և կազակների մի մասը, խարսված բոլշևիկների մասին տարածված սուտ լուրերից, վորոշ ժամանակ պաշտպանում էր իր դասակարգային թշնամիներին: Դրա համար էլ մի շարք քաղաքներում պրոլետարիատի իշխանութունը հաստատվեց Պետրոգրադի նման աշխատավորության և բուրժուազիայի կողմնակիցների միջև տեղի ունեցող կատաղի մարտերից հետո: Աշխատավորության թշնամիները հատկապես համառ դիմադրութուն ցույց տվին Մոսկվայում:

Մոսկվայում հոկտեմբերյան մարտերը ղեկավարում էր Ռադմա-հեղափոխական կոմիտեն: Նրա շտաբը գտնվում էր քաղաքի կենտրոնում, այն տան մեջ (նախկին Տվերյան, այժմ Գորկու վոլոդոյ), ուր ներկայիս գտնվում է Մոսկվայի Խորհուրդը:

Սակայն Մոսկվայի մնացած կենտրոնական մասը համարյա ամբողջությամբ գտնվում էր ժամանակավոր կառավարության կողմնակիցների ձեռքում: Նրանց ուղղակիան ուժերը նստել էին Կրեմլում, վորի բարձր պարիսպների հետևում հարմար էր պաշտպանվել:

Ռադմա-հեղափոխական կոմիտեն Կրեմլը պաշտպանողներին առաջարկեց հանձնվել: Նրանք հրաժարվեցին: Սկսվեց կռիվը:

Բանվորական ռայոններից կարմիր-գլխազինակների և զինվորների ջոկատները շարժվեցին դեպի կենտրոնը, կռվով նվաճելով յուրաքանչյուր թիղ հողը: Բարձր տներից, Կրեմլի ստամա-

վոր պարիսպներէց նրանց վրա զնդակներ ելին տեղում, զնդա-  
ցրային կրակ եր թափվում:

Յունիկերներէ և սպաներէ զնդակներէց բազմաթիւ մարտիկ-  
ներ ընկան Կարմիր հրապարակում: Սակայն հեղափոխութեան



Նը. 14 Կրեմլի գրավումը

անձնվեր բանվորներն ու զինվորներն առաջ ելին շարժվում: Կրեմ-  
լի շուրջը ավելի ու ավելի յեր սեղմվում պրոլետարական ջոկատ-  
ների յերկաթյա ողակը:

Նոյեմբերի մեկին Ռազմա-հեղափոխական կոմիտեն հրամայեց  
թնդանութային կրակ բաց անել Կրեմլի վրա: Նոյեմբերի յերկուսին  
Կրեմլն անձնատուր յեղավ: Մասկվան գարձավ խորհրդային:

### § 59. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԵԿՐԵՏՆԵՐԸ

Հոկտեմբերյան ապստամբութեան հաջորդ ուրը, հոկտեմբերի  
26-ին (նոյեմբերի 8-ին) տեղի ունեցավ Խորհուրդների համագու-  
մարի յերկրորդ նիստը:

Այդ նիստում յերույթ ունեցավ Լենինը, վորը խանդավառու-  
թյամբ ընդունվեց համագումարի անդամների կողմէց: Բոլորը  
վոտքի կանգնած վողջունեցին առաջնորդին:

Յերբ փոթորկալից ծափերը լուսեցին, Լենինը պարզ կերպով  
ասաց. —

— Այժմ մենք կսկսենք սոցիալիստական կարգերի շինարարու-  
թյունը:

Համագումարը նորից բուռն կերպով վողջունեց այդ խոսքերը:  
— Առաջին հերթին մենք պետք է միջոցներ ձեռք առնենք խա-  
ղաղություն կնքելու համար: Բանվորա-գյուղացիական կառավա-  
րությունը բոլոր պատերազմող ժողովրդներին և նրանց կառավա-  
րություններին առաջարկում է անմիջապես բանակցություններ  
սկսել արգարացի հաշտություն կնքելու համար:

Արդարացի հաշտությունը, վորին սպասում են բոլոր յերկր-  
ների բանվորներն ու աշխատավորական դասակարգերը, մենք հա-  
մարում ենք առանց ոտարի հողերի գրավման և հաղթվածից դրա-  
մական աուգանք վերցնելու հաշտությունը:

Խորհրդային կառավարությունը բոլոր պատերազմող ժողո-  
վորդներին անմիջապես այդպիսի հաշտություն է առաջարկում,  
— այսպես եր խոսում Լենինը:

Հնչում եր պրոլետարական հիմն «Ինտերնացիոնալը»:

Այնուհետև քննութեան դրվեց հողի մասին զեկրեստը: Այդ  
զեկրեստի մեջ ասվում եր—

— Հողի կալվածատիրական սեփականությունն անմիջապես,  
առանց վորեւ փրկագնի, վերացվում է: Կալվածատիրական հո-  
ղերն ու ազարակները պետական, վանքատուական, յեկեղեցական  
հողերը, իրենց ամբողջ գույքով և շինություններով, անցնում են  
չըջանալին հողային կոմիտեների և գյուղացիական պատգամա-  
վորների զավառային խորհուրդների տրամադրութեան տակ:

Բոլոր պատգամավորները մեկ մարդու նման քվեյարկեցին հո-  
յուտ հողային զեկրեստի: Գյուղացիական պատգամավորներն  
իրենց բուռն ուրախությունն ելին հայտնում:

Հոկտեմբերից անմիջապես հետո խորհրդային կառավարու-  
թյունը մի շարք զեկրեստներ հրատարակեց, վորոնցով խոշորա-  
գույն ֆարքրիկներն ու գործարանները, բանկերն ու յերկաթուղի-  
ները բանվորական պետութեան սեփականություն հայտարարվե-  
ցին:

Խորհրդային իշխանութեան այդ առաջին զեկրեստները մեծ ու-  
րախութեամբ ընդունվեցին բոլոր աշխատավորների կողմից: Այդ  
զեկրեստները հրատարակվեցին, վորովհետև իշխանութեան գըլ-  
խին կանգնել եր պրոլետարիատը, վորն իր նպատակն եր դրել  
վոջնչացնել մասնավոր սեփականությունը և նոր, սոցիալիստական  
հրատարակություն կառուցել:

§ 60. ՀՈՎՏԵՄԲԵՐԸ ՎՈՒՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐ ՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈ-  
ԽՈՒԹՅԱՆ ՍԿԻՉԲԸ

Ռուսական պրոլետարիատը ամբողջ աշխարհի բանվորներին  
և գյուղացիներին ցույց տվեց, թե ինչպես պետք է պայքարել սե-  
փական իշխանության համար: Այն խորտակվիչ հարվածը, վորը  
Ռուսաստանում հասցվեց կալվածատերերին ու կապիտալիստնե-  
րին, ցնցեց նրանց տիրապետութունը նաև մյուս յերկրներում:

1918 թվին հեղափոխութուն ծագեց Գերմանիայում: Գերմա-  
նական բանվորության գլխին կանգնած էր գերմանական կոմու-  
նիստների փոքրիկ խմբակը: Նրանց առաջնորդներն էյին Կարլ  
Լիբկնիխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը:

Բանվորները տապալելով գերմանական Վիլհելմ կայսրի իշ-  
խանութունը, սկսեցին խորհուրդներ կազմակերպել, վորպեսզի  
մեր յերկրի որինակով խորհրդային իշխանութուն ստեղծեն  
Գերմանիայում: Սակայն գերմանական կոմունիստներն այդ ժա-  
մանակ մի փոքրիկ խմբակ էյին կազմում: Նրանք չկարողացան  
բանվորության մեծամասնութունն իրենց ղեկավարության տակ  
առնել: Դրա համար ել բուրժուազիան հաղթեց: Հաղթությու-  
նից հետո նա խստագույն հաշվեհարդար կատարեց ապստամբած  
բանվորների հետ: Առաջնորդներին—Կարլ Լիբկնիխտին ու Ռոզա  
Լյուքսեմբուրգին—բռնեցին ու դազանորեն սպանեցին:

Շուտով Գերմանիայի մարզերից մեկում— Բավարիայում—  
բանվոր դասակարգը կոմունիստների ղեկավարությամբ դրավեց  
իշխանութունը և Բավարական խորհրդային հանրապետութուն  
հռչակեց: Սակայն Բավարիայում խորհրդային իշխանութունը  
յերկար չապրեց:

1919 թվի մարտի 21-ին Հունդարիայի բանվոր դասակարգը  
դրավեց իշխանութունը և Հունդարիայի խորհրդային հանրապե-  
տութուն հռչակեց:

Հունդարական կապիտալիստները դիմեցին հարևան յերկրնե-  
րի կառավարությունների ոգնությանը: Խորհրդային Հունդարիա-  
յի դեմ դուրս յեկան Ռուսիայի և Չեխո-սլովակիայի զորքերը:  
Փրանսիական բուրժուազիան նույնպես մասանակեց հունդարա-  
կան հեղափոխության ճնշմանը: 1919 թվի ոգոստոսին, հերոսա-  
կան դիմադրությունից հետո, հունդարական խորհրդային հան-

րապետութունը կործանվեց: Մոտ 10 հազար բանվորներ ու չքա-  
վոր գյուղացիներ մահապատժի յենթարկվեցին:

Այժմ այդ բոլոր յերկրներում և մյուս կապիտալիստական  
յերկրներում ավելի ու ավելի յեն ամրանում կոմունիստական  
կուսակցությունները: Նրանց դրոշները տակ համախմբվում են  
բանվորներն ու բոլոր աշխատավորները և պատրաստվում են  
պայքարելու համաշխարհային պրոլետարական հեղափոխության  
համար: Իսկ Չինաստանի մի նշանակալից մասում արդեն խոր-  
հրդային իշխանութուն է հաստատված:

ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւմ և ինչի համար եր հարկավոր համաշխարհային պատերազմը:
2. Լենինը և բոլշևիկների կուսակցութունն ինչպես վերաբերվեցին հա-  
մաշխարհային պատերազմին:
3. ՅՔԲԸ և ճմ կողմից ասպավիզեց ցարական իշխանութունը:
4. Ի՞նչ էին դերները ասպաղբից Լենինն իր ասպին ճառում Ռուսաստան  
դալուց հետո:
5. Ինչպե՞ս եր Լենինը ղեկավարում զինված ազատամբության պատրաս-  
տությունը:
6. ՅՔԲԸ անդի ունեցավ հոկտեմբերյան հեղափոխութունը (աարին, ա-  
միսը և ամսաթիվը):
7. Ո՞վ կատարեց հոկտեմբերյան հեղափոխութունը և ով ղեկավարեց  
այն:
8. Ո՞ւմ անցավ իշխանութունը հոկտեմբերից հետո:
9. Ինչի մասին էյին խորհրդային իշխանության հրատարակած ասպին  
գեղեկաները:

VII. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԳ-  
ՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ԴԱՅԲԱՐՈՒՄ

§ 61. ԲԱՆԱԲԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՉՄԸ

Բուրժուազիան չեր կարողանում հաշտվել վոչ իշխանությու-  
նը և վոչ ել հսկայական հարստությունները կորցնելու հետ: Հոկ-  
տեմբերից անմիջապես հետո կապիտալիստները զինված պայքար  
սկսեցին բանվորների դեմ: Յարական գեներալները, բուրժուա-  
զիայի դրամական ոգնությամբ, հենվելով դյուդի կուլակային  
տարրերի վրա, ապստամբություն բարձրացրին Դոնում, Կուբա-  
նում, Ուկրայնայում, Սիբիրում, Ուրալում և խորհրդային հան-  
րապետության մյուս ծայրամասերում: Նրանք փորձում էյին

տապալել խորհրդային իշխանությունը, արյան մեջ խեղդել յե-  
րիտասարդ բանվորական պետությունը:

Ի՞նչ պիտի անելին բանվորներն ու գյուղացիները: Հանձնվել  
սպիտակ գեներալների գթությա՞նը: Նորից գործարանները կա-  
պիտալիստներին տալ և հողը՝ կալվածատերերի՞ն: Վո՛չ: Աշխա-  
տավորներն այդ չեյին կարող անել: Բանվորներն ու գյուղացիներ-  
ըն՝ սկսեցին պաշտպանել իրենց սեփական խորհրդային իշխա-  
նությունը:

Բանվորների ու գյուղացիների դեմ իրար հետ միացան բոլոր  
կալվածատերերն ու կապիտալիստները, գեներալներն ու սպա-  
ները, կուլակներն ու տերտերները և այլն: Նրանց ոգնում էյին  
մյուս յերկրների կապիտալիստները:

Այդ հակահեղափոխական ուժերի դիմաց կանգնել էր բան-  
վորների ու գյուղացիների կուռ միությունը, կոմունիստ-բու-  
շեիկների կուսակցության ղեկավարությամբ:

Սկսվեց քաղաքացիական պատերազմը:

### § 62. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՈՂԱԿՈՒՄ

Կապիտալիստների առաջին ռազմական յելույթները խորհրդ-  
ային իշխանության դեմ սկսվեցին Հոկտեմբերից՝ անմիջապես  
հետո: Կալեդին և Դուստով գեներալները Դոնում և Ուրալում կա-  
զակային-կուլակային ապստամբություն բարձրացրին: Այդ ա-  
պստամբությունները հեշտությամբ և արագությամբ ճնշվեցին:

Սակայն ոսու կարվածատերերին ու կապիտալիստներին սգ-  
նության հասավ ոտարեկրյա բուրժուազիան:

1918 թվին Սիբիրում սկսվեց չեխո-սլովակների ապստամ-  
բությունը: Չեխո-սլովակները Սիբիրը գրավելով շարժվեցին դե-  
պի Ուրալ և դեպի Վոլգա: Չեխո-սլովակները գրավեցին Չելյա-  
բինսկ, Սամարա, Սիզրան, Սիմբիրսկ և Կադան քաղաքները:

Գերմանացիները գրավեցին Ուկրաինան: Ուկրաինական  
կապիտալիստներն իրենց յերկիրը ծախեցին գերմանական բուր-  
ժուազիային, միայն թե վոչնչացնեյին խորհրդային իշխանու-  
թյունը:

Դոնում առաման Կրասնովը կազակներից մի մեծ սպիտակ բա-  
նակ կազմակերպեց և շարժվեց Մոսկվայի վրա: Գերմանական  
գեներալներն ամեն բանով ոգնում էյին նրան:

Անգլիացիները գրավեցին Անդրկովկասը: Նրանք մտան Բա-  
զու: Բագվի 26 կոմիսարները բռնվեցին ու գնդակահարվեցին:

Հյուսիսում ափ իջան անգլո-ֆրանսիական զորքերը: Նրանք  
գրավեցին Արխանգելսկը և շարժվեցին դեպի հարավ, վորպեսզի  
միանան չեխո-սլովակներին հետ:

Յերիտասարդ խորհրդային հանրապետությունը շրջապատվեց  
թշնամիների ողակով: Նա ամեն կողմից ողակված էր սպիտակ  
բանակներով: Հացով հարուստ մարդերը— Ուկրաինան, Դոնը,  
Կուրանը, Ուրալը, Սիբիրը—կտրվեցին Մոսկվայից: Յերկրի ներ-  
սում կուլակներն ապստամբություններ էյին բարձրացնում:

խորհուրդների պաշտպանության, և կապիտալիստներին ու  
կալվածատերերին ճնշելու համար 1918 թվի փետրվարի 23-ին  
կուսակցությունն ու խորհրդային կառավարությունը Կարմիր բա-  
նակ—բանվորների ու գյուղացիների բանակ—ստեղծեցին: Նրա  
մեջ մտան կարմիր գվարդիական մարտական ջոկատները: Բան-  
վորներն ու գյուղացիները զորակոչի յենթարկվեցին: Կուլակներն  
ու առևտրականներին, կապիտալիստներին ու մյուս դասակարգա-  
յին թշնամիներին չեք թույլատրվում Կարմիր բանակում ծառայե-  
լու:

Կուսակցությունն իր լավագույն ուժերն ուղարկեց Կարմիր  
բանակ: Աշնանը Կարմիր բանակում արդեն մոտ մի միլիոն մար-  
տիկ կար: 1918 թվին Կարմիր բանակը, ընկ. Ֆրունզեյի ղեկավա-  
րությամբ, գլխովին ջախջախեց չեխո-սլովակներին և նրանց  
քշեց Ուրալից դեներ:

Ատաման Կրասնովը նույնպես ապստամբյուն կրեց և արագու-  
թյամբ հետ քաշվեց դեպի Դոն: Նոյեմբերին հեռացավ նաև  
գերմանական բանակը, վորովհետև Գերմանիայում հեղափոխու-  
թյուն տեղի ունեցավ: Կարմիր բանակը, Կոմունիստական կուսակ-  
ցության ղեկավարությամբ, մեկը մյուսի հետևից նորանոր հաղ-  
ջության ղեկավարությամբ, մեկը մյուսի հետևից ուկրաինան ու Բելուսիան,  
թանակներ տարավ: Նա գրավեց Ուկրաինան ու Բելուսիան,  
այնտեղից դուրս քշելով սպիտակ գվարդիականներին:

### § 63. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻԹԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Ե

Առաջին բռնամարտերում ջախջախված միջազգային և ու-  
սական բուրժուազիան չհանդատացավ: 1919 թվին նա նորից կա-  
տաղի հարձակում սկսեց բանվորական պետության դեմ:

Յարական ծովակալ Կոլչակն ոտարերկրյա կապիտալիստներին փողերով Սիբիրում 300 հազար զինվորներից բաղկացած մի մեծ բանակ հավաքեց: 1919 թվին Կոլչակն այդ բանակով շարժվեց խորհրդային հանրապետութայն վրա: Նա գրավեց Ուրալը և սպառնում էր իր բանակը շարժել Մոսկվայի վրա:

Հարավից շարժվում էր Դենիկինի բազմամարդ սպիտակ բանակը, վորը կազմված էր կամավոր-սպաներից, յունկերներից, կուլակներից և խաբաժ կազակներից ու գյուղացիներից: Ֆրանսիական կապիտալիստները Դենիկինին հսկայական քանակությամբ փող, զենք և հանդերձանք էլին տալիս:

Այդ ժամանակ արևմուտքից, Եստոնիայի կողմից շարժվեց գեներալ Յուզենիչի սպիտակ բանակը: Յուզենիչն ուզում էր գրավել Պետրոգրադը:

Ամեն կողմից թշնամիներով սեղմված յերկիրը մնաց առանց հացի, առանց ածուխի և նավթի: Յերկաթուղիները կանգ էլին առնում: Սույն ընդգրկեց յերկիրը: Բժավոր տիՖլ ճնձում էր կարմիր բանակայիններին և բնակչութայնը:

1919 թիվը խորհրդային հանրապետութայն համար ամենածանր տարին էր քաղաքացիական պատերազմների ամբողջ ընթացքում:

Սակայն կուսակցութայնն այդ անգամ էլ կարողացավ ապահովել հաղթանակը:

— Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է, — հնչեց կուսակցութայն մարտակոչը:

Հետ մղելով հարավի հարձակումը, կուսակցութայնը Կարմիր բանակի գլխավոր ուժերը փոխադրեց արևելյան ճակատը՝ Կոլչակի դեմ: Հերոսական Կարմիր բանակը, հին բոլշևիկ ընկեր Ֆրունզեյի հրամանատարութայնը, 1919 թվի ամբողջ գրավեց Ուրալը, Ուրֆայի տակ խորտակիչ հարված հասցրեց կոլչակիցիներին և փախուստի մասնեց Կոլչակի բանակին:

Կոլչակի թիկունքում չքավոր և միջակ գյուղացիները կարմիր պարտիզանական շոկատներ էլին կազմակերպում, ապստամբութայններ բարձրացնում սպիտակ-գվարդիականների դեմ:

Կապիտալիստների դեմ ունեղած դասակարգային ատելութայնը վառված Կարմիր բանակն անխոնջ կերպով ավելի ու ավելի հեռու յեր քչում կոլչակիցիների մնացորդներին լայնածավալ Սիբիրում: Փախան նաև ճապոնական ու ամերիկյան զորքերը,

վորոնք ողնում էլին Կոլչակին: 1920 թվի հունվարին Կոլչակը դեբի բռնվեց կարմիր պարտիզանների կողմից: Նրան գնդակահարեցին Իրկուսկում:

1919 թվի աշնանը Յուզենիչի սպայական բանդաները մոտեցան Պետրոգրադին: Նրանք ընդամենը 25 կիլոմետր էլին հեռու Պետրոգրադից: Սպիտակ-գվարդիականներն իրենց թերթերում արդեն գրում էլին, վոր Պետրոգրադը գրավված է իրենց կողմից:

Կուսակցութայնն այդ ճակատն է ուղարկում իր լավագույն բոլշևիկին՝ ընկեր Ստալինին: Ընկ. Ստալինն իր ամուր ձեռքերում վերցրեց սպիտակ բանդաների դեմ պայքարելու ղեկավարութայնը: Կարմիր բանակը, վորին բանվորական նոր ուժեր միացան, ջարդեց Յուզենիչի բանդաներին, և նա գլխավորույս փախավ Եստոնիա:

Կարմիր բանակը փայլուն հաղթանակներ տարավ թշնամիների դեմ թե արևելքում և թե արևմուտքում:

Մնաց գեներալիստական բանակը, վորն արագութայն մոտենում էր Մոսկվային: Այժմ կուսակցութայնն այդ ճակատն ուղարկեց իր բոլոր ուժերը:

§ 64. ԲՈՂՈՐԸ ԴԵՆԻԿԻՆԻ ԴԵՄ

— Բոլորը Դենիկինի դեմ, — կոչ էր անում կուսակցութայնը, յերբ Կոլչակն ու Յուզենիչն արդեն ջախջախվել էլին: Այժմ Կարմիր բանակի գլխավոր ուժերը փոխադրվեցին հարավային ճակատը:

Սակայն Դենիկինը հեծելազոր ուներ: Իսկ պրոլետարները չունեյին իրենց հեծելազորը: Ի՞նչ անել:

— Պրոլետարներ, ձիերի վրա՛, — մարտական կոչ է նետում կուսակցութայնը:

Նորից տասնյակ հազարավոր բանվոր կոմունիստներ ու կոմյերիտականներ ճակատ են ուղարկվում:

Կուսակցութայնը նորից ընկ. Ստալինին նշանակում է վորպես հարավային ճակատի ղեկավար:

Ընկ. Ստալինն արտասովոր յետանդով սկսեց կարմիր հեծելազոր ստեղծել: Նա արագութայն կազմակերպեց Առաջին հեծյալ բանակը: Առաջին հեծյալ բանակի ղեկավարներ նշանակվեցին ընկ. ընկ. Վարաչխովը և Բուդյոնին:

Դենիկինյան բանակը լայն ճակատ էր բաց արել Կասպիական

ծովից մինչև լեհական սահմանները: Նա զբաղվել էր ամբողջ Ուկրաինան, Վարոնեթը, Արևիլը, Կուրսկը: Նրա առաջապահներն արդեն հասել էին Տուլային, վորը միայն 200 կիլոմետր է հեռու Մոսկվայից:

Դենիկինյան բանակի հիմնական կորիզը կազակներն էին: Կուսակցութունը մեծ աշխատանք էր կատարում կազակների մեջ: Բուլշևիկներն ասում էին աշխատավոր կազակներին, վոր Կարմիր բանակը կռվում է վոչ թե նրանց դեմ, այլ կարվածատերերի, կապիտալիստների և նրանց գեներալների դեմ: Բուլշևիկներին հարգելով արդեն բազմաթիվ աշխատավոր կազակներ կային: Առաջին հեծյալ բանակում նրանք ամբողջ գնդեր էին կազմում:



Նկ. 15. Բուլշևիկներն, Ֆրոնտեմ և վարոշիվալը շտաբում քարտեզ դիտելիս.

1919 թվի հոկտեմբերին Կարմիր բանակը, իր բոլոր ուժերը հարավային ճակատում կենտրոնացնելով, խորտակիչ հարված հասցրեց դենիկինյան բանակին: Նա զբաղեց Կուրսկը, Արևիլը, Խարկովը, Վարոնեթը: Առաջին հեծյալ բանակը դեպի հարավ քշեց խուճապահար նահանջող սպիտակ-զվարդիականներին:

1920 թվի մարտին Հեծյալ բանակը զբաղեց Նովորոսիսկը: Սպիտակ-զվարդիականների մնացորդները նավերով փախան Դրիմ և Թյուրքիա: Կարմիր բանակի ձեռքն ընկան հսկայական ուսպամթերը և մեծ քանակությամբ ուսպամթերիներ:

Բանվորների և դյուղացիների դեմ բուրժուազիան այդ հարձակումն ևս պարտութուն կրեց: Կարմիր բանակն այս անգամ էլ հաղթանակեց:

§ 65. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Չնայած նրան, վոր Կարմիր բանակը 1919 թվին բոլոր ճակատներում ջախջախեց թշնամիներին, նորից քաղաքացիական կռիվները չվերջացան: Կապիտալիստներն ու կարվածատերերը կազմակերպեցին յեբրորդ զինված արշավը Խորհրդային Ռուսաստանի դեմ:

Լեհական կարվածատերերը, Ֆրանսիական կապիտալիստները ցուցումով, մեծ, հարյուր հազարանոց բանակ կազմակերպելով, 1920 թվի ապրիլին հարձակվեցին մեր յերկիրը թալանելու համար:

Պատերազմը ծանր էր: Մեր տնտեսութունը շատ էր քայքայվել: Մենք քիչ թնդանոթ ունեյինք: Պարենը չէր բավականացնում:

Լեհական զորքերն իրենց հանկարծակի հարվածով ստիպեցին Կարմիր բանակին նահանջել: Սպիտակ-լեհները գրավեցին Բելոռուսիան և Ուկրաինայի մի մասը: Գրավեցին Կիյեվը:

Սակայն կուսակցութունն զգոն էր: Նա նորից զորահավաքի յե յենթարկում կոմունիստներին, բանվորներին և դյուղացիներին: Առաջին հեծյալ բանակը Դենիկինին ջախջախելով, նեւովեց լեհական ճակատը:

Սպիտակ-լեհները չուսով դուրս քշվեցին Կիյեվից: Կարմիր բանակը նրանց մի շարք խորտակիչ հարվածներ տվեց: Սպիտակ-լեհները նահանջում էին խուճապով: 1920 թվի ոգոստոսին Կարմիր բանակի առաջավոր շտաբները գտնվում էին Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայից միայն 30 կիլոմետր հեռու:

Կարմիր բանակի փայլուն հաղթանակները տազնապ առաջ բերին բոլոր յերկրների կապիտալիստների մեջ: Կապիտալիստները փախնում էին, վոր պրոլետարական հեղափոխութունը կրնազգրկի ամբողջ Յեվրոպան:

Ամբողջ Յեվրոպայի բուրժուազիան սարսափում էր: Նա հսկայական միջոցներ հատկացրեց, վորպեսզի կասեցնի կարմիր զորքերի շարժումը:

Անգլիան ու Ֆրանսիան Լեհաստանին գեներ, ողանալեր և թընդանոթներ էին ուղարկում: Սպիտակ-լեհները չունչ քաշեցին իրենց ստացած հարվածից: Կարմիր բանակը պետք է նահանջեր Վարշավայից:

1920 թվի հոկտեմբերին Խորհրդային հանրապետութունը



հաշտութիւն կնքեց Լեհաստանի հետ, վորով Բելոռուսիայի մի մասը և աջափնյա Ուկրայնայի մի մասը մնացին Լեհաստանին: Խորհրդային յերկրի համար անհրաժեշտ եր հաշտութիւն կնքել Լեհաստանի հետ, վորովհետև հարաւում աճում եր նոր ուղղա- կան վտանգ:

§ 66. ՎՐԱՆԳԵԼԻ ԶԱՆԶԱՆՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱՅԻՍԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ՎԱՆՃԱՆԸ

Դենիկինյան բանակի մնացորդներն անցան Ղրիմ: Նրանց դիւին կանգնեց բուրժուազիայի վերջին վարձկանը—բարոն Վրան- գելը: Ոգտվելով այն հանգամանքից, վոր Կարմիր բանակն զրադ- ված է լեհական պատերազմով, Վրանդելն ամրացալ Ղրիմում: Այդտեղից նա 1920 թվի հունիսին արշավեց Դոնբասի վրա:

Ոտարերկրյա բուրժուազիան նորից սցնության հասալ ու- սական կապիտալիստներին և կալվածատերերին: Անդլիան ու Ֆրանսիան շատ փող, զենք, տանկ, ինքնաթիւ և հանդերձանք ու- ղարկեցին Վրանգելին:

Կուսակցութիւնը կարողանալով հաշտութիւն կնքել Լեհաս- տանի հետ՝ բոլոր ուժերը փոխադրեց այդ ճակատը: Հարաւում գործող Կարմիր զորքերի դիւելս կանգնեց ընկ. Ֆրունզեն:

Կարմիր բանակը սպիտակ-զվարդիականներին արադությամբ հետ քշեց դեպի թերակղզին: Վերջին և վճռական բռնաժարտը տե- դի ունեցալ Պերեկոպի մոտ: Պերեկոպի ճակատամարտը մնում է վորպէս Կարմիր բանակի մեծագույն հերոսության որինակը:

Պերեկոպի դիրքերը համարվում էին միանգամայն անառիկ: Մի քանի շարք պատնէշները, վորոնք պատած էին փշալարերով, բաղմաթիւ թնդանոթները, զրահապատները և տանկերն իսկա- պես անմատչելի էին դարձրել Պերեկոպի նեղ անցքը: Սակայն Կարմիր բանակը համարձակ կերպով զրոհի նետվեց Պերեկոպր գրավելու համար:

Դա նոյեմբերի 7-ին եր: Այն ժամանակ, յերբ բանվորա-գյու- ղացիական հանրապետութիւնը տոնում եր Հոկտեմբերի յերրորդ տարեդարձը, ճակատում տեղի էյին ունենում զրոհի վերջին պատրաստութիւնները:

Հարձակվող զորմասերը պետք է անցնէին Սիվաչի ջրերի մի- ջով:

Տեղափության ժամանակ Սիվաչը տեղ-տեղ համարյա չու-

րանում եր: Սակայն մակընթացութիւնը լցնում եր Սիվաչը, այն ժամանակ ծանծաղուտներն անհետանում էյին, անանցանելի էյին դառնում: Վորոշվեց այստեղից հարձակում գործել, ողտադոր- ծելով տեղափության կարճ ժամերը:

— Սա վերջին ճակատամարտն է: Վրանգելը կոչնչանա: Մեր հաղաթանակն ապահովված է,—ասում եր Ֆրունզեն կարմիր- բանակայիներին:

Թնդացին «Ինտերնացիոնալի» հնչյունները: Կոմունիստական հարվածային ջոկատներն ու զնդերն առաջինը դեպի մարտ դիմե- ցին: Ֆրունզեն վողեւորում եր զրոհի զնացող հերոսներին:

Առանց լռելու վորոտում են թնդանոթները: Ժամանակ առ- ժամանակ հրթիռներ են բոցավառվում: Նրանց հետեից յերկա- րում են լուսարձակները սուր ու թափանցող լույսերը: Անընդհատ պայթիւթիւններից մթության մեջ համատարած հրե ծով է գոյա- ցել:

Թշնամին իր թնդանոթային կրակը դիւալորապէս կենտրո- նացնում է լարափակոցների վրա, դեպի ուր նետվել են Կարմիր բանակի հիմնական ուժերը:

Ինչ վոր մի վորոտ մի բոպե խլացնում է ամեն ինչ: Հետո սարսափելի դղրուց և գորաչղթայի մոտ պայթիւթիւն: Հողի և քարի վիթխարի սյուն է բարձրանում: Ամեն բան ծխի մեջ կորած է: Մարդիկ անհետացել են: Շատերն ընկնում են:

Կամըջակի վրա մի կարմիր բանակային է յերևում, ձեռքն ամբողջությամբ արյան մեջ, նա առաջ է նետվում: Մի հին կո- մունիստ հրացանը ձեռքին առաջ է վազում: Մարդկային ալիքը զրոհում է նրա հետեից:

— Հառա՛ջ, ուռա՛ւ՛:

Կարմիր բանակի հերոսական զորամասերը խիղախ հարվածով գրավեցին սպիտակների ամբութիւնների առաջին դիծը: Սակայն սպիտակ-զվարդիականները կատաղորեն դիմադրում էյին: Կար- միր զորքերի յերկու զրոհը հաջողութիւն չտվին:

Սիվաչից յեկան կեղտի մեջ կորած կապի զինվորները:

— Ընկերներ, շտապ միջոցներ ձեռք սուեք: Հսկառակորդն սպառնում է մեզ նորից հետ մղել դեպի Սիվաչը: Իսկ Սիվաչում ջուրն արադությամբ բարձրանում է: Բոլոր արահետներն արդեն

լցվում են ջրով, անանցանելի յեն դառնում : Հետևից ջուր, իսկ առջևից կրակ : Ո՞ւր գնանք...

— Հառա՛ջ,— պողպատյա ձայնով հրամայում է Ֆրունզեն : Անմիջապես նոր գրոհ սկսել : Պերեկոպը պետք է վերցվի :

Սկսվեց Պերեկոպի անասիկ գերքերի յերրորդ հարձակումը : Նորից Պերեկոպից թնդանոթային վորոտ է լսվում : Հեռավոր թուփեր վրայից մեկը մյուսի հետևից կրակում են թնդանոթները :

Այդ ընկեր Բլյուսերն է, վոր առաջնորդեց յերրորդ գրոհը : Նրա հետևից սուրաց ընկ. Կաշիրինի 7-րդ հեծյալ դիվիզիան : Լավում են ձիերի փոնչոց, անթիվ թամբերի ճոնչոց, թրերի շրխոց և Կաշիրինի քաջարի եսկադրոնները նետվում են դեպի Սիվաչի ջրերը :

Բայց ահա Պերեկոպից լսվող վորոտն ավելի ու ավելի յե խառնում : Կարծես միանգամայն լուռ է : Մի՞թե յերրորդ գրոհն էլ հետ մղվեց...

Ֆրունզեն կանգնել է հեռախոսի փողը ձեռքին, պայծառ է և ուրախ :

— Այդպես... այդպես... այդպես...—ասում եր նա չափով : Հետո դարձավ և խանդավառությամբ կանչեց մարտիկներին.—

— Ընկերներ՛ք, չնորհավորում եմ : Վրանդելը ջախջախված է : Մեր յերրորդ գրոհով Պերեկոպը գրավվեց :

— Վրանդելը փախչում եր : Նոյեմբերի կեսերին սպիտակ-դվար-դիականների վողորմելի մնացորդները շողենավերով արատասաման փախան :

Վրանդելի ջախջախումով վերջացավ քաղաքացիական պատերազմը, վորը բանվոր դասակարգի վրին էյին փաթաթել ուսուսական և միջազգային բուրժուազիան : Յերկրում դեռ ժամանակատեղի կուրակային ապստամբություններ էյին բռնկվում, սակայն նրանք արադությամբ ճնշվում էյին Կարմիր բանակի և բանվորների ու աշխատավոր գյուղացիների ջոկատների կողմից : Խորհրդային հանրապետությունը հաղթանակեց :

§ 67. ՉԵՌՔՆԵՐԴ ՀԵՌՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՅՑ

Քաղաքացիական պատերազմում ամբողջ աշխարհի բանվորներն սզնում էյին մեզ : Նրանք տեսնում էյին, վոր այն դործը, վորի համար պայքարում են խորհրդային բանվորներն ու գյուղացիները, ամբողջ աշխարհի պրոլետարիատի դործն է : Ամբողջ

աշխարհի աշխատավորները չէյին կարող մի կողմ քաշվել այդ պայքարից : Նրանք ողնություն էյին ցույց տալիս պրոլետարական հեղափոխությունը :

Բանվորները հրաժարվում էյին բեռնել ու փոխադրել այն դեղքերն ու զինամթերքները, վորոնք կապիտալիստներն ուղարկում էյին ուսական սպիտակ-դվարդիականներին :

Ոտարերկրյա զինվորներն ու նավաստիները, վորոնց ցանկանում էյին հարկադրել կռվելու մեր դեմ, հաճախ հեղափոխական յեղույթներ էյին կազմակերպում իրենց յերկրների կապիտալիստների դեմ : Նրանք հրաժարվում էյին կռվել, կրակել իրենց յեղբայր-կարմիր բանակայինների դեմ :

Առանձնապես հիշատակելի յե Ֆրանսիական «Պրոտեյ» ականակրի վրա յեղած ապստամբությունը :

Դա տեղի ունեցավ 1919 թվի վերջին : Ֆրանսիական ռազմա-նավերը մտան Ուկեսայի նավահանգիստը : Նրանք թնդանոթներն ուղղեցին ուղղակի բանվորական թաղամասերի վրա :

— Մա՛հ բուլճեիկներին,—ասում էյին Ֆրանսիական գեներալներն ու սպաները :

«Պրոտեյ» ականակրի վրա վորպես մեխանիկ ծառայում եր նավաստի Անդրե Մարտին : Նա բուլճեիկ եր : Անդրե Մարտին հավաքում եր Ֆրանսիական նավերի նավաստիներին և ասում եր նրանց.—

— Ռուսաստանում հեղափոխություն է : Բանվորները պետք է հաղթեն : Մենք էլ նույնպիսի բանվորներ ու գյուղացիներ ենք, ինչպես նրանք : Մենք պետք է ողնենք նրանց : Հրետավորներ, ի՞նչ կանեք դուք, յեթե ձեզ հրամայեն կրակել բանվորների վրա :

— Մենք կկրակենք գեներալ Բարտելոյի վրա,— պատասխանում էյին հրետավորները :

Այդ ժամանակ կարմիր զորքերը մոտենում էյին Ուկեսային : Ֆրանսիական նավաստիները հրաժարվեցին կրակել իրենց դասակարգային յեղբայրների վրա : Ուկեսան խորհրդային դարձավ :

— Անիծյալ բուլճեիկներ,—ասում էյին գեներալները,—վոր-ձենք խլել Սեվաստոպոլը : Յեվ նրանք թնդանոթներն ուղղեցին այդ քաղաքի վրա :

Սակայն Անդրե Մարտին զուր չեր աշխատում :—Ֆրանսիական նավաստիներն այստեղ էլ հրաժարվեցին կրակել բուլճեիկների վրա : Ֆրանսիական նավերի վրա կարմիր դրոշակներ ծածանվե-

ցին: Նավաստիները «Ինտերնացիոնալ» եյին յերգում: Նրանք իջեցրին մակուկները և ափ դուրս յեկան:

— Կեցցե՛հ՝ հեղափոխությունը: Կեցցե՛ն բոլշևիկները, — կանչում եյին Փրանսիական նավաստիները: Բաղմաթիվ ոտարերկրյա բանվորներ մտան Կարմիր բանակի շարքերը և կովեցին սպիտակ-գվարդիականների դեմ:

Ամբողջ աշխարհում բանվորները բողոքում եյին խորհրդային յերկրի գործերում կապիտալիստների միջամտության դեմ: Կաղմակերպվեց «Ձեռքներդ հեռու Խորհրդային Ռուսաստանից» ընկերություն:

Կապիտալիստները հարկադրված եյին դիջել: Փրանսիական կառավարությունն ստիպված եր շտապ հրաման տալ, վորպեսզի նավատորմիզն Ողեսայից Փրանսիա վերադառնար: Շուտով Անդլիան ել հարկադրված յեղավ իր գորքերը հետ կանչել Արխանգելսկից:

### § 68. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄԸ

Հոկտեմբերից անմիջապես հետո անդրկովկասյան՝ հայ, թուրք և վրացի բուրժուազիան իմպերիալիստական պետությունների պատվերով շտապեցին անջատել Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստանից, դարձնել այն մի պատնեջ հեղափոխության արշավի դեմ: Նրանք ստեղծեցին իրենց առանձին-առանձին բուրժուական պետությունները—դաշնակցական Հայաստան, մուսավաթական Ադրբեջան և մենչևիկյան Վրաստան: Իրենց տիրապետության մտտավորապես յերկու ու կես տարվա ընթացքում դաշնակցին ազգամիջյան կոտորածների, բանվոր դասակարգի և աշխատավոր դյուղացիության շտեմնված շահագործման, կեղծբժան ու կողոպուտի մի արյունոտ թատերաբեմի: Դաշնակցական, մուսավաթական և մենչևիկյան կառավարություններն իրենց պետությունների սահմաններն ընդարձակվելու համար անվերջ պատերազմներ եյին մղում միմյանց հետ, մուսուլմանի և մտրակի ուժով իրար դեմ քշելով հայ, թուրք և վրացի աշխատավորությանը:

Սակայն Հոկտեմբերյան հեղափոխության հորձանքը մոտենում եր Անդրկովկասին և ռուսական պրոլետարիատի հաղթանակը վտառի յեր հանում բանվորական և աշխատավոր դյուղացիա-

կան մասսաներին ընդդեմ ազգային բուրժուազիայի վայրագ տիրապետության ու ճնշումների:

Առաջինը՝ անդրկովկասյան աշխատավորության ավանդարդ Բազմի պրոլետարիատը բոլշևիկներին ղեկավարությամբ յեղավ հեղափոխական մարտնչումի և հերոսական մարտերում ջախջախելով, տապալելով մուսավաթական-բուրժուական տիրապետությունը, 1920 թվի ապրիլին խորհրդային իշխանություն հաստատեց Ադրբեջանում և միացավ Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատին:

Այնուհետև քաղաքացիական դաժան կռիվներից հետո խորհրդային իշխանություն հաստատվեց նաև Հայաստանում ու Վրաստանում:

### § 69. ԳԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Չկարողանալով այլևս տանել Դաշնակցության լուծը, Հայաստանի բանվոր դասակարգը դեռևս 1920 թվի մայիսին Ալեքսպոլում (Լենինականում) և մի քանի այլ վայրերում, Հայաստանի բոլշևիկներին ղեկավարությամբ ապստամբություն բարձրացրեց: Բայց դաշնակցական-մուսուլմանական բանդաները արյան մեջ խեղդեցին Ալեքսպոլի բանվորության հեղափոխական յելույթը, բաղմաթիվ կոմունիստների և բանվորների զնդակահարեցին և բանտերը լցրին:

Սակայն մոչ մի ճնշում այլևս չեր կարող դասակցական մուսուլմանի քմահաճույքին, սանձարձակ թալանի, համատաքած սովի, արյան ու կոտորածի մատնված Հայաստանի աշխատավորության դասակարգային ցասումը: Բանվորությունն ու աշխատավոր դյուղացիությունն արյունաքամ եյին լինում բուրժուազիայի, կուլակության ու կալվածատերերի և նրանց պետական իշխանության ծանր լծի տակ:

Յեկ ահա, 1920 թվի նոյեմբերի 29-ին, Հայաստանի աշխատավորությունը Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ վճռական մարտերի յե յեխում և խորտակելով դաշնակցական կառավարությունը, Հայաստանը հռչակում խորհրդային:

Տապալված Դաշնակցությունը բուրժուական կարգերը վերականգնելու հուսով և իր տիրոջ՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների առջ պարզերես դուրս գալու համար 1921 թվի փետրվարին հավաքելով բոլոր հակահեղափոխական ուժերին, կուլակներին,

խմբապետներին, մաուզերիստներին և այլն, ավանտյուրա յե կազմակերպում և զբաղվում մանուկ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Յերևանը:

Դրա հետևանքով ծավալվում են նոր քաղաքացիական ավելի վճռական ու կատաղի կռիվներ, մինչև վոր հայկական կարմիր զորամասերը ոռոտական Կարմիր բանակի յեղբայրական ողնությամբ իսպառ ջախջախում են դաշնակցական բանդաներին, վերադարձվում Յերևանը և հաղթական արշավով դուրս քշում դաշնակներին յերկրի սահմաններից:

Ահա թե ինչ է պատմում Յերևանի վերադարձման համար մղվող ճակատամարտերի մասնակիցներից մեկը.—

Պայծառ, արև որ է: Դեպի հեռուն ընթացող յերկաթգծի արանքում արևի ճառագայթների տակ փայլում է սպիտակ ձյունը:

Մենք ժամանակավորապես թողնում ենք Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Յերևանը:

1921 թվի փետրվարի 18-ն է, այն որը, յերբ դաշնակներն ակսեցին իրենց վերջին ավանտյուրան, վորը կարճ ժամանակ հետո ցնդեց ինչպես սապոնի բշտիկ՝ հզոր հոկտեմբերի մրրիկից:

«Մուսայեկյան» զրահազնացքը դեպի քաղաք, դեպի դաշնակներն է նետում չրապներնների պողպատե բաժակներ:

Գնդացրերը ճարճատում են:

Վազոնի պատուհանից դիտում եմ, թե ինչպես հանդիսավոր ու ծանր շարժվում է խճուղիով Յերևանից նահանջող մեր մարտկոցը. առջևից քայլում է մեծ գավազանը ձեռքին մարտկոցի հրամանատարը:

Հասնում են Շիրազը. թուրքարնակ այդ գյուղը դաշնակների ձեռքով ավերված, մոխրակույտի յե վերածված:

«Մուսայեկյան» և «Ազատամարտ» զրահազնացքներն իրենց հետախուզությամբ կատաղեցնում են դաշնակ խմբապետներին: Թշնամու հորիցային մարտկոցը անհաջող փորձեր է անում վնասելու զրահապատ հսկաներին:

... Բոլորիս տրամադրությունը բարձր է: Հրամանատարությունը վորոչել է անցնել հարձակման:

Բրիգադի կոմիսար ընկ. Լ. Մխչյանն անձամբ ղեկավարում է մարտիկների առաջխաղացումը: Քաջարի, մարտիկների սիրելի բուլչեիկ կոմիսարը վարակում է բոլորին հարձակողական խանդավառությամբ:

Դաշնակները բռնված են ընաթաթախ, նրանք չեյին սպասում մեր հարձակմանը: Խմբապետ Մարտիրոսը հաղիվ է աղատում իր գլուխը, գերի թողնելով շտաբն ու զրադրությունները: Մեր ժանդակ զորամասերը կենտրոնանում են Շիրազըլում: Դաշնակները փախչում են, սակայն մենք ծանր կորուստ ենք ունենում—ընկ. Մխչյանը մահացու վերք է ստանում:

Ահա բերում են նրան պատգարակի վրա. դեմքը գունաթափ է, շնչառությունը ծանր, հայացքը կարծես ասում է բոլորիս «հառաջ, ընկերներ»...

Նրան ուղարկում ենք հիվանդանոց, սակայն չի հաջողվում փրկել նրա կյանքը: Նա ընկավ իր մարտական դիրքում, բուլչեիկ ազգիկի հերոսական մահով, իր վերջին հայացքով իսկ բոլորիս գեպի հաղթանակ մղելով:

Բոլորին... բոլորին... բոլորին...

Ապրիլի 2-ն է. ճակատում դադար: Հրետանու շտաբը տեղափոխված է «Մուսայեկյանի» բազայի վազոնների կուպեներից մեկում: Հեռախոսի մոտ հերթապահ է ուղեբառիվ մասի պետը: Վոչ մի վայրկյան հեռացնելով լսափողն ականջից, նա լուռ նստած է, կրթնած սեղանին:

Հանկարծ վեր ցատկեց նա նստած տեղից և սկսեց թռչկոտել, պարել: Յես շլմեցի, խեղազարվեց արդյոք, մտածեցի մի վայրկյան:

— Ուուա՛, —բղավեց նա ամբողջ ուժով, — մերոնք զբավեցին Յերևանը...

Հանելուկը պարզվեց, հեռախոսով նրան հայտնել էյին Յերևանի զբավման մասին:

Կայծակի արագությամբ լուրը տարածվեց ամբողջ ճակատում: Բանակի շտաբից հրաման ստացանք մեր ճակատամասում հարձակման անցնելու, սակայն մյուս որը մեր շարժման ճանապարհին մենք վոչ վոքի չհանդիպեցինք: Դաշնակները բռնել էյին փախուստի ճամբան...

Յերևանը վերադարձված էր վերջնականապես: Այդ որը Լոնդոնում անգլիական իմպերիալիստները վատ տրամադրության մեջ էյին, նրանց ագենտները Մերձավոր-Արևելքում՝ դաշնակները չարդարացրին լորդերի հույսերը:

Իմպերիալիզմի լակեյ—դաշնակները Կարմիր բանակի հարվածների տակ փախչում էյին գլխակորույս:

§ 70. ԿՈՄՈՆԻՍՏՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ—  
ՄԻՇՏ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Կոմունիստական կուսակցութիւնը ղեկավարում էր Կարմիր բանակի մարտերը: Կոմունիստները միշտ առաջավոր դիրքերում, ամենառիթմային և ամենալուրջալուրջ տեղերում էին գտնվում: Կոմունիստները վորպես լազարիստները մարտիկներ, համախորհում և առաջ էին տանում կարմիր բանակայիններին:

Կարմիր բանակը ղեկավարում էր Լենինը և նրա լավագույն աշակերտները—Ստալինը, Ֆրունզեն, Վորոշիլովը:

Գաղաքացիական կռիւների ժամանակ Լենինի աշխատանքային առանձնատեսակը դարձել էր ռազմական գլխավոր շտաբը: Լենինն անձամբ գլխավորում էր Հանրապետութեան պաշտպանութեան խորհուրդը: Նա սնդում էր, վոր կուսակցական և խորհրդային յուրաքանչյուր կազմակերպութիւն իր առաջին գործը դարձնի Կարմիր բանակի մասին հոգ տանելը:

Լենինի լավագույն ոգնականն ընկեր Ստալինն էր: Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն ընկեր Ստալինին մի ճակատից մյուսը, հեղափոխութեան համար ամենից ավելի վտանգավոր վայրերն էր ուղարկում:

Յեւ ամենուրեք, ուր հայտնվում էր ընկ. Ստալինը, թշնամիները պարտութիւն պարտութեան հետեւից էին կրում:


Ստալինի ղեկավարութեամբ Կարմիր բանակը Յարիցինի տակ Լախշախեց ատաման Կրասնովի բանդաներին:

«Հիշում եմ, ինչպես այժմ, 1918 թ. ոգոստոսի սկիզբը, — գրում է Վորոշիլովը, — Կրասնովյան կազակային զորամասերը հարձակվում են Յարիցինի վրա, աշխատելով կարմիր գնդերը շարտել Վոլգան: Որեւ շարունակ կարմիր զորքերը կոմունիստական դիվիզիայի գլխավորութեամբ, վորն ամբողջապես կազմված էր Դոնբասի բանվորներից, բացառիկ ուժով հետ են մղում հրաշալի կազմակերպված կազակային զորամասերին: Դրանք մեծագույն լարվածութեան որեւ էին:

Պետք էր տեսնել Ստալինին այդ ժամանակ: Ինչպես միշտ, հանգիստ, խորասուզված իր մտքերի մեջ, նա տառացիորեն ամբողջ որեւորվ չէր քնում, իր ամենալարված աշխատանքը բաժանելով մարտական դիրքերի և բանակի շտաբի միջև: Ծակատում գրութիւնը դառնում էր համարյա կատաստրոֆիկ: Կրասնովյան

զորմասերը լավ մտածված մանյովրայով նեղում էին մեր հյուսիս-ված, հակապական կորուստներ ունեցած զորքերին:

Հակառակորդի ճակատն որ ըստ որե ավելի ու ավելի յեր սեղմրվում: Մենք հետ քաշվելու ճանապարհներ չունեցինք: Բայց Ստալինն այդ մասին հոգ էլ չէր տանում: Նա կլանված էր միայն մի դիտակցութեամբ—հաղթել, ջախջախել թշնամուն ինչ կերպ ուղում է լինի: Յեւ Ստալինի այդ անխորտակելի կամքը համակում էր նրա բոլոր մերձավոր զինակիցներին և չնայած համար-



Նկ. 16. Վորոշիլովը նավաստիների շքանում

յա անեղանելի դրութեան, վոչ վոք չէր տարակուսում հաղթանակի մասին»:

— Բուլչեիկյան առաջնորդ, — ասում էին ընկ. Ստալինի մասին կարմիր բանակայիններն ու բանվորները:

Ստալինի անունն ամենից ավելի անարկուն էր մեր թշնամիներին համար: Իսկ կարմիր բանակայիններն այդ անունը սիրով և խանդավառութեամբ էին արտասանում:

Վորոշիլովին բանակն իրեն հարազատն էր համարում:

Վորոշիլովի հետ չես կորչի, — այսպես եր բոլոր մարտիկները մտերմական ընդհանուր կարծիքը:

Այդ պողպատյա մարդու համառությունն ու անձնուրաց քաջութիւնը միշտ ել փայլուն հաղթանակներ են բերել վորոշիլովցիներին՝ սպիտակ բանակների դեմ մղվող մարտերում: Բազմաթիւ ևն Կարմիր բանակի առաջնորդ ընկ. Վորոշիլովի հերոսութիւնները: Ահա դրանցից մեկը:

Սպիտակները կատաղորեն վրա եյին քալիս: Վորոշիլովն էլ սովորութեան համաձայն քաղաքում չեղ նստում: Գիշերները հրամաններ տալով, նա արշալույսին ճակատ եր դնում, վորպեսզի սուղի հրամանների կատարումը: Ցարիցինից մի քանի կիլոմետր հեռու, Վարապանովո կայարանում, կեսօրին, շտաբի վագոնի մի անկյունում նա ընկել եր սեղանի յերեսին փոված քարտեզի վրա: Պատուհանից յերևում եյին Իոնից յեկած փախստականները և վիրավորվածների եշելոնները:

Հանկարծ վագոնների կողմից վայրենի և կցկտուր աղաղակ լսվեց:

— Կազակներ, — սուր և տաղնապալից ճչում եր մեկը: Յեւ մի րոպեյում ապրանքային վագոններից լաց ու կոծով դուրս թափվեցին փախստականների կիսամերկ յերեսները, կանայքը, ծերունիները: Հենց նոր բերած վիրավորները տնքալով և հառաչելով իրենց արնաշաղախ ձեռքերով վագոնների դռներից սահում եյին ցած ու թափվում ավազի վրա: Նրանցից վոմանք բազուկներով իրենց մարմնին սեղմելով հրացանները, աշխատում եյին առամներով բաց անել փակաղակները:

Վորոշիլովն ու նրա հետ յեղողները մի րոպեյում վագոնից դուրս թռան, նայելով այն կողմ, ուր նայում եր փախչող ամբոխը:

Վորոշիլովը հանգստութեամբ իր ուսից հանեց կարաբինը և խստութեամբ ընկերներին գլխով արեց ուղիղ դեպի հարավ: Իսկ այնտեղից կատաղի թափով իրենց վրա յեր գալիս հակառակորդի հեծելազորը:

Հակառակորդին դիմադրելու համար կայարանում ուժ չկար: Հեծելազորը հինգ րոպեյից հետո կայարան կհասնի և բոլորին կկոտորի:

— Չեր ձին լավն ե, Կլիմենտի Յեֆրիմովիչ, — հետևից ա-

այն մեկը սիրալիր տոնով, — շուտ նստեցեք, թերևս դուք ազատվեք:

Վորոշիլովը արագ ու արհամարհական հայացք դրեց խորհրդատուի վրա: Յեւ այդ ժամանակ նա հանկարծ հենց ադատեղ, կայարանի շենքի պատի մոտ ընկած, մի գնդացի տեսավ, վորը հավանորեն բերված եր շենքի պաշտպանութեան համար, սակայն խուճապի ժամանակ անտեր եր թողնված:

Վորոշիլովն արագ նետվեց դեպի գնդացիը և այն քաշեց շենքի մոտ առվի մեջ: Նա փողն ուղղեց հակառակորդի կողմը, մի րոպեյում ժապավենը հագցրեց, նշան բռնեց — և գնդացրային կրակի կատաղի դղրդոցն արձագանք տվեց մարդկանց թողած դատարկ վագոնների շարանում: Ամենքը նետվեցին ոգնելու Վորոշիլովին: Կարմիր բանակայինները ինչ վոր տեղից քաշ են տալիս յերկրորդ գնդացիը:

Սակայն ել կարիք չկար ոգնելու: Գնդացրային կրակը ջախջախեւ, ցրել եր թշնամու հեծելակիներին: Սուճապի մատնված ցան ու ցիբ փախչում եյին նրանք դեպի մտախլապատ տափաստաններն՝ առանց հետ նայելու:

#### § 71. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Քաղաքացիական պատերազմը վերջնականապես քայքայից առանց այն ել չափազանց հետամնաց արդյունարեւությունն ու գյուղատնտեսութիւնը: Հսկայական յերկիւրն ավերակների յեր վերածված: Ցարիկներն ու գործարանները կանգ եյին առել: Գյուղացիական արտերը չեյին ցանվում: Յերկաթուղիները նման եյին քայքայված և անպետքացած վագոնների ու շոգեմեքենաների գերեզմանոցի: Հանքահորերը լցված եյին ջրով:

Մյուս կողմից ել սոսկալի անբերրութիւնը սովի մատնեց մի շարք շրջաններ: Հազարավոր և տասնյակ հազարավոր տղամարդիկ, կանայք և յերեսներ մեռնում եյին դանդաղ և տանջալի մահով: Բժշակոր տիֆն ու խոլերան նույնպես հնձում եյին:

Յեւ կուսակցութիւնը, հաղթելով կալվածատերերին ու կապիտալիստներին, իր ուժերը նվիրում ե քայքայված ժողովրդական տնտեսութեան վերականգնմանը:

Կոմունիստներն այստեղ ել առաջին շարքերումն են դտնվում: Կուսակցութիւնն այստեղ ել իր հետևից տարավ բանվորներին, գյուղացիներին և բոլոր աշխատավորներին, պայքարելու համար քայքայման ու սովի դեմ:

Յեւ ծխացին Փարբիկները: Դղրգացին զործարանները: Արազությամբ նորոգվեցին հին մեքենաները, Ֆարբիկների ու գործարանների շենքերը: Նոր մեքենաներ գործադրութեան դրվեցին: Վերակենդանացան հանքերն ու հանքահորերը: Վառելանյութ, նավթ ու քարածուխ յերևաց: Կարգի բերվեցին վալոններն ու շոգեմեքենաները, կամուրջներն ու յերկաթգծերը, աշխատեց տրանսպորտը: Յեռաց յերկրի տնտեսական կյանքը:

Մենք արդեն վաղուց վերականգնել ենք իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների պատճառով քայքայված արդյունաբերութեանն ու գյուղատնտեսութեանը: Բազմաթիվ նոր գործարաններ ու Փարբիկներ են կառուցված մեր յերկրում: Գիգանտներն իրար հետևից բարձրանում են խորհրդային յերկրի անսահման տարածութեան վրա: Յերբեք վոչ մի կապիտալիստական յերկիր այնպես չի աճել, ինչպես աճում է խորհուրդների յերկիրը:

Մեր գյուղատնտեսութեանն այժմ այն չի, ինչ վոր եր: Միլիոնավոր մանր գյուղացիական տնտեսութեանների փոխարեն կազմակերպված են 200 հազար կոլտնտեսութեաններ և 5 հազար խորհանտեսութեաններ:

Կոմունիստական կուսակցութեանը ղեկավարում է բանվորների և գյուղացիների աշխատանքը նոր և լավագույն կյանքի: Ինարարութեան գործում: Նա մարտական շտաբ է, վորը գործողութեան ընդհանուր ծրագիր է գծում մեր յերկրի բոլոր աշխատավորների համար:

Կուսակցութեանը միշտ և ամեն տեղ մասսաների հետ է: Կոմունիստները լավագույն հարվածայիններն են ու բանվորների և բոլոր աշխատավորների սոցմըցակցութեան կազմակերպիչները:

Կուսակցութեանը պահանջում է, վորպեսզի յուրաքանչյուր կոմունիստ վոչ միայն պայքարի կուսակցութեան ընդհանուր նպատակների համար, այլև լինի առաջավոր, իր հետևից տանի բոլոր աշխատավորներին:

Թե քաղաքում և թե գյուղում վորևե ձեռնարկութեան, հիմնարկի մեջ աշխատող բոլոր կուսանդամներն ու թեկնածուները մտնում են կուսակցութեան նույն բջիջի մեջ:

Գործարաններում, Փարբիկներում, կոլտնտեսութեաններում և խորհանտեսութեաններում կուսակցութեան բջիջները կազմակերպում են բանվորներին, կոլտնտեսականներին, գյուղացիներին և ղեկավարում են այդ ձեռնարկութեանների աշխատանքը:

Մեր յերկրում ամբողջ շինարարութեանը ղեկավարում է Համամիութենական Կոմունիստական (բուլշևիկների) Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն (Համ Կ(բ)Կ Կենտկոմը), վորն ընտրվում է մեր կուսակցութեան համամիութենական համագումարում:

Համ Կ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղարը Կոմունիստական կուսակցութեան և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ՝ ընկ. Ստալինն է:

### ԿՐԿՆ ՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

1. Կապիտալիստներն ու կալվածատերերն ի՞նչ սկսեցին քաղաքացիական պատերազմը:
2. Ինչո՞ւ ստարեկրյա բուրժուազիան ոգնեց ուսական կապիտալիստներին ու կալվածատերերին:
3. Բոնվորներն ո՞ւմ հետ դաշնակցած և ո՞ւմ ղեկավարութեամբ դուրս յեկան հակահղափոխականների դեմ:
4. Վճիռ թվին ու ամսին հրատարակվեց կարմիր բանակ կազմակերպելու գեկրեաբը:
5. 1918 թվին ինչ բանակներ հորձակում գործեցին Խորհրդային Ռուսաստանի վրա, և ինչ բանակներ՝ 1919 ու 1920 թվերին:
6. Կուսակցութեանն ի՞նչ պահանջներ և ղեկավարում մեր յերկրի վիթխարի շինարարութեանը:

### VIII. ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

#### § 72. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՅ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Կոմունիստական յերիտասարդական միութեանը կազմակերպվել է 1918 թվին հոկտեմբերին՝ իր առաջին համագումարում: Համագումարը միաձայն վորոշեց, վոր Միութեանը կաշխատի ու կպայքարի Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ, վորոշվեց Միութեանը կոչել Կոմունիստական Յերիտասարդութեան Միութեան (ԿՅԵՄ)<sup>1)</sup>:

Արձագանքելով բանվորների և գյուղացիների առաջնորդ ընկ. Լենինի այն կոչին, թե սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է, համագումարը միաձայն վորոշեց մորբիլիցայիայի յենթարկել Միութեան մեկ յերրորդ մասը և ճակատ ուղարկել:

Համագումարը վերջում պատվիրակութեան ընտրեց Լենինի մոտ ուղարկելու համար: Պատվիրակութեանը պետք է Լենինին

<sup>1)</sup> Միութեանը Լենինյան կոչվեց 1924 թվին, Լենինի մահվանից հետո:

հարսներ, վոր ծնվել է փառապանծ բուշլեիկյան—կոմունիստական կուսակցութեան փոքր յեղբայրը—կոմյերիտմիութիւնը:

Յերբ մենք մտանք Իլլիչի առանձնասենյակը,—պատմում է պատվիրակութեան անդամներից մեկը, նա մեզ կանգնած դիմա-վորեց և ամենքիս ձեռքը սեղմեց:

Մենք հուզմունքից շփոթվեցինք: Լենինն ինքն սկսեց մեզ հարցեր տալ: Մենք նրան ասացինք, վոր համագումարը վորոշել է Մեր Միութիւնը կոմունիստական անվանել:

Լենինը ժպտալով նկատեց—

Խնդիրը անվան մեջ չէ:

Նրա հայացքն ընկավ մեր պատվիրակութեան մեջ միակ աղ-ջըկա վրա:

Քանի՞ աղջիկ էր մասնակցում ձեր համագումարին, — հարց-րեց Լենինը:

— Ութը հոգի, — մեջտեղ ընկավ Բեդիմենսկին, թե մեզ և թե

Լենինին ընդհանուր ընկերական ծիծաղ պատճառելով:

Զրույցի վերջում Լենինն առաջարկեց ցանկացած ժամանակ դիմել իր ողնութեանը:

Հետո Իլլիչը նստեց իր գրասեղանի առաջ և մի քանի բառ գրեց ընկ. Սվեբլովին, խնդրելով մեզ «առավելագույն» նյութա-կան ողնութիւն ցույց տալ կուսակցութեան միջոցներից:

Լենինի այդ յերկտողը մեր Կենտրոնական Կոմիտեյին 10 հա-զար ուրբի բերեց:

Մենք բաժանվեցինք Իլլիչից, այնպէս պարզ, սրտալի, վո-ղեւորված, զգալով, վոր նա կոմյերիտմիութեան լավ բարեկամն է ու վստահելի ղեկավարը:

Այսպէս, Հոկտեմբերի առաջին տարեդարձի նախորդակին յե-րիտասարգական հեղափոխական շարժումը Ռուսաստանում միա-ցավ կոմյերիտմիութեան դրոշի տակ:

§ 73. ԼԵՆԻՆԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1920 թվին, կոմյերիտմիութեան յերրորդ համագումարում, վլադիմիր Իլլիչ Լենինը զեկուցեց կոմյերիտմիութեան խնդիրների մասին:

Լենինն ասաց, վոր կոմյերիտականի առաջին պարտականու-թիւնն է՝ սովորել, սովորել և սովորել:

Լենինն ասում էր, վոր կուսակցութեան արժանավոր հաջորդը

և նոր հասարակութեան կառուցող կարելի չէ լինել միայն այն ժա-մանակ, յերբ շատ բան իմանաս, շատ բան սովորես: Հարկավոր է պայքարել լավ սովորելու համար: Գիրքը պետք է կոմյերիտա-կանի լավագույն ընկերը լինի:

Սակայն քիչ է միայն գրքերով սովորելը: Կոմունիստ դառ-նալու համար պետք է կարողանալ գիտութիւնը միացնել բանվոր դասակարգի պայքարին ու աշխատանքին:

«Յերիտասարգութեան Կոմունիստական Միութիւնը պետք է հարվածային խումբ լինի, վորը յուրաքանչյուր աշխատանքում պետք է իր ողնութիւնը ցույց տա, իր նախաձեռնութիւնը հան-դես բերի», — ասում էր Լենինը:

Իրենց Փարբիկում, գործարանում, խորհանտեսութեան մեջ, կոլտնտեսութիւնում, յուրաքանչյուր նույնիսկ ամենափոքրիկ հասարակական գործում կոմյերիտականը պետք է առաջավոր լի-նի, վորպեսզի նա իսկապէս լավ լենինյան լինի:

Կոմյերիտմիութիւնը պետք է պայքարի բանվորների ու զյուզացիների բոլոր թշնամիների դեմ, վորոնք խանգարում են մեր յերկրում ոսցիալիստական հասարակութիւն կառուցելուն:

§ 74. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՈՄՎՆԵՐԻ ՀՐԴԵՀՈՒՄ

Առաջին համագումարից հետո կոմյերիտմիութիւնն իր ամ-բողջ ուշադրութիւնը նվիրեց Խորհուրդների յերկիրը՝ նրա վրա հարձակվող թշնամիներից պաշտպանելու գործին:

Մորիլիզացիայի մասին յեղած վորոշումը մի քանի որում իրադրծվեց: Միութիւնը 10 հազար կոմյերիտական ուղարկեց ճակատ: Շատերը կամավոր կերպով եյին ճակատ դնում: Հազվա-գյուտ չեյին այնպիսի դեպքերը, յերբ ամբողջ բջիջը ճակատ եր դնում, իր դռները վրա թողնելով այսպիսի գրութիւն: —

ՌԿՅԵՄ ԲԻԺՅՐ չի աշխատում—բոլորն էլ  
նսկաս են գնացել.

Զկար մի այնպիսի ճակատ ու բանակ, վորտեղ չմարտնչեյին չընկնեյին հերոսական մահով ու չհաղթեյին կոմյերիտականները: Քաղաքացիական պատերազմի տարիներին Կարմիր բանակի շար-



գերում 75 հազար կոմյերիտական և յեղեկ: Կոմյերիտության սպամության մեջ բազմաթիվ հերոսական հաղթանակներ կան գրված:

Կոմյերիտության VIII համագումարին մասնակցում էր կոմյերիտական Նիժնյակը, վորը Կարմիր դրոշի յերեք շքանշան ուներ, վորոնք նա ստացել էր քաղաքացիական կռիվները ժամանակ: Ընկ. Նիժնյակն Ի՞նչի համար էր ստացել այդ յերեք շքանշանները:

Գերմանացիները գրավել էին Ուկրաինան: 16 տարեկան ընկ. Նիժնյակը գերմանացիները դեմ պայքարելու համար ապստամբական ջոկատ և կազմակերպում: Նա չվախեցավ, յերբ յերիտապարզ կազմակերպչի հաջողութուններից վրդովված գերմանացիները յեկան նրա հայրենի գյուղը, ծերունի հոր մոտ և այրեցին նրա տունը: Յեռապատիկ յեռանդով նա ջահելներին հավաքում է իր ջոկատում: 1918 թվին, յերբ կարմիր զորքերը մոտենում էին, Նիժնյակը մի խումբ քաջերով— միայն մեկ ապստամբական վաշտով գրավեց Պավլոգրադ քաղաքը և զինաթափեց 500 գերմանացիներին:

Յեկան կարմիրները: Նիժնյակն ապստամբների վաշտը հանձնեց կարմիրներին: Նա չեր ուզում վաշտի գլուխը մնալ այն որից ի վեր, յերբ առաջին անգամ տեսավ «մահ կամ հաղթանակ» գրահապատը:

Նիժնյակն անցավ գրահապատի վրա: Յեվ Սինելնիկովո կայարանում, ուր համառ մարտեր էին տեղի ունենում պետլյուրական զորամասերի հետ, նա թշնամուն խարելու համար սպիտակ դրոշ բարձրացրեց: Իսկ յերբ գրահապատը մոտեցավ Պետլյուրականները գրաված կայարանին, Նիժնյակը կարգադրեց կրակ բաց անել: 300 պետլյուրականներ ընկան, մնացածները փախան: Կայարանը գրավվեց:

Սակայն պետլյուրականներն ամբացան Ֆաստովի ուսյոնում: Համառ մարտերը տևեցին յերկու շաբաթ: Պետլյուրի գրահապատներն ամեն որ մոտենում էին կարմիր զորամասերին: Նիժնյակը վորոշեց գրավել Պետլյուրի «ատաման Սիմոն Պետլյուրա» անունը կրող գրահապատը:

Չորս խիզախ՝ Նիժնյակի գլխավորությամբ, ումբեր վերցնելով թողին իրենց գրահապատը: Իսկ յերեկոյան իրենց ընկերների մոտ վերադարձան թշնամու «Սիմոն Պետլյուրա» գրահապատի վրա նստած:

Ի՞նչպես գրավեցին գրահապատը:

«Սիմոն Պետլյուրան» կրակ բաց արեց մեր ձիավոր հետախույզների վրա, վորոնք թաղնվել էին յերկաթգծի մոտ, թումբի հետևում գանդող խիա թիուտներում: Նիզախներն այդտեղից դուրս թոան, վագեցին թշնամու գրահապատի մոտ և նրա բաց անցքերից մի քանի ումբ նետեցին: Նրանք կոտորեցին գրահապատի զինվորների մեծ մասին և գրավեցին գրահապատը: «Սիմոն Պետլյուրան» հաղթվեց:

Կոմյերիտականները վոչ միայն հերոսաբար կռվում էին, այլև հերոսաբար մեռնում: Հատկապես մեծ հերոսություն ցույց տվին Դենիկինի թիկունքում գաղտնի աշխատող կոմյերիտականները:

1920 թվի հունվարի 6-ին Դենիկինի վոստիկաններն Ողեսայում սպանեցին 9 կոմյերիտականների, վորոնք դատապարտվել էին ընդհատակյա աշխատանքի համար: Ականատեսներն այսպես են պատմում այդ անսկուն յերիտասարդ կոմունարների մահվան մասին:

Դադանացած սպիտակ-գվարդիականների պատճառած բոլոր տանջանքները վոչ մի արդյունք չտվին: Կոմյերիտականները զբաղում էին իրենց կրճեցից պոկվող աղաղակները և բոլոր հարցերին լուծթյամբ էին պատասխանում: Նրանք բոլորն էլ մահվան դատապարտվեցին:

Հունվարի 5-ի յերեկոյան նրանց պետք է զնդակահարելին: Սակայն պահակները— թե առաջինը և թե յերկրորդը— հրաժարվեցին նրանց գնդակահարության տանելու: Յերկուշաբթի, հունվարի 6-ին, նրանց տանելու համար յեկան մի քանի սպիտակ-գվարդիական սպաներ: Նրանք ծեծեցին կոմյերիտականներին գլխաղիական սպաներ: Նրանք ծեծեցին կոմյերիտականներին կորցնելու չափ: Հետո քաջեցին տարան նկուղ, գիտակցությունը կորցնելու չափ: Շատերը միանգամից չմեռան: Նրանց էլ հրացանների կոթերով էին սպանում:

9 ընկերները հետևյալ գրությունը թողին, վորը նրանց սպանության հաջորդ որը հրատարակվեց ընդհատակյա «Ողեսակի կոմունիստ» թերթում:

«1920 թվի հունվարի 4-ին մահվան դատապարտված 9 կոմունիստները հրաժեշտի վողջույն են ուղարկում ընկերներին:

Յանկաևում ենք, վոր հաջողությամբ շարունակեք մեր

կլինի հրացան վերցնել կամ թնդանոթի մոտենալ ու անձնվիրաբար պաշտպանելու համար սեփական սոցիալիստական հայրենիքը թշնամիների հարձակումներից :

Կոմյերիտմիությունը մեծ աշխատանք է կատարում յերկտա-  
օարդությանը և իր նոր սերունդին—պիոներներին դաստիարակե-  
լու գործում : Կոմյերիտմիությունը վերցրել է ընդհանուր պար-  
տադիր ուսման շեֆություն և պայքարում է դպրոցներում ուսու-  
մը լայլ հիմքերի վրա դնելու համար :

Կոմյերիտմիությունը կուսակցության լավագույն ոգնականն  
է : Կուսակցության հետ և նրա ղեկավարությամբ կոմյերիտմիու-  
թյունը հերոսական պայքար է մղել քաղաքացիական կռիվներում :  
Հիմա էլ կոմյերիտմիությունը կուսակցության հետ սոցիալիս-  
տական շինարարության հարվածայինների առաջին շարքերումն է :

**§ 76. ՅԵՐԻՏՍՍՍՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐ-  
ՆԱՅԻՈՆԱԼ (ԿԻՄ)**

Յերկրագնդի բոլոր յերկրներում ծածանվում է կոմյերիտ-  
միության գրոշը : Բոլոր յերկրներում աճում են կոմյերիտական  
կազմակերպությունների շարքերը :

Արասահմանյան կոմյերիտականները Կոմունիստական կու-  
սակցության ղեկավարությամբ լենինարար պայքարում են իրենց  
թշնամիները—կապիտալիստների դեմ :

Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալն ամ-  
բողջ աշխարհում կոմունիզմի համար պայքարող յերիտասարդու-  
թյան միությունն է :

Բուրժուազիան հեղափոխական յերիտասարդությանը բանտ է  
նստեցնում, սպանում ու աքսորում : Սակայն, չնայած այդ բո-  
լորին, կոմյերիտմիությունը չի թուլացնում իր պայքարը : ԿԻՄ-ը  
նորանոր յերիտասարդ բանվորների և յերիտասարդ դուռդաշինե-  
րի պատրաստում է կապիտալի դեմ պայքարելու համար :

Կիմը և նրա բոլոր կազմակերպությունները մեծ հող են տա-  
նում կրտսեր սերունդին—պիոներներին և հոկտեմբերիկների մասին :  
Նրա ղեկավարության տակ աճում ու ծավալվում է յերեխայների—  
պիոներների ու հոկտեմբերիկների—կոմունիստական շարժումն  
ամբողջ աշխարհում :

**ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

- 1. Վեր թվին կազմակերպվեց Կոմյերիտմիությունը :
- 2. Վերջոք են Կոմյերիտականի գլխավոր պարտականությունները :

- 3. Կոմյերիտմիությունն ինչ մասնակցություն է սնեցել Խորհուրդների  
լեյխանության համար մղվող պայքարում :
- 4. Կոմյերիտականներն ինչպես են մասնակցում Խորհրդային յերկրի շե-  
նարարության և նրա պաշտպանության ամրապնդման գործում :
- 5. Ի՞նչ բան է ԿԻՄ-ը :

**IX. ՊԻՈՆԵՐՆԵՐԸ**

**§ 77. ՈՎՔԵՐ ԵՆ ՊԻՈՆԵՐՆԵՐԸ**

Պիոներական առաջին ջոկատները Խորհրդային յերկրում յե-  
րեան յեկան 1922 թվին : Այդ ժամանակվանից պիոներական կազ-  
մակերպությունը տարեց-տարի աճում է : Իր տասնամյակին  
(1932 թվի մայիսին) նա հասել էր 6 միլիոն հոգու :

Պատանի պիոներներին Կոմունիստական կազմակերպություն-  
ները պրոլետարական յերեխաներին դաստիարակում, կոմունիստ  
են դարձնում : Պիոներական կազմակերպությունը միլիոնավոր յե-  
րեխաների յե դաստիարակել և իր հազարավոր պիոներներին հանձ-  
նել է կոմյերիտմիությանը :

Պիոներական կազմակերպությունը մեծ աշխատանք է կա-  
տարում կապիտալիստական յերկրներին կալանավորներին ոգնելու  
գործում : Նա ոգնում է կապիտալիստական յերկրների յերեխանե-  
րի կոմունիստական խմբակներին՝ պայքարելու իրենց թշնամիներ-  
ի դեմ :

Պիոներներն ոգնում են իրենց կրտսեր ընկերներին—հոկտեմ-  
բերիկների աշխատանքին :

Պատանի պիոներներին որենքներն ասում են —  
Պիոները հավատարիմ է բանվոր դասակարգի գործին և ԻՄԻՆԷՆ  
պատգամներին :

Պիոներն ամբողջ աշխարհի բանվորների, դուռդաշինների և  
բոլոր աշխատավորների յերեխաների հավատարիմ բարեկամն է ու  
ընկերը :

Պիոներն ուսման է ձգտում և ոգնում է մյուսներին՝ սովորելու  
համար :

Պիոները կոմունիստի և կոմյերիտականի կրտսեր յեզրայրն  
է ու ոգնականը կոմունիզմի համար մղվող պայքարում :

1924 թվի մայիսին, Կարմիր հրապարակում տեղի ունեցավ պիոներների զորատեսը: Յերեխաները հանդիսավոր խոստումն տվին:

Չորատեսն ու հանդիսավոր խոստումն ընդունեցին կառավարութան անդամները, մեր կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն և Մոսկվայի ու մյուս քաղաքների հաղարավոր աշխատավորները: Այդ օրը Մոսկվայի արտասովոր տեսք ուներ: Կարմիր հրապարակը մայիսյան արևի պայծառ ճառագայթների տակ վառվում ու փայլում էր հարյուր հաղարավոր կարմիր փողկապներով ու գրոշակներով: Հնչում էին փողերի ու թմբուկների ձայները:

Ահա նվազախումբը հուժկու թափով «Ինտերնացիոնալ» նվազեց: Լենինի դամբարանի վրա յերևաց Կոմյերիտի կոմիտեի Կենտրոնական Կոմիտեի քարտուղարը և հայտարարեց.—

— Ընկերներ, պատանի պիոներներ, Յերեխասարդուիտյան կոմունիստական միութեան Կենտրոնական անունից հայտարարում եմ, վոր պատանի պիոներներն այսօրվանից վերանվանվում են Վլադիմիր Իլյիչ Լենինի անվան պատանի պիոներների կոմունիստական յերիտասարդական խմբերի:

Ժամը չորսին Լենինի դամբարանի վրա յերևում է բոլշևիկ Ֆելիքս Կոնը.—

— Պատանի ընկերներ, ինձ, վորպես մեծահասակներից մեկի, հանձնարարվել է ղեկավարել ձեր հանդիսավոր խոստումը: Յեղեք պատրաստ այդ հանդիսավոր խոստումին:

— Մի՛շտ պատրաստ,—վորոտաց ամբողջ Կարմիր հրապարակը:

Ֆելիքս Կոնը, ծածանելով սպիտակ մաղկը, կարդում է հանդիսավոր խոստումը: Հաղարավոր պիոներները նրա հետ կրկնում են յուրաքանչյուր բառը:

Ահա արդեն արտասանված են վերջին խոսքերը: Ֆելիքս Կոնը նորից դիմում է հրապարակում սարածված վառ կարմիր փողկապավոր յերեխաների ծովին:

— Պատանի պիոներներ, հիշեցեք այս մեծ օրը, 1924 թվի մայիսի 23-ը, և միշտ պատրաստ յեղեք կատարելու ձեր տված խոստումը:

— Մի՛շտ պատրաստ,— նորից արձագանքում է ամբողջ Կարմիր հրապարակը:

Կոմյերիտականները պատրաստվում են կուսակցութեան արժանավոր անդամ դառնալու համար: Կոմյերիտի կոմիտենը՝ դա կուսակցութեան հերթափոխն է: Իսկ պիոներները կոմյերիտականների հերթափոխն են: Պիոներները պետք է շատ աշխատեն իրենց վրա, վորպեսզի դառնան գիտակից, կայուն և համարձակ:

Կուսակցութեանը բոլոր կոմյերիտականների և պիոներների առաջ խնդիր է դնում—սովորել, սովորել և սովորել: Յեզ կուսակցութեանը դպրոցներից պահանջում է, վորպեսզի նրանք ավելի շատ գիտելիք տան յերեխաներին: Կոմյերիտականներից և պիոներներից նա պահանջում է, վորպեսզի նրանք ավելի մեծ շահերով ձեռք բերեն այդ գիտելիքները, վորպեսզի նրանք թե իրենք սովորեն և թե ընկերներին ոգնեն սովորելու:

Պիոներները պետք է դպրոցում լավագույն աշակերտները լինեն: Նրանք պետք է կարգի բերեն ուսման գործը դպրոցում: Նրանք պետք է մասնակցեն դպրոցների բոլոր հասարակական կազմակերպութեաններում, ամեն բանում առաջինը լինեն և իրենց հետեից տանեն մյուս յերեխաներին:

Պիոներների առաջին համամիութենական հավաքին հին բոլշևիկ ընկ. Կադանովիչը ասաց.—

— Դուք կարմիր փողկապներ եք կրում: Հիշեցեք, վոր կարմիր փողկապը չքերթի ձե հետ: Ձեր կրճերին ծածանվող կարմիր փողկապները հաղեցված են հարյուրավոր և հազարավոր մարտիկների արյունով: Հաղարավոր մարտիկներ կախաղան են բարձրացվել, դնդակահարվել կարվածատերերի ու կապիտալիստների կողմից: Հաղարավոր մարտիկներ փոխել են ցարական բանտերում: Յեզ յերբ հեղափոխականներին կախաղանների մոտ էլին տանում, ասում էլին,—ահ հերթական փողկապը ձեր վզին:

Սակայն մենք տապալեցինք մեզ կեղեքողներին: Յեզ ընկած մարտիկների փոխարեն աճել ու աճում են մեր միլիոնավոր յերեխաները, կոմունիզմի գործի մարտիկները: Պատվով կրեցեք այդ կարմիր փողկապները: Մամուր պահեցեք ձեր ձեռքերում կոմունիզմի կարմիր դրոշմը:

Ձեր յետանկյունանի կարմիր փողկապները պատկերացնում են յերեք սերունդների կապը: Յեա ձեզ վողջունում եմ ավազ սերնդի կողմից, կոմունարների կողմից, բոլշևիկյան կուսակցութեան կողմից:

Հիշեցեք, վոր ձեր կարմիր փողկապը—յերեք սերունդների կապի խորհրդանիշը—պարտալորեցնում է ձեզ, յերիտասարդ պիտաներնեղ, պայքարել մեր պրոլետարական կոմունիստական կուսակցութեան մեծ դործի համար:

Ձեզանից յուրաքանչյուրը պետք է հարցնի իրենից —պատրաստ ե ինքը գոհոգութեան, տանջանքի ու զրկանքի՝ պրոլետարական պայքարի դործի համար, կոմունիզմի դործի համար:

Հիշեցեք, վոր մեր թշնամիները գինքերը դամ չեն դրել: Կուլակները մեր յերկրի ներսում և կապիտալիստներն արտասահմանում խորապես առում են մեզ և պայքարում են մեր դեմ: Կապիտալիստները յուրաքանչյուր րոպե պատրաստ են հարձակվելու մեզ վրա:

Ընկերներ, պատանի պիտաներ, պատրաստ յեղեք պաշտպանելու խորհրդային սոցիալիստական հանրապետութեանը:

Պատրաստ յեղե՛ք ձեր ամբողջ ուժերը նվիրելու մեր յերկրում նոր կյանքի շինարարութեան մեծ դործին:

Պատրաստ յեղե՛ք պայքարելու կոմունիզմի համար, կոմունիստական հասարակարգի համար:

Պատրաստ յեղե՛ք պայքարելու ամբողջ կեղեքված մարդկութեանն ազատագրելու համար:

### ԿՐԿԵՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Յերբ առջ յեկա՞յ պիտաներական կազմակերպութեանը Խորհրդային Միութեան մեջ:
2. Ո՞վ և գեկավարում պիտաներներին:
3. Պիտաները վճար թվին կոչվեցին պատանի լենինյաններ:
4. Պիտաներներին ինչ բանի համար պայքարելու կոչ է անում ընկ. Գազանովիչը:

## X. ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂՊԱՅԲԱՐԸ ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐԿԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆ Ե

### § 80. ԿԱՐԼ ՄԱՐԻՍԸ ՅԵՎ ՅՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍԸ

Առաջինը կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Ենգելսը հիմնեցին այն ուսմունքը, վորով աշխատավորները պետք է ազատագրվեն շահագործողների լծից և սոցիալիստական հասարակութեան կառուցեն:

Մարքսն ու Ենգելսն իրենց ամբողջ կյանքը նվիրեցին բանվոր սակարգի դործին: Մարքսը պատանեկական հասակից սկսեց պատասխան փնտռել այն հարցին, թե՛

ինչն՞ու աղքատութեանն ու տանջանքին այսօր շատ են:

Ինչն՞ու ֆարքիկներն ու գործարանները պատկանում են մի խումբ կապիտալիստներին, իսկ միլիոնավոր բանվորները վաճիճ չաւեն և սոված ու քաղցած ապրելով՝ աշխատում են տերերի համար:

Յե՛վ Մարքսն իր ընկերոջ ու զինակցի՝ Ենգելսի հետ սկսում է անխոնջ պայքարել բանվոր դասակարգի դործի համար:

Մարքսն աշխատում էր արթնացնել բանվորների գիտակցութեանը, վորպեսզի նրանք հասկանային բուրժուական կարգերի թալանչիական էությունը: Նա սովորեցնում էր, թե բոլոր բանվորները—և՛ սուսները, և՛ հրեյանները, և՛ նեգրերը, և՛ ճապոնացիները, և՛ չինացիները, և՛ գերմանացիները, և՛ Ֆրանսիացիները, բոլոր նրանք, ովքեր աշխատում են ու չարչարվում—յեղբայրներ են: Իսկ բոլոր բանվորների, բոլոր աշխատողների թշնամիները կապիտալիստներն են, կալվածատերերը, կուլակները և մյուս շահագործողները:

Մարքսը սովորեցնում էր, վոր բոլոր ֆարքիկներն ու գործարանները, բոլոր բանկերն ու յերկաթուղիները, ամբողջ հողը պետք է պատկանեն նրանց, ովքեր աշխատում են:

Մարքսը սովորեցնում էր, վոր պրոլետարիատը հաղթանակ կտանի միայն ու միայն գենքը ձեռքին իշխանութեանը գրավելով:

Մարքսը սովորեցնում էր, վոր բանվորներին անհրաժեշտ է ունենալ իրենց կուսակցութեանը, վորպեսզի ղեկավարեն բանվորների պայքարն իշխանութեան համար, սոցիալիստական հասարակութեան համար:

Ի՞նչ բան է այդ սոցիալիստական հասարակութեանը: Ի՞նչպե՞ս կլինի բանվորների կյանքը, յերբ այդ նպատակն իրագործվի:

Սոցիալիզմի ժամանակ շահագործողներ և շահագործվողներ չեն լինի, մարդը մարդան չի շահագործի:

Այդ հասարակութեան ամբողջ անտեսութեանը մի ընդհանուր ծրագիր կունենա: Աշխատավորները կաշխատեն իրենց համար, ամբողջ հասարակութեան համար, և վոչ թե ձրիակերներին— սեփականատերերի համար, ինչպե՞ս կապիտալիզմի ժամանակ: Աշխատանքն այլևս ստրկական չի լինի:

Գիտութեան և տեխնիկայի նվաճումներն ամբողջ հասարակու-  
թեան սեփականութեանը կը խնայեն: Մեքենաներն ու գիտութեանը  
մարդկանց աշխատանքն ավելի ու ավելի հեռաբերելու և հեշտ  
կգարձնեն:

Կվեբեկն առողջութեան անհավասարութեանը: Տնտեսագետ  
և կուլտուրագետ հետազոտողներն արագութեամբ կհաս-  
նեն առաջավորներին:

Մարքսն ու Ենդելսը հեղափոխական աշխատանք ելին կատա-  
րում առաջավոր բանվորներին մեջ: Նրանք հեղափոխական խմբակ-  
ներ ելին կազմակերպելու և բանվորներին բացատրում ելին երկնց  
ուսմունքը:

1847 թվին Մարքսն ու Ենդելսը կազմակերպեցին առաջին  
միջազգային բանվորական կուսակցութեանը—«Կոմունիստների  
Միութեանը»: Նրանք գրեցին հռչակավոր «Կոմունիստական մա-  
նիֆեստը», վորով ցույց ելին տալիս պրոլետարիատի նպատակ-  
ներն ու պայքարի ուղիները:

1864 թվին Մարքսը կազմակերպեց «Բանվորների միջազգային  
ընկերութեան» կամ I Ինտերնացիոնալը, և դարձավ նրա առաջ-  
նորդը:

Բոլոր յերկրների բուրժուազիան հարածում եր Մարքսին: Նա  
իր բնառները հետ բազմաթիվ անգամներ արտաքսելու և այլ և այլ  
յերկրներից: Սակայն մոտ հարածանքները, վոչ քաղցն ու կարիքը  
չվհատեցրին մեծ առաջնորդին: Մարքսն ավելի ու ավելի ահարկու  
թշնամի յեր գառնում բուրժուազիայի համար: Բուրժուազիան  
վախենում եր Մարքսի հողմանքներից ու յելույթներից, վորոնցով  
նա պրոլետարիատին կոչ եր անում կազմակերպված ու անխոնջ  
կերպով պայքարելու կապիտալիստների դեմ:

Մարքսն ու Ենդելսը իրենց ամբողջ կյանքը ավին հեղափոխա-  
կան պայքարին:

§ 81. ՄԱՐՔՍԻ-ԵՆԳԵԼՍԻ-ԼԵՆԻՆԻ-ՍՏԱԼԻՆԻ ԳՈՐԾԸ ԿԶԱՂ-  
ԹԱՆԱԿԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Վլադիմիր Իլիչ Լենինը շարունակեց Մարքսի և Ենդելսի  
ուսմունքը: Լենինն իր ամբողջ կյանքի ընթացքում պայքարեց  
թշնամիների դեմ, վորոնք ցանկանում ելին աղավաղել Մարքսի-  
Ենդելսի ուսմունքն ու այն անվտանգ դարձնել բուրժուազիայի  
համար:

Լենինն ստեղծեց բուլժուազիան Կոմունիստական կուսակցու-  
թեանը, վորի ղեկավարութեամբ Ռուսաստանի բանվոր դասա-  
կարգը հաղթանակեց 1917 թվի հոկտեմբերին, տապալելով կա-  
պիտալիստական իրավակարգը: Բանվոր դասակարգը չքավոր  
գյուղացիութեան հետ դաշնակցած տապալեց կապիտալիստների  
իշխանութեանը և հաստատեց իր բանվորական իշխանութեանը—  
խորհուրդների իշխանութեանը:

Լենինը շատ բան արեց խորհուրդների իշխանութեան ամ-  
բազմաման համար: Նա շատ բան արեց բանվորների և գյուղացի-  
ների ամուր գաշինք ստեղծելու համար:

Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ, գլխա-  
վորութեամբ Լենինի, մեր յերկրի բանվորներն ու գյուղացիներն  
սկսեցին սոցիալիստական նոր հասարակութեան կառուցելու:

Լենինը կազմակերպեց Կոմունիստական Ինտերնացիոնալը,  
վորի գերջի տակ համախմբեց ամբողջ աշխարհի աշխատավորու-  
թեան հեղափոխական ուժերը:

Լենինը մեռավ, սակայն նրա սկսած գործը շարունակում և  
Լենինի լավագույն աշակերտն ու ղինակից ընկ. Ստալինը: Ստալի-  
նը շարունակում և Մարքսի-Ենդելսի-Լենինի ուսմունքը: Նրա  
ղեկավարութեամբ մեր Կոմունիստական կուսակցութեանը ԽՍՀ  
Մ-ում գործնականում իրագործում և Մարքսի-Ենդելսի-Լենինի  
ուսմունքը: Նա մեր յերկրի բանվոր դասակարգին և աշխատավոր  
գյուղացիութեանն առաջնորդում և ղեկավարում պայքար սոցիալիզմի հա-  
մար և տանում և հաղթանակ-հաղթանակների հետևից:

ԽՍՀՄ աշխատավորները հաջողութեամբ կատարեցին առաջին  
հնգամյակը:

Մեր հաղթանակները սոցիալիզմի շինարարութեան ճակատում  
ապացուցում են Մարքսի-Ենդելսի-Լենինի-Ստալինի ուսմունքի  
ճշտութեանը: Մեր հաջողութեաններն օրինակ են ցույց տալիս  
ամբողջ աշխարհի աշխատավորներին, թե ինչպես պետք և պայ-  
քարել թշնամիներին—կապիտալիստների դեմ:

Բոլոր յերկրներում կոմունիստական կուսակցութեանները  
դրոշների տակ աշխատավորութեան նորանոր մասսաներ են հա-  
մարում: Ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցութեան-  
ները բանվորներին պատրաստում են իշխանութեան իրենց ձեռ-  
քը դրավելու համար:

Ընկեր Ստալինը առաջնորդն և Կոմունիստական Ինտերնացիո-

նալի, վորը ղեկավարում է ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի և աշխատավորութեան պայքարը:

Մոտենում է այն ժամանակը, յերբ բոլոր յերկրները աշխատավորները կտապալեն բուրժուազիայի իշխանութիւնը և ձեռք կբերեն իրենց ազատութիւնը:

Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի դործը կհաղթանակի ամբողջ աշխարհում:

**ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀՄՐՑԵՐ**

1. Ի՞նչ էլին սովորեցնում Մարքսն ու Ենգելսը:
2. Ո՞վ շարունակեց Մարքսի—Ենգելսի ուսմունքը:
3. Ո՞վ է շարունակում Մարքսի—Ենգելսի—Լենինի ուսմունքը:



**Ց Ա Ն Կ**

|                                                                                            | ԵԶ  |
|--------------------------------------------------------------------------------------------|-----|
| Ռուսական հրատարակչության կողմից . . . . .                                                  | 3   |
| I, III և IV մասերի բովանդակությունն ըստ գլուխների . . . . .                                | 4   |
| Հրատարակչության կողմից . . . . .                                                           | 6   |
| Ինչո՞ւ պետք է իմանանք մեր անցյալը . . . . .                                                | 7   |
| I Աշխատավորության դրույթունը հորտատիրության ժամանակ . . . . .                              | 9   |
| II Գյուղացիների պայքարը կալվածատերերի դեմ . . . . .                                        | 19  |
| III ձորատիրության վերացումը . . . . .                                                      | 29  |
| IV Բանվորների և գյուղացիների պայքարը մինչև 1905 թ. . . . .                                 | 36  |
| V 1905 թ-վի հեղափոխությունը . . . . .                                                      | 58  |
| VI Հոկտեմբերյան հեղափոխությունը . . . . .                                                  | 79  |
| VII Կոմունիստական կուսակցությունը խորհուրդների իշխանության համար մղված պայքարում . . . . . | 103 |
| VIII Լենինյան կոմյերիտիությունը . . . . .                                                  | 123 |
| IX Պիոներները . . . . .                                                                    | 131 |
| X Սոցիալիզմի համար մղվող պայքարը ամբողջ աշխարհի աշխատավորության գործն է . . . . .          | 134 |



«Ազգային գրադարան»



NL0194621

ԳԻՆԸ Ի ՈՒՆ ԿՈՊ.



М. Овсянников, Б. Левитан, С. Ушаков, А. Александров

**ОБЩЕСТВОВЕДЕНИЕ**

У ч е б н и к

для начальной и средней школы

Часть I

Госиздат ССР Армении, Эривань, 1933